2000—2000 վ.—20 կ.
3000—4000 վ.—30 կ.
4000 վ. աւելի—35 կ.

Գնահատւած ծանրոցների վերայ պէտք է գրել արժէքը «цѣнная посылка на столко руб.» և մանրամասն հասցէն։ Իւրաքանչիւր

ծանրոցի հետ պէտք է ներկայացնել նրա համար յատկացրած առանձին բլանկը, որը сопроводительный листъ է կոչւում, վերան մանրամասն հացէն գրւած։ Այս բլանկների վրայ է կպցւում ծանրոցների համար որոշած տուրքի մարկաները։

Արտասահման ուղարկւող ծանրոցները 5 կիլոգրամ (12 ֆ. 6½ լոտից) աւելի քաշ չը-պէտք է ունենան. ծանրոցի մեծութիւնը բոլոր կողմերից 12½ վերշոկից երկար չպէտք է լինի, իսկ գնահատութիւնը 187 ր. 50 կոպ. ոչ աւելի (500 ֆրանկ)։ Վերոյիշեալ չափի համեմատ ծանրոցների համար ուղարկելու վճար վերցնում են մինչև Գերմանիա և Աւստրիա 70 կոպ., 90 կ. մինչև Ֆրանսիա։ Ապահովութեան տուրք առնում են առաջին երկրների համար խւրաքանչիւր 112 ր. 50 կ. 4 կոպ. իսկ երկրորդի համար 10 կ.։ Միւս պետութիւնների համար կայ առանձին սակագին։ Այն դէպքում, երբ կորչում կամ վնասւում է ծանրոցը, փոստային վարչութիւնը վճարում է ոչ աւելի ծանրոցի գնահատութիւնից, իսկ չգնահատւած ծանրոցի համար որի քաշը 12 ֆ. 7 լոտից աւելի չէ, վճարում է 9 ր. 37 կոպ.։

Թէթև ծանրոցները, որոնք բաղկացած են լինում հովանոցներից, ձեռնափայտերից, պատ-

կերներից յատակագծերից և այլն, 1 արշ. և $6^1/_2$ վերշոկից երկար չպէտք է լինեն։

Պահեստի տուրք.—Ծանրոցների համար առաջին անգամ ծանուցագիր տալուց 8 օր յետոյ եթէ չի ստացւում, յանձնւում է երկրորդ անգամ ծանուցագիր շրջաբերականով, որի համար և վերցւում է ստորագրութիւն։ Այս երկրորդ ծանուցագրից դարձեալ 8 օր յետոյ եթէ չի ստացւում ծանրոցը, ամենայն օր պահեստի համար (за храненіе) առնւում է 5 կոպէկ։

Դրամական ծրարների վրայ պէտք է գրել «денежный» և փողի քանակութիւնը։ Այդպիսի ծրարները պէտք է յանձնել աստիճանաւորին, որպէսզի նա ստուգի գումարը։ Կարելի է ուղարկել թղթադրամ, տոկոսաբեր թղթեր, կտրօններ և այլն։ Ծրարի քաշը 20 փ. ոչ աւելի։

Դրամական ծրարները ուղարկելու համար պէտք է վճարել 7 կոպ. ամեն մի լոտին, պատուէր և անդորրագրի համար—7 կոպ. և ապահովութեան տուրք։

Ապահովութեան տուրք վճարւում է մինչև 600 ր գումարին, ամեն րուբլուց $^1/_4$ կոպէկ, 600—1600 րուբլուն $^1/_4$ կոպ. և 1 րուբլի 50 կոպ. միանուագ. 1600 ր. գումարից աւելին $^1/_8$ կոպ. և էլի 3 ր. 50 կ. միանուագ։

Արժէքաւոր ծրարների (цѣнные пак.) վրայ պէտք է գրել «цѣнный»։ Այսպիսի ծրարներով կարելի է ուղարկել արժէքաւոր թղթեր՝ արժեթղթեր, մուրհակներ խրեղէններ, փող. միայն ոչ աւել 1000 րուբլուց։

Բայց արժէքաւոր ծրարները 1500 ր. աւելի գնահատել չի կարելի. իսկ փոկ արժէքաւոր ծրարները 500 ր. ոչ աւելի։

Արժէքաւոր ծրարները և ծանրոցները կորցնելու դէպքում փոստի վարչ. պատասխանատու է։ Այդ դէպքում պէտք է յայտարարութիւն տալ (заявленіе) 2 տարուայ ընթացքում, իսկ արտասահմանի համար 1 տար.։ Յայտարարութեան հետ պիտի ներկայացնել անդորրագրերը (квитанція).

Վերադիր վճարով կարելի է ուղարկել ծանրոցներ, ապահոված նամակներ և փաթեթներ, վերան պիտի գրել «съ наложеннымъ платежомъ» և փողի գումարը. ստացողը նախ պէտք է փողը վճարէ, ապա ստանայ։ Վերադիր վճարը պէտք է անել 200 ր. ոչ աւել։ Վերադրի համար պէտք է վճարել իւրաքանչիւր րուբլուն 2 կոպէկ, սակայն 10 կոպ. ոչ պակաս։

ԿՈՐՑՐԱԾ ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԻՆ

վարձատրութիւն պահանջելու համար պէտք է փոստի վարչութեան անունով տալ հետևեալ ձևի յայտարարութիւն.

Г-ну Начальнику такой-то почтово Телеграфной Конторы (или такою -то Почтоваго Отдѣленія)

Такого то, жител. тамъ то

Заявленie

Изъ прилагаемыхъ при семъ увѣдомленія за № *00* и почтовой росписки отъ 7 го марта сего года за № *00* видно, что заказной пакетъ, высланный мною тогда то, утраченъ въ пути и не полученъ адресатомъ, въ виду чего прошу о выдачѣ мнѣ за утраченную кореспонденцію установленнаго вознагражденія. Годъ, мѣсяцъ, число.

Подпись

Տեղ չհասցրած ծանրոցների (посылка) *և փաթեթների համար* (бандероль), *տրւում է այս ձևով յայտարարութիւն փոստի վարչութեանը.*

(Վերնագիրը թուում է նոյնը)

Заявленie

Такого-то числа, подъ почтовую расписку за № *00* сдапа мною во ввѣреную Вамъ контору (или Отдѣленіе) посылка (бандероль, заказной письмо), адресованое туда то, на имя токо то, Посылка эта, какъ видно изъ полученнаго мною письмо, до настоящаго времени не передана адресату. По этому, прилагая при семъ упомянутую расписку въ подлинникѣ (или засвидѣтельствованной копіи), прошу Васъ, Мылостивый Государь, произвѣсти справку о причинѣ такой неисправности и о результатѣ справки сообщить мнѣ, по мѣсту моего жительства въ—Годъ мѣсяцъ, число.

Подпись.

Դրամները փոստով փոխադրելու (переводъ по почтѣ) *համար մինչև 25 ր. 15 կոպ. մինչև 100 ր.—25 կ. 100—125 ր. 40 կ., 125—200 ր. 50 կ., 200—225 ր. 65 կ., 225—300 ր. 75 կ. 300—325 ր. 90 կ., 325—400 ր. 1 ր., 400—425 րուբ. 1 ր. 15 կ., 425—500 րուբ. 1 րուբ. 25 կ., իսկ 500 ր. աւելի փոստով չի կարելի փոխադրել.*

Հեռագրով փոխադրելիս (переводъ по телеграфу), պէտք է բացի վերոյիշեալ տուրքից տալ հեռագրի 20 խօսքի վճար ըստ տարիֆի։

Փողի փոխադրութիւնները կատարւում են առանձին բլանկներով, որի վրայ կպցւում է փոխադրութեան արժէքի համեմատ մարկաներ, իսկ հեռագրով փոխադրելու դէպքում վճարում են կանխիկ փող։

Արտասահման փոխադրութիւն կատարւում է միմիայն փոստով։ Միացեալ Նահանգները ընդունում են մինչև 200 ր. (100 դոլար), Աւստրո Ունգարիա—254 կռօն (100 ր.), Գերմանիա—216 մարկ (100 ր.), Բելգիա—266 ֆրանկ, Շվէյցարիա—266 ֆր., Ֆինլանդիա—100 ր., Ֆրանսիա—266 ֆրանկ։

Լրագիրների առաքման վճարը.—Տարին վեց անգամ հրատարակւող թերթից փոստը վերցնում է թերթի բաժնեգնի 8%-ը, ամսաթերթից—10%, երկշաբաթաթերթին—12% շաբաթաթերթից—14%, շաբաթը երկու անգամ հրատարակւողից—16% և օրաթերթից—18%։

Ամենապակաս գինը ամբողջ տարւայ համար 40 կոպէկ, շաբաթաթերթից 80 կ., շաբաթը երկու անգամ հրատարակւողից—1 ր. և օրաթերթից—1 ր. 20 կոպէկ։

ՀԵՌԱԳԻՐ

Իւրաքանչիւր հեռագրի համար պէտք է վճարել 15 կ. բացի այս, ամեն բառին 5 կոպէկ Եւրոպական և Ասիական Ռուսաստանի սահմաններում, առաջինի մէջ մտնում է Կովկասը, երկրորդի մէջ՝ Անդրկասպեան երկիրը։ Առաջին մասից երկրորդ մասը բառի վճարն է 10 կոպէկ։ Քաղաքային հեռագրի բառին 1 կոպ. Հեռագրի մէջ ամենաերկար խօսքը 15 տառից աւել չպէտք է լինի։ Ընդգծումը մի բառ է հաշւում. տիրէ, չակերտ, կէտ, փակագիծ չի հաշւում, թւանշաններից 5 թւանշանը մի խօսք է հաշւում, թւանշանի կարգով իւրաքանչիւր կէտ հաշւում է մի թւանշան։

Երբ ուզում են, որ հեռագիրը անմիջապէս ուղարկւի, առանց յետաձգելու, վերան գրում են «срочная», այսպիսի հեռագրին սովորական գնից երեք անգամ աւելի պէտք է վճարել։

Պատասխանով հեռագիր ուղարկելու համար պէտք է գրել «отвѣтъ уплаченъ», որա համար հեռագրատանը կտանան 10 խօսքի վճար։ Ցանկացողը կարող է աւել կամ պակաս վճարել, դրա համար պիտի գրել отвѣтъ 18 словъ» կամ 6 словъ։ Միևնոյն հեռագիրը մի

քանի հասցէներով ուղարկելու համար պէտք է վճարել իւրաքանչիւր հեռագրին 10 և խօսքին 15 կոպ.։

Միջազգային հեռագրները կարելի է գրել լատիներէն տառերով և բոլոր եւրոպական և մի քանի ասիական լեզուներով։ Վճարը իւրաքանչիւր երկրի համար առանձին է։

Աւստ. Ունգ-	11	կ.	Նորվեգիա	16	կ.
Անգլիա	22	»	Նիդերլանդ	14	»
Բելգիա	17	»	Շվէյցիա	14	»
Բուխարա	10	»	Շվէյցարիա	17	»
Բուլղարիա	9	»	Չէրնոգորիա	17	»
Գերմանիա	11	»	Պորտուգալիա	23	»
Դանիա	15	»	Պարսկ.(Հիւս.)	24	»
Եապոնիա	1 ր. 95	»	Պարս. (Հար.)	34	»
Իսպանիա	21	»	Սերբիա	15	»
Իտալիա	18	»	Տաճկաստ.	16	»
Հոլանդիա	14	»	Ռումինիա	8	»
Յունաստան	23	»	Ֆրանսիա	15	»

ՊՕՍՏԱՏՆԵՐԸ ՓԱԿ ԵՆ ԼԻՆՈՒՄ

Յունուարի 1-ին
Զատկի տօնին
Մարտի 25-ին
Դեկտեմբերի 6-ին,
և Դեկտեմբերի 25-ին,

Բաց են լինում միայն առաւօտեան ժամը 8—10

Յունուարի 6-ին
Փետրուարի 2-ին
Ռուսաց Ս. Երրորդութեան տօնին
Ապրիլի 23
Մայիսի 6, 9, 14, 25
Յունիսի 29
Յուլիսի 22, 30
Օգոստոսի 6, 15, 29
Սեպտեմբերի 8, 14, 26
Հոկտեմբերի 1. 5, 21, 22
Նոյեմբերի 14, 21
Դեկտեմբերի 26, 27
Մեծ բարեկենդանի շաբաթ օրը
Աւագ ուրբաթ և շաբաթ օրերը
Զատկի երկրորդ օրը
Համբարձման օրը
Հոգեգալստին և բոլոր կիրակի օրերը։

ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ԳԱՆՁԱՐԱՆՆԵՐ

Խնայողական գանձարանների նպատակն է աղքատ և չունևոր մարդկանց միջոց տալ հաւաքելու մի փոքրիկ գումար, իրենց աշխատանքից յետ գցած փողով։

Բանւորները, արհեստաւորները իրենց շաբաթական աշխատանքի որոշ մասը յետ գցելով կարող են յանձնել գանձարանին (եթէ իրանց մօտ մնար գուցէ ծախսէին) և ապագայում կունենան մի բաւականին մեծ գումար։ Այսպէս կարող են անել և ծնողները իրանց անչափահաս որդոց համար։

Խնայողական գանձարան կարելի է յանձնել 25 կոպէկից սկսած մինչև 1000 րուբլի։ Ընկերութիւնների և հիմնարկութիւնների համար 3000 րուբլի, իսկ եկեղեցիների համար որքան կամենան։

Խնայողական գանձարանը իր վերցրած փողերի համար վճարում է հետևեալ չափով տոկոս։

1) Մինչև 1000 ր. տարեկան $3^{6}/_{10}\%$։

2) Հիմնարկութիւնների և ընկերութիւնների 1000 ր. գումարների համար $3^{1}/_{10}\%$։

Տոկոսը հաշւում է ամսի 1-ից միայն ամբողջ ամիսների համար։ Մի րուբլուց պակաս գումարին տոկոս չի տրւում։

Փողը ում անունով որ յանձնւում է գանձարանը, դառնում է նրա սեփականութիւնը։ Ամեն մարդ իրաւունք ունի ուրիշի անունով փող դնել գանձարանը և փողի տէր կը դառնայ, նա որի անունով գրւած է։

Խնայողական գանձարանը իր ստացած փողերը գրում է առանձին տետրակի մէջ և տալիս փողի տիրոջը։ Եթէ մեռնում է այն մարդը, որի անունով գրւած է փողը, այդ դէպքում խնայողական գանձարանի փողը կարող են ստանալ միայն նրա ժառանգները, երբ նրանք օրինական կարգով կհաստատւեն։ Փող յանձնողը ամեն ժամանակ կարող է յետ պահանջել իր փողերը, իսկ գանձարանը պարտաւոր է կատարել նրա պահանջը։

Խնայողական գանձարանները բացւած են պոստ հեռագրական հիմնարկութիւններին և պետական գանձարաններին կից։

ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ՄԱՐԿԱՆԵՐ

Խնայողական մարկաները սահմանուած են նրա համար, որ աւելի դիւրութիւն տրւի մարդկանց ամենափոքր գումարներ նոյն իսկ խնայել։

Խնայողական մարկաները լինում են 5 և 10 կոպէկանոց և վաճառւում են խնայողական գանձարաններում և փոստատներում։

Այս մարկաները պէտք է կպցնել առանձին կարտերի վրայ, որոնք տրւում են ձրի։ Երբ այս ձևով մի ռուբլին լրանայ, կարտերը կարելի է ներկայացնել խնայողական գանձարանը և տետրի մէջ գրել տալ։

Այդպիսի հեշտ ձևով կարելի կլինի ձեռքն ընկած 5—10 կոպէկներով ժամանակի ընթացքում նեղ օրի համար մի գումար տնտեսել։

ԴՐՈՇՄԱՏՈՒՐՔ

(Гербовый сборъ)

Դրոշմատուրքը լինում է երկու տեսակ— հասարակ և համեմատական։ Հասարակ դրոշմատուրքի համար գործածւում են 5, 10, 15, 40, 60 կոպէկանոց և 1 ռուբլիանոց մարկաներ իսկ դրոշմաթղթեր (гербовыя бумаги) 60 կ. և 1 ր. արժողութեամբ։

Համեմատական դրոշմատուրքը լինում է Մուրհակային և Վաւերագրի կամ կապակցութեան։ Վերջինս նոյնպէս երկու տեսակ է.— բարձր արժէքի և հասարկ։ Մուրհակի թղթի համար իւրաքանչիւր 100 ր. պահանջւում է 15 կոպ., իսկ բարձր կապակցութեան թղթերի համար՝ 100—1000 ր. թղթի համար 50 կ., 1000—10000 և աւելի գումարին 5 ր.. պակաս հարիւրներն ու հազարները լրիւ են հաշւում. ստոր տեսակից իւրաքանչիւր 100—1000 ռուբլի գումարին առնւում է 5 կոպէկ, 1000—10000 ր. գումարին 50 կ., դարձեալ պակաս հարիւրներն ու հազարները լրիւ են հաշւում։

Բարձր տեսակի կապակցութեան տուրքի ենթարկւում են ա) կալւածական այն կապակ-

ցութիւնները, որոնք վերաբերում են անշարժ կալուածքներ գնելու, տիրելու, գրաւ գնելու, քրեհելու և այլն բ) Այն պայմանագրերը, որոնք վերաբերում են ընկերութիւններ կազմակերպելու, գործեր կապալով վերցնելու, գանազան իրեր մատակարարելու և այլն գ) Օբլիգացիաները. պայերը, ակցիաները, գրաւաթղթերը դ) Ապահովութեան պօլիսները և անդորրագրերը, որոնց ապահովութեան պրէմիան 300 ր. բարձր է։

Ստորին տեսակի համարւում են ա) այն կապակցութիւնները, որոնք վերաբերում են վաճառականական գործողութիւնների, ինչպէս ապրանք գնելու, ծախելու, առևտրական նամակներ, հաշիւներ, հեռագրներ և այլն բ) Գոյք վաճառելու սկզբնական պայմանները (запродажа) գ) Պայմանաթղթի վրա արած մակագրութիւնը, որով յանձնւում է ուրիշին։

Դրոշմանիշ թղթի փոխարէն կարելի է հասարակ թուղթ գործածել, սակայն գումարի արժէքի համաձայն վրան մարկա կպցնել։ Եթէ պայմանը կռում է նօտարը, այդ դէպքում նա այնպայման պահանջում է դրոշմանիշ թուղթ։ 20 րուբլի գումարի ընտանեկան բնոյթ կրող պայմանները ազատ են դրոշմատուրքից։

Դրոշմատուրքից ազատ են—Զինւորագրութեան վերաբերեալ թղթերը, Դատաստանական քրէական բաժնի և բոլոր այն գործերը. որոնք վերջանում են քաղաքական հաշտարար դատաւորների, գեմսկի նաչալնիկների, նահանգական դատարանի գաւառական անդամների ձեռքով։ Խնամակալական (опека) որոշումները, ժողովրդական կրթութեան վերաբերեալ թղթերի մեծ մասը, Գիւղական աշխատանքի վարձելու պայմանագրերը, բանւորական գրքերը և այլն, Չեկերը։ Այն բոլոր հաշիւներն ու վաւերաթղթերը, որոնց գումարը 5 ր. աւել չէ։ Բարեգործական հաստատութիւններին վերաբերեալ թղթերը։

1 ր. 25 կ. Դրոշմատուրքի ենթարկւում են այն խնդիրները, յայտարարութիւնները, որոնք տրւում են ընկերութիւններ հիմնելու և նրանց կանոնադրութիւնը փոխելու, ֆաբրիկաներ և գործարաններ բաց անելու։ Այդպիսի խնդիրների պատասխանի համար պահանջւում է նաև 1 ր. մարկա։ Ամեն տեսակ արհեստ և պարապմունք ունենալու թոյլտւութիւն ստանալու համար։ Ստորին ինստանցիաներից Դատաստանական պալատն ու Սենատը ուղղած գանգատներից։ Ամեն տեսակ հաւատարմաթղթերը

(довѣрность) Կտակները։ Այնպիսի պայման-
ները կամ առևտրական ձեռնարկութիւնները,
որոնց գումարը սկզբում ճշտութեամբ որոշելը
դժւար է 50 ր. գումարից աւելի տուգանքների
պայմանագրերը։ Այն անդորրագրերը և վկայա-
կանները, որոնք վարկային ընկերութիւնները
տալիս են պահպանութեան համար վերցրած
1000—2500 ր. գումարի կամ արժէքաւոր իրե-
րի համար (բացի ընթացիկ հաշիւներից) 300
ր. ոչ աւելի գումարի արժողութիւն ունեցող
կալւածքի գնման թղթերը։ Կրակից ապահովա-
գրող ընկերութեան տւած պօլիսներն ու անդոր-
րագրերը, որոնց ապահովութեան պրէմիա-
10—300 րուբլի է։

75 կոպ. դրոշմատուրք պահանջւում է.—
Ադմինիստրացիական հիմնարկութիւններից և
պաշտօնեաներից ներկայացրած խնդիրներից.
դանգատներից և այլն, նոյնպէս սրանց կցած
պատճէններից։ Այն խնդիրներից, բողոքներից,
բացատրութիւններից, առարկութիւններից,
(բացի պատճէնից) որոնք ներկայացւում են
դատաստանական տեղերը և առևտրական դա-
տարանները։ Այդպիսի խնդիրների, յայտա-
րարութիւնների պատասխաններից, պաշտօնա-
կան տեղեկութիւններից, վկայականներից և

ամէն տեսակ վաւերաթղթերից։ Ապահովու-
թեան անդորրագրերից, որոնց արժէքը 300—
1000 ր. է հասնում։

20 կոպ. դրոշմատուրք պահանջւում է
պատճէնների իւրաքանչիւր թերթից, որոնք
ըստ օրէնքի ներկայացւում են խնդիրների հետ
ընդհանուր դատաստանական տեղերը և առ-
ևտրական դատարանները։ Տոմսակներից, հա-
շիւներից, անդորրագրերից, աբոնեմենտի բը-
նաւորութիւն ունեցող գրքոյկներից (թատրո-
նական, երկաթուղային և այլն), երբ նրանք
տրւում են տարին 50 ր. գումարից աւելի։
Վարկային ընկերութիւնների ստացականնե-
րից, որով դրամ են ընդունում ընթացիկ հաշ-
ւով և ամէն մի գումարից, որ մուծւում է գըր-
քոյկի մէջ և որի գումարը 300 րուբ. աւելի է։

15 կոպ. դրոշմատուրք առնւում է ռոճիկ,
կենսաթոշակ և այլն. 50 ր. աւելի գումար ըս-
տանալու համար տրւած հաւատարմաթղթերից
Խանութներից ապրանք առնելու գրքոյկներից
(заборн. лавочн. книжки) իւրաքանչիւր 80
երեսից։ Գինի, սպիրտ և ծխախոտ տեղափո-
խելու վկայականները և այլն Ապահովութեան
ստացագրից (сохранныя росписки), որով պահ-
պանութեան տւած իրերի արժէքը 300 ր. աւե-
լի չէ։ Գաւառական և շինային (волости.) կա-
ռավարութեան գործերից քաղւածքներից, ո-
րոնց գումարը 200ր. աւելի է։

10 կոպ. դրոշմատուրքի ենթարկւում են.— Ապահովութեան պօլիսներն ու անդորրագրերը, որոնց ապահովութեան պրէմիան 3—9 րուբլի է Ակտերը, փաստաթղթերը, որոնց գումարը 50 ր. աւելի չէ։ Գաւառական և շէնային հաստատութիւնների գործերից քաղւածքները 100—200 ր. գումարին։

5 կոպ. դրոշմատուրք է առնւում հաշիւներից, տացականներից և այլ նման թղթերից, որոնց գումարը 5 րուբ. աւելի և հասնում է մինչև 50 րուբլին։ Տոմսակները, աբոնիմենտի բնաւորութիւն կրող գրքոյկները, երբ նրանք տրւում են ամբողջ տարին 50 րուբ. գումարի։

Դրւագաւոր թղթերի արժէքի հետևեալ աղիւսակում։

Ճեպընթ. տեսակ կմ.	Սովոր. տեսակ կմ.	Թղթի գինը	
մինչև	մինչև	ր.	կ.
100	1000	—	50
200	2000	1	—
300	3000	1	50
400	4000	2	-
500	5000	2	50
600	6000	3	—
700	7000	3	50
800	8000	4	—
900	9000	4	50
1000	10000	5	—
2000	20000	10	—
3000	30000	15	—
4000	40000	20	—
5000	50000	25	—
6000	60000	30	—
7000	70000	35	—
8000	80000	40	—
9000	90000	45	—
'0000	100000	50	—
20000	200000	100	—
30000	300000	150	—
40000	400000	00	—
50000	500000	250	—
100000	1000000	500	—

ՄՈՒՐՀԱԿ

Մուրհակ տալ չեն կարող 1) քաղաքացիական իրաւունքներից զրկւածները 2) հոգևորականները. 3) այն գիւղացիները, որոնք անշարժ կայք ու առևտրի վկայական չունին 4) բոլոր ստորին աստիճանաւորները (НИЖНЫЙ ЧИНЪ), եթէ միայն հաստատ ծառայութեան մէջ են 5) կինը առանց իր ամուսնու թոյլտւութեան, իսկ աղջիկը առանց իր ծնողների, եթէ նրանք իրենց անւամբ վաճառականական գործ չեն կատարում. 6) վաճառականների որդիքը, որոնք անբաժան են իրենց ծնողներից։

Մուրհակը պիտի գրել օրէնքով տպած թղթի վրայ, հակառակ դէպքում տուգանք է առնւում օրինական թղթի արժէքից 10 անգամ աւելի։

Եթէ մուրհակը վճարելու տեղը չէ գրւած, այդ դէպքում վճարման տեղը համարւում է մուրհակը գրւած տեղը։ Մուրհակի մէջ եթէ նշանակւում է տոկոս կամ տուգանք. դրանց քանակութիւնը ոչ մի նշանակութիւն չի կարող ունենալ։ Մուրհակի փոխանցումը մակագրութեամբ կատարւում է միւս երեսի վրայ։ Փոխանցումը լինում է երկու տեսակ՝ բլանկոփայա (бланковая надпись) երբ մակագրւում

է փոխանցողի ազգանունը, և անուանական (именной) երբ մակագրում է մուրհակի նոր տիրոջ ազգանունը (օր. իմ փոխարէն վճարել Յովակ Չիլինկարեանին)։ Եթէ փոխանցողը կամենում է իրենից պատասխանատուութիւնը հեռացնել և բոլորովին ազատ համարուի պատասխանատուութիւնից, մակագրում է «առանց ինձ վերադարձնելու» (безъ оборота на меня)։

Մուրհակները կարող են լինել հասարակ եւ փոխանակագիր. հասարակ մուրհակով ինքը մուրհակ տուողն է պարտաւորւում վճարել, իսկ փոխանակած մուրհակով վճարը յանձնւում է ուրիշին։

Մուրհակ տրւում է որոշ ժամանակով (срочный) և ըստ առաջին պահանջման (по предъявленію). առաջին դէպքում պահանջւում է որոշուած ժամանակը լրանալիս, իսկ երկրորդ դէպքում երբ պահանջեն։ Ժամանակը որոշուած մուրհակները եթէ իր ժամանակին չեն վճարւում, նրանք տրւում են նոտարին պրոտեստի։

Մուրհակի ժամանակը լրացած միջոցին մուրհակի տէրը պարտաւոր է ընդունել նոյն իսկ գումարի մի մասը և մուրհակը պրոտեստ անել միայն մնացած գումարի հաշւին։ Պրոտեստի նպատակն է պահպանել մուրհակի ույժը։ Պրոտեստ պիտի անել հէնց մուրհակի վճարման օրը-

ՄՈՒՐՀ· ԳՈՒՄԱՐ	ԹՂԹԻ ԳԻՆԸ	
50	—	10
100	—	15
200	—	30
300	—	45
400	—	60
500	—	75
600	—	90
700	1	05
800	1	20
900	1	35
1000	1	50
1500	2	25
2000	3	—
3000	4	50
4000	6	—
5000	7	50
6000	9	—
7000	10	50
8000	12	—
9000	13	50
10000	15	—
20000	30	—
30000	35	—
40000	60	—
50000	75	—

Մուրհակի ժամանակը լրանալուց յետոյ 5 տարուայ ընթացքում մուրհակի տէրը իրաւունք ունի գանգատ տալ մուրհակ տուողի վերայ, հաշուած ժամանակը լրանալու օրից, իսկ մակագրողների և երաշխաւորների վրայ մի տարուայ ընթացքում հաշուած մուրհակը պրոտեստ անելու օրից։ Եթէ մակագրողներից մէկը մուրհակը թափել է, նա կարող է պահանջ ներկայացնել իրենից առաջ մակագրողներին թափելու օրից մինչև 6 ամիս։ Վճարի ժամանակը լրանալուց 3 տարի անց այլևս ոչ մի պահանջ չի կարող գոյութիւն ունենալ մակագրողների և երաշխաւորների մէջ։

Ըստ առաջին պահանջման մուրհակը կորցնում է իր ույժը, եթէ 12 ամսուայ ընթացքում չի տրւում պրոտեստի, իսկ ժամանակը որոշուածը՝ 2 տ. ընթացքում, եթէ չէ ներկայացրած վճարի հաշուած պրոտեստի օրից։

ՄՈՒՐՀԱԿՆԵՐԻ ԶԵՂՋԸ ՀԱՇՒԵԼՈՒ ՀԵՇՏ ՄԻՋՈՑԸ

%	Բաժանարար
1	36000
2	18000
3	12000
4	9000
$4^1/_2$	8000
5	7200
$5^1/_2$	6545
6	6000
$6^1/_2$	5538
7	5143
8	4500
$8^1/_2$	4235
9	4000
10	3600
11	3273
12	3000

Որևէ դրամագլխի կամ տոկոսը կամ զեղչը հաշւելու համար կարելի է հետևեալ հեշտ միջոցը գործ դնել։ Պէտք է դրամագլուխը բազմապատկել օրերի թւի վրայ և ստացւած արտադրեալը բաժանել այս աղիւսակում ցոյց տւած համապատասխան թւի վրայ։

Օ Ր Ի Ն Ա Կ Ն Ե Ր

1) 8000 *րուբլի գումարի* 12 *օրւայ զեղչը* 6%-*ով* $=8000 \cdot 13 = 96000 : 6000 = 16$ *ր.* 2) 1500 3%-*ով* 25 *օրում կլինի* $1500 \cdot 25 = 37500 : 1\,000 = 3{,}0^1/_2$ *ր.*։

Այսպէս կարելի է գտնել մինչև 12%-*ը*։

ՄՈՒՐՀԱԿԻ ՕՐԻՆԱԿՆԵՐ

Թիֆլիս, 10 *Ապրիլի* 1914 *թ.*

Մուրհակ 3000 *րուբլու*

Հազար ինն հարիւր տասն և չորս թւի յուլիսի ութին այս իմ մուրհակով պարտաւոր եմ վճարել Ալէքսանդրապոլում Թիֆլիսի վաճառական Սմբատ Աթաբէկեանին երեք հազար րուբլի։

Արմենակ Սարգսեան

Ալէքսանդրապոլ, 1 *յուլիսի* 1914 *թ.*

Մուրհակ 4000 *րուբլու*

Այս օրից երեք ամիս յետոյ, սոյն մուրհակով պարտաւոր եմ վճարել Օդեսայի վաճառական Մնացական Մարգարեանցին չորս հազար րուբլի։

Մկրտիչ Նասիբեան

Փոխանակագիր

Շուշի, 10 *մայիսի* 1914 *թ.*

Մուրհակ 500 *րուբլու*

Ըստ առաջին պահանջման (կամ վերոյիշեալ թւից քսան օր յետոյ) վճարեցէք այս իմ

մուրհակի համաձայն Նուխու վաճառական Արտաշէս Իսրայէլեանցին Նուխի քաղաքում հինգ հարիւր րուբլի։

Վարդան Մարկիզեան

Александрополь, 3-го Мая 1914 г.

Вексель на 3000 рублей.

Седьмого сентября тысяча девятсотъ четырнадцатаго года по сему моему векселю повиненъ заплатить тифлисскому купцу Сенекериму Артемьевичу Сукіясянцу три тысячи рублей.

Мартиросъ Хачатурянъ

Карсъ, 9 Апрѣля 1914 г.

Вексель на 1000 рублей.

Отъ сего числа черезъ три мѣсяца по сему векселю повиненъ я заплатить карскому купцу Семеону Георгіевичу Малатянцу тысячу рублей.

Тифлисскій житель Вардань Мануковичъ Срапянъ

ԲՆԱԿԱՐԱՆԻ ՀԱՐԿ

Բոլոր քաղաքները և գիւղաքաղաքները բաժանուած են 5 կարգի։

II կարգ.—Թիֆլիս. Բագու, Բաթում։

III կարգ.—Մնացած բոլոր քաղաքները, որտեղ քաղաքային ինքնավարութիւն է մտցըրած։

IV կարգ.—Ալէքսանդրապօլ, Անապա. Արմաւիր, Գրօզնի Դերբենտ, Եյսկ, Մայկոպ, Շուշի, Պետիգօրսկ, Թէմիր Խան-Շուրայ։

V կարգ.—Ախալցխա, Ախալքալակ, Գօրի, Լէնքօրան, Ղզլար, Ղուբա, Մօզդօկ, Նախիջևան, Նուխի, Շամախի, Թելաւ, Սղնախ։

Բնակարանների հարկը վերցւում է նրանց քրեհի համեմատ։

Բնակարանների հարկը որոշելու համար ամեն մի քաղաքում կազմւում է առանձին կամիսիա, որին նախագահում է հարկային տեսուչը (податной инспекторъ), անդամները ընտրւում են քաղաքի տնատէրերից։

Տարին մի անգամ, ամեն մի տնատէր պարտաւոր է մինչև յունւարի 7-ը տեղեկութիւն տալ այդ կամիսիային իր տան, բնակարանների և ստացած քրեհի մասին։ Եթէ այս տեղեկու-

թիւնները նա իր ժամանակին չտայ, կամ թէ կեղծէ, նա կենթարկւի տուգանքի՝ ուշացնելու դէպքում 50 րուբլի, կեղծելիս՝ մինչև 300 ր.

Վերոյիշեալ կամիսիան մինչև մարտի 7 բոլոր բնակարանատէրերին յայտարարութիւններ է ուղարկում հարկերի քանակութեան մասին։ Դժգոհները մի ամսուայ ընթացքում կարող են բողոքել «նահանգական վարչութեան»։

Բնակարանները հարկի չեն ենթարկւում.— 1) Այն բոլոր տները, որտեղ մարդիկ չեն ապրում, ինչպէս նաև բոլոր դպրոցական. պետական, հասարակական հիմնարկութիւնները վաճառանոցների համար յատկացրած շինութիւնները։ 2) Վանքերը, առաջնորդարանները, թատրոնները, տպարանները գրադարանները, ընթերցարանները գինուորանոցները (բացի օֆիցերների բնակարաններից), բանւորների բնակարանները գործարանին կից, բարեգործական նպատակների ծառայող տները։

Դատաստանական պրիստաւների վարձատրութեան չափը

1) *Ծանուցագրեր* (повѣстка) *և կամ այլ թղթեր ըստ պատկանելոյն յանձնելու համար* 200 *րուբլիանոց պահանջագումարից*—25 *կոպ.,*

մինչև 5000 *ր.* 50 *կոպէկ,* 5000 *ր. աւելին* 1 *րուբլի, երբ գումարը յայտնի չէ* 50 *կոպէկ։*

2) *Շարժական կայքերը ցուցակագրելու և գնահատելու համար* 25 *ր. գումարից* 25 *կոպ.,* *50 ր. գումարից՝ 50 կոպէկ. 100 ր.—1 ր., 200-ից—2 ր., 300-ից—3 ր., 400-ից—4 ր. 500-ից—5 ր., իսկ 500 ր. մինչև 5000 ր.—5 ր. մնացած գումարին իւրաքանչիւր 100 ր.—50 կ.,*

3) Ցուցակագրւած առարկաները կնքելու և ստորագրելու համար մինչև 50 կտորը իւրաքանչիւր կտորից 5 կոպէկ, մինչև 100 կտ.—4 կ. 100-ից աւելին 3-ական կոպ.։

*4) Անշարժ կայքերը ցուցակագրելիս մինչև 500 ր.—2 ր. 50 կոպ., 500—*1000 *ր.—5 ր.* 1000 *ր.* 2000—*6 ր., 2—*3000 *ր.—7 ր., 3—*4000 *ր.—8 ր., 4—*5000 *ր.—9 ր.,* 5000-*ից աւելին 9 ր. և էլի 50 կոպ. իւրաքանչիւր* 1000 *ր. համար, բացի առաջին* 5000-*ից։*

Երդուեալ հաւատարմատարների վարձատրութեան չափը

1) Քաղաքացիական գործերը երկու ինստանցիաներում վարելու համար 500—2000 *ր. գումարի համար* 10%, 2000—5000 *ր. գումարին առաջին* 2000-*ից* 200 *ր.* 8% *մնացածից։*

5000—25,000 ր. գումարից 400 ր. առաջին 5000-ից, և 4% մնացածից։ 25,000—75,000 ր, գումարից 1740 ր. առաջին 50,000-ից 1% և մնացածից 75,000-ից աւելին՝ 1990 րուբլի և մնացած գումարից էլ $^1/_2$% իւրաքանչիւր րուբլուց։

Առաջին ինստանցիայում գործը վարելու համար հաւատարմատարը ստանում է վերոյիշեալ վարձատրութեան $^2/_3$-ը, իսկ երկրորդ ինստանցիայի համար $^1/_3$-ը։

Երբ վարած գործի գումարը որոշ չէ, դատաւորն ինքն է որոշում վարձատրութեան չափը 50—1200 րուբլի։

Երբ գործը հաշտութեամբ է վերջանում կամ թէ առանց օրինական պատճառի հեռացւում է հաւատարմատարը, նա իրաւունք ունի դատով իր հասանելիքը պահանջելու։

Եթէ գործը դադարում է, նա իրաւունք ունի ստանալու միայն վարձատրութեան $^1/_4$-ը, բայց այդ $^1/_4$-ը առաջին ինստանցիայի համար չի կարող 200 ր. աւելի լինել, իսկ երկրորդին 100-ից։

Նոտարների վարձատրութիւնը

1) Նոտարական արձանագրութիւններ (акть. կազմելու համար պէտք է վճարել մինչև 500 ր) գումարը 2 ր., 501—1000 ր. 3 րուբ., իսկ

1000-ից աւելին 4 րուբլի և բացի այդ՝ 10 կ. իւրաքանչիւր 100 րուբլուն։

2) Մուրհակները վաւերացնելու և նրանց մասին բողոք գրելու համար մինչև 500 ր.—50 կ., 500-ից աւելին՝ 1 րուբլի և 10 կոպ. իւրաքանչիւր 100 րուբլուց։

3) Պայմանագրեր վաւերացնելու համար մինչև 500 ր. 1 ր., մինչև 1000 ր. 1 ր. 50 կ., 1000 ր. աւելի գումարին 2 ր., և 10 կ. պայմանագրի գումարի իւրաքանչիւր 100 րուբլուց։

4) Պատճէնը վաւերացնելու համար առաջին թերթից 25 կ. միւս թերթերից իւրաքանչիւր 25 տողից 10 կոպէկ։

5) Ստորագրութիւնը վաւերացնելու համար 10 կոպէկ։

6) Փաստաթղթերի ներկայացման ժամանակը վաւերացնելու—55 կոպէկ։

7)Արձանագրութիւններ և պայմանագրեր կազմելու համար, եթէ նրանց արժէքը որոշւած չէ, պէտք է վճարել, որքան վճարում են 1000 ր, արժող արձանագրութիւն կազմելու համար։

8) Հաւատարմաթղթեր довѣреность) և հաշտութեան թղթեր (мировая запись) և միջնորդական թղթեր (трегейская запись) կազմելու կամ վաւերացնելու համար—1 թերթից 1 ր. իսկ հետևեալներից 30-ական կոպէկ։

9) Ուրիշ վաւերացումների 1-ին թերթից 50 կոպէկ, հետևեալներից՝ 20-ական կոպէկ։

10) Զանազան թղթեր նոտարական գրքերի մէջ անցկացնելու համար ամեն մի տողին 2 կ.։

11) Մէկ կողմից միւսին գրաւոր յայտարարութիւն տալու և այդ մասին առաջինին վաւերաթուղթ տալու համար պէտք է վճարել 50 կ.։

12) Նոտարին պահ տուած փաստաթղթերի (բացի դրամական) իւրաքանչիւրի համար պէտք է վճարել ամսական 25 կ. իսկ կնքւած ծրարների համար ամսական 50 կոպէկ։

13) Արձանագրութիւն կազմելու կամ վաւերացնելու ժամանակն իմանալու կամ այդ մասին թուղթ ստանալու համար պէտք է վճարել 50 կ.։

14) Երկրորդ, երրորդ և այլ անգամ քաղւածներ (ВЫПИСЬ) դուրս տալու համար իւրաքանչիւր տողին 1 կոպէկ։

15) Արքունի գանձարանից կենսաթոշակ ստացող անձնաւորութեան կենդանի լինելը վկայելու համար պէտք է վճարել տարեկան մինչև 30 ր. կենսաթոշակ ստացողին 3 կ., 30—300 ր. 10 կ., 300-ից աւելին 20 կոպ.։ Մնացած դէպքերում, բացի կենսաթոշակից 50 կոպէկ։

16) Նոտարիուսին իր պաշտօնասենեակից

(КОНТОРА) դուրս կատարած գործի համար պէտք է վարձատրել բացի գործի համար որոշւած գնից, նաև մայրաքաղաքներում—3 րուբլի, նահանգական քաղաքներում—2 ր., գաւառական քաղաքներում—1 րուբլի։

17) Նոտարիուսին քաղաքի սահմանից դուրս տանելու համար ճանապարհածախս գնալու և գալու համար պէտք է վճարել ամեն վերստին 10 կ. իսկ երկաթուղով գնալիս, պէտք է վճարել թէ գնալու և թէ գալու համար II կարգի տոմսակի գին։ Բացի սրանից ճանապարհին կորցրած ժամանակի համար պէտք է վճարել մայրաքաղաքներից 5 ր., նահանգական քաղաքներից 3 րուբ., մնացած այլ տեղերից 2 ր., եթէ միայն գնալ գալը մի ամբողջ օրւանից (СУТКА) աւելի չէ տևել, հակառակ դէպքում ամեն օրւայ համար (ոչ ամբողջ օրն էլ որ է հաշւում) վերոյիշեալ գնի համեմատ պէտք է վարձատրել։

18) Նոտարիուսը կարող է հէնց սկզբից իրեն հասանելիք վարձը պահանջել, երբ նրան հրաւիրում են պաշտօնասենեակից դուրս գործեր կատարելու։

ՌՈՒՍԱԿԱՆ ՉԱՓ ԵՒ ԿՇԻՌ

Մակերեւոյթի

Քառակուսի մղոնն ունի			49	քառ.	վերստ
»	վերստը	»	250,000	»	սաժէն
»	սաժէնը	»	9	»	արշին
»	արշինը	»	256	»	վերշոկ
»	սաժէնը	»	49	»	ֆուտ
»	ֆուտը	»	144	»	դիւյմ
Դեսեատինը ունի 40. 60			2400	»	սաժէն։

Բովանդակութեան չափեր

Խորանարդ մղոնն ունի			343	խոր.	վերստ
»	վերստն	»	125	»	սաժէն
»	սաժէնն	»	27	»	արշին
»	սաժէնն	»	343	»	ֆուտ
»	արշինն	»	4096	»	վերշ.
»	ֆուտը	»	1728	»	դիւյմ
»	արշինն	»	21925	»	դիւյմ
»	սաժէնն	»	110592	»վ.=592704	

խոր. դիւյմ. 1 միլիոն խոր. հարիւրերորդ սաժէնին (1 сот.)

Ընդեղէնների չափեր

Լաստը ունի . . . . 12 չետվերտ
Չետվերտը . . . . 8 չետվերիկ

Չետվերիկը . . . . 8 գարնց

Հեղուկների չափեր

Տակառն ունի . . . 40 վեդրօ
Վեդրօն » . . . 10 շտոֆ
Վեդրօն » . . . 80 գրվ. Ջրի
Շտոֆը կամ կրուժկէն ունի . 2 շիշ. (бут.)

Դեղատան չափեր

Գրվանքան ունի 84 մսխալ . . 12 ունցիա
Ունցիան » . . . . 8 դրախմ
Դրախման » . . . . 2 սկրուպ.
Սկրուպուլը » . . . . 20 գրան.

Ծանրութեան չափեր

Բերկովեցն ունի . . . 10 փութ
Փութն . . . . . 40 գրվան.
Գրվանքան. . . . . 96 մսխալ
Լոտը . . . . . 3 մսխալ
Մսխալը . . . : . 96 դոլիա։

ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՉԱՓԵՐ

Դրամների արժէքը

Դրամների արժէքը	Ռուս.		Ֆրանս.		Գերմ.	
	Ր.	Կ.	Ֆր.	Սա.	Մկ	Պֆ.
Ռուսական ռուբլին	1	—	2	66	2	16
Անգլ. ֆունտ ստերլ	9	46	25	22	20	43
Ֆրանս. ֆրանկը	—	37	1	—	—	81
Գերման. մարկը	—	47	1	25	1	—
Աւստ-Ունգ. կրօնը	—	39	1	5	—	85
Թուրք. պիաստրը*)	—	9	—	23	—	18
Պարսկական 1 թումանը 10 նոր ղրան— 100 սենար — 1000 բիս—10,000 դին	3	32	8	83	7	17
Պարս. 1 նոր ղրանը	—	33	—	88	—	71
Պարս. 1 սենարը	—	3	—	7	—	7
Ամերիկ դոլլարը	1	94	5	18	4	19
Եապօնական իէնը	—	97	2	48	2	9

*) Պիաստրը հաւասար է 1 ղուրուշի։

ԾԱՆՐՈՒԹԵԱՆ ՉԱՓԵՐ

Վերածած ռուսական չափերի

	Փութ	Գրւան.	Մսխալ	Դոլի
Անգլիական				
Տօնան, 30 ցենտն.՝ ունի	62	1	10	64
Ցենտները ,4 կվարտ.՝ »	3	4	6	32
Կվարտերը ,28 գրվ.՝ »		31	1	32
Գրվանքան ,16 ունց.՝ »		1	10	32
Ունցիան ,16 դրախմ.՝ »			6	62
Լաստը ,2 տօնն.՝ »	124	2	21	32
Ֆրանսիական				
Կիլոգրամը ,10 հեկ.՝ ունի		2	42	$41^2/_3$
Հեկտոգրամ ,10 դեկ.՝ »			23	42
Դեկագրամ ,10 գրամ.՝ »			2	$33_{.4}$
Գրամմը ,10 դեցիգր.՝ »				22_{5}
Ցենտները ,100 կիլ.՝ »	6	3	17	64
Պրուսական				
Գրվանքան ,30 լոտ.՝ ունի		1	12	9
Ցենտները ,10 գրվ.՝ »	3	4	93	84
Տաճկական				
Կանթարը ,44 օք.՝ ունի	3	17	60	64_{4}
Օքքան ,400 դրախմ.՝		3	3	27_{6}

ԵՐԿԱՐՈՒԹԵԱՆ ՉԱՓԵՐ

Վերածած ռուսական չափերի

Չափ		Վերստ	Սաժ.	Արշին	Վերշ.	Ֆուտ	Դիւյմ
Ռուսական	Աշխարհագրական մղոնը ունի	7					
	Վերստը . . . »		500				
	Սաժէնը . . . »			3			
	Սաժէնը . . . »					7	
	Արշինը . . . »				16		
	Արշինը . . . »						28
	Ֆուտը . . . »						12
Անգլիական	Մղոնը (1760 եարդ) ունի	1	256				
	Եարդը (3 ֆուտ և 6 դիւյմ)			1	8		
	Ֆուտը (12 դիւմ)				6_{48}		
	Կվարտէրը (4 նէլ)						9
	Ն է լ ը						2_{25}

Չափ		Վերստ	Սաժ.	Արշին	Վերշ.	Ֆուտ	Դիւյմ
Ֆրանսիական	Միլիմետրը (10 կիլոմետր) ունի	9	197	2			
	Կիլոմետրը (10 հեկտոմ.) »		468	2	1_8		
	Հեկտոմետրը (10 դեկամ.) »		46	2	9_6		
	Դեկամետրը (10 մետր) »		4	2_{60}			
	Մետր (10 դեցիմետր) »			1	6_5		
	Դեցիմետր (10 սանտիմ.) »				2_{25}		
	Սանտիմետրը (10 միլիմ.) »				0_{225}		
Տաճկ.	Պիկը ունի			15_5			
	Էնտեզէն ունի				14_{688}		
Պրուսական	Մղոնը ,200 րուտ.' ունի	6	448				
	Լոկոտը »				15		
	Րուտը »					12	
	Ֆուտը »					2	12
	Կանգուն »						5_5

ՏՆԱՎԱՐԻ ԿՏԱԿ ԿԱԶՄԵԼՈՒ ՀԱՄԱՌՕՏ ԿԱՆՈՆՆԵՐԸ

(«Церковныя Вѣдомости» 1911, № 49)։

Ի՞նչ բան է կտակը։

Կտակը՝ կտակողի օրինական կամքն է նրա ունեցածի վրայ, մահւան դէպքում (յօդ. 1010 X т. ч. I Зак. гражд.)։

Ո՞վ կարող է կտակել։

Այն անձերը, որոնք օրէնքով իրաւունք ունեն սրան—նրան տալու իրանց գոյքը։ Ընդունելի չեն նրանց կտակները, որոնք անմիտ են, խելագար (ցնորւելու ժամանակ), անչափահաս, չեն հասել քսան տարեկան հասակի և մի տարւան (не достигшихъ двадцати лѣтъ съ годомъ) կամ զրկւած են կարողութեան բոլոր իրաւունքներից (յօդ. 1017 և 1019)։

Կտակելի գոյքի ցուցակագրելը։

Կտակելի գոյքերը և այն անձերը, որոնց կտակւում են, կտակի մէջ պէտք է նշանակւեն ճշտութեամբ (յօդ. 19 26)։

Կտակ կազմելու կարգը

Տնավարի կազմած կտակը կարող է գըրւել ամեն տեսակի չափի թղթի վրայ,

բացառութիւն չանելով և՛ փոստի թուղթը, միայն թէ այդ թուղթը, կազմւած լինելով երկու լրիւ կէսերից, կազմի ամբողջ թերթ. իսկ այն կտակները, որոնք գրւած են թերթի կըտորների կամ թղթի կտորների վրայ, ընդունելի չեն (յօդ. 1045)։

Տնավարի կտակը գրւում է կտակողի ձեռքով կամ թղթի ամբողջ երեսի վրայ, կամ նրա ցանկութեամբ ու խօսքերով՝ ուրիշի ձեռքով. թէ մէկը և թէ միւսը պէտք է ստորագըրւած լինի կտակողի՝ իր ձեռքով։ Իսկ ըստորագրութեան մէջ պէտք է յայտնւած լինի անունը, հայրանունը ու ազգանունը կամ կոչումը (յօդ. 1146)։

Այն անձը, որ գրում է կտակը կտակողի խօսքերով, նրա խնդրով, կոչւում է արտագրող (переписчикъ)։

Վրիպակները, ստորագրութիւնները ու շտկումները պէտք է յայտնի լինեն առաջուց կտակողի ստորագրութեան մէջ (յօդ. 1046)։

Այն կտակները, որոնք գրւած են մի քանի թերթերում, բայց ոչ կտակողի ձեռքով, պէտք է վաւերացւած լինեն թերթ—թերթ (այնպէս որ իւրաքանչիւրի վրա լինէր մէկ ամբողջ բառից ոչ պակաս անունից, հայրանունից ու ազգանունից) կամ կտակողի՝ իր ձեռքով, կամ նրա ձեռ-

քով ով նրա փոխարէն, նրա անգրագէտ լինելու պատճառով կամ ուրիշ օրինական պատճառներով, ձեռք է դրել (рукоприкладствовалъ), կամ, վերջապէս, բոլոր վկաների կողմից, որոնք ստորագրել են միայն այն դէպքում, երբ իսկապէս նրանք, այդ բանի համար, լիազօրուած են կտակողի կողմից՝ բացատրելու և յայտնելու այն պատճառը, որով թոյլ են տալիս վաւերացումը (յօդ. 1046^{2})։

Վաւերացումը այս բանի մէջն է։ Եթէ, օրինակ, անգրագէտ կտակողի փոխարէն ստորագրել է կտակը рукоприкладствовалъ) գիւղացի Գէորգ Գրիգորեան Վարդանեանցը, այն ժամանակ հէնց նա էլ այն վաւերացնում է այսպէս. կտակի առաջին թերթում, երեսի կողմից, սովորաբար աջ ստորին անկիւնում, գրածի լայնքով (поперекъ) կամ մաքուր տեղի վրայ, գրում է «գիւղացի» խօսքը, երկրորդ կիսաթերթի վրայ, հէնց միենոյն տեղում, «Գէորգ» երկրորդի վրայ «Գրիգորեան», չորրորդի վրայ «Վարդանեանց». թէ կիսաթերթեր շատ կան, այդ դէպքում հինգերորդի վրայ նորից «գիւղացի», վեցերորդի վրայ «Գէորգ» և այլն։

Եթէ կտակը գրել է ուրիշ մարդ, այն ժամանակ բացի կտակողի սեփական ձեռքով գր-

րած ստորագրութիւնից՝ պէտք է գրուած լինի և՛ կտակը գրողի ստորագրութիւնը (արտագրողի), և բացի դրանից՝ երեք կամ ամենաքիչը երկու վկաների ստորագրութիւնը, եթէ նրանց թւում գտնւում է կտակողի հոգևոր հայրը։ Իսկ այս ստորագրութեան մէջ պէտք է նշանակուած լինի մանրամասնօրէն և՛ կտակողի կոչումը։ Արգելւում է այն բանը, որ միենոյն անձը լինի և՛ արտագրող և՛ ձեռք դնող ու վկայ եղող՝ կտակողի կողմից, և սրա հիման վրայ կտակ արտագրողը չի կարող լինել և՛ կտակողի կողմից ձեռք դնող, ոչ էլ՝ վկայ կտակելու միջոցին, այսպէս էլ ձեռք դնողը չի կարող վկայ լինել կտակողի կողմից կտակելու միջոցին (յօդ. 1048)։

Ձեռք դնողը այն անձն է, որ կտակողի կողմից ստորագրւում է՝ նրա անգրագիտութեան կամ ուրիշ պատճառով, օրինակ, հիւանդութեան պատճառով։

Տանավարի այն կտակը, որ ամբողջապէս գրուած է կտակողի ձեռքով, պէտք է ունենայ երկու վկայի ստորագրութիւն (յօդ. 1051)։

Եթէ կտակողը գրել չգիտէ կամ հիւանդութեան պատճառով չի կարող ստորագրել կտակը սեփական ձեռքով, այդ դէպքում բացի վկաներից, նրա տեղը ու նրա խնդրով պէտք է գրուի

ստորագրութիւնը մի ուրիշ անձի, բայց այդ անձը պէտք է ունենայ այն բոլոր յատկութիւնները, որոնք պահանջւում են կտակելու միջոցին հաւատարիմ վկայից։ Միևնոյն ժամանակ նրա ստորագրութեան մէջ պէտք է յականէ-յանուանէ նշանակւած լինի, թէ այդ ստորագրութիւնը նա գրել է այն պատճառով, որ կտակողը անգրագէտ է եղել, թէ՝ հիւանդ (յօդ. 1053)։

Այդ անձը, որ ստորագրում է կտակողի կողմից, ինքը՝ ձեռք դնողն է։

Վկաները՝ կտակելու միջոցին։

Կտակելու ժամանակ չեն կարող վկաներ լինել՝ 1) այն անձերը, որոնց օգտին կազմւած է կտակը. 2) այս անձերի ազգականները մինչև 4 աստիճանը և խնամիները մինչև 3 աստիճանը, եթէ կտակը կազմւում է ոչ յօգուտ ուղղագիծ ժառանգների՝ լրիւ կամ մասամբ. 3) կտակակատարները և խնամատարները, որոնք նշանակւած են կտակի հիման վրա. 4) նրանք, որոնք օրէնքով իրաւունք չունին կտակել. 5) այն բոլոր անձերը, որոնք հանուր կանոններով քաղաքացիական վկայութեան համար ընդունելի չեն (յօդ. 1054)։

Այսպիսով, չեն կարող վկայ լինել՝ այն անանձերը, որոնք վտարւած են եկեղեցուց, իբրաւազուրկ են, անչափահաս են 21 տարեկանից,

նոյնպէս և այն անձերը, որոնք յիշւած են 1017 և 1019 յօդւածներում (տես վերևը)։

Չեն կարող վկայ լինել նոյնպէս կառավարչական Սենատի բացատրութիւններով անգրագէտները և նրանք, որոնք չեն կարող դնել իրանց ստորագրութիւնը։

Կանանց արգելւած չէ լինել վկայ (բացի Պալտաւայի ու Չերնիգովեան նահանգներից)։

Այն բոլոր յատկութիւնները, որոնք պահանջւում են վկայից, պահանջւում են և՝ ձեռք դնողից. նշանակում է, ով վկայ լինել չի կարող, նա չի կարող և ստորագրել կտակը կտակողի կողմից—օրինակ, անգրագէտն ու հիւանդը։

Կտակողների ստորագրութիւնը հաւաստիացնում է միայն 1) թէ կտակը իսկականն է, այսինքն, թէ այն անձը, որ ներկայացնում է կտակը, հէնց նա ինքն է, որ արել է կտակը ու այն ստորագրել. 2) որ դրանք, այդ կտակը ներկայացնելիս, ամենքը տեսել են անձամբ և գտել նրան առողջ՝ մտքով և յիշողութեան կողմից հաստատ։ Միայն այս երկու հանգամանքներն են, որ նրանք հաստատելու են հարց ու փորձի ժամանակ (յօդ. 1050)։

Վկաներին կարելի է հրաւիրել՝ ոչ թէ անպատճառ ամենքին միասին, այլ, օրինակ,

այսօր մէկին, մի քանի ժամանակից յետոյ է՝ միւսին, երրորդին։

Կարելի է և չկարդալ կտակը վկաների առջև, հարկաւոր է միայն, որ կտակողը խնդրի նրանց՝ ստորագրել, առաջարկելով կտակը,— իսկ նրանք պէտք է հաւաստիանան, որ կտակողը մտքով առողջ է և յիշողութեամբ հաստատ։ Ահա հէնց սրա մասին են հարցնելու նրանց շրջանային (окружный) դատարանում կամ, դատարանի յանձնարարութեամբ՝ տեղական քաղաքային դատարանի կամ զէմսկի գլխաւորի (началь никъ) մօտ։

Այս պատճառով վկաների ստորագրութիւնը լինում է այսպէս։ «Կտակը ներկայացուել է մեզ իրան կտակողի կողմից, որին մենք այս ժամանակ տեսել ենք անձամբ և գտել ենք առողջ մտքով և հաստատ յիշողութեամբ», որից յետոյ արդէն գալիս են վկաների սեփական ձեռքով գրած ստորագրութիւնները։

Վկաների ստորագրութիւնը պէտք է լինի ոչ թէ թղթի շապիկի վերայ, այլ՝ կտակի իսկ թերթի վրայ, կամ թերթի ներսի կողմը, կամ նրա միւս երեսին (յօդ. 1056)։

Բացի վերև մատնանշած անձերից, վկաներից, ձեռք դնողից, արտագրողից, կտակի մէջ հարկաւոր չէ ուրիշ ոչ ոքի ստորագրութիւնը

ոչինչ գրուածք՝ կտակը կանոնաւոր լինելու մասին հաստատող և այլն, ոչ ոքի կողմից չպէտք է արուի և չէ հարկաւոր ներկայացնել տանավարի կտակը գիւղական կամ որ և է ուրիշ հիմնարկութեան։

Կտակը պահելու տեղը։

Տանավարի կտակը կարող է պահել կտակողը իր սեփական հայեցողութեամբ՝ կամ իր մօտ, կամ կարող է պահ տալ մէկ ուրիշի, կամ յանձնել նօտարին (յօդ. 1058)։

Կտակը հաստատել տալը։

Ամեն կտակ, կտակողի մեռնելուց յետոյ, պէտք է ներկայացուի ի հաստատութիւն այն ժամանակաշրջաններում, որոնք սահմանուած են յօդ. յօդ. 1063, 1065 ու 1066-ում՝ շրջանային դատարանը կամ այնտեղ, որտեղ գտնւում է կտակուած գոյքը կամ այնտեղ, ուր գտնւում է կտակողը։ Տանավարի կազմուած կտակները ներկայացւում են իսկական ձևով (յօդ. 1060)։

Կտակները ներկայացւում են ի հաստատութիւն նրանց կողմից, ում ձեռքում որ գտնւում են (յօդ. 1062)։

Հաստատել տալու ժամանակաշրջանը հետևեալն է. Ռուսաստանում բնակւողների համար՝ մի տարի է, իսկ արտասահմանում գըտ-

նուողների համար՝ երկու տարի, սկսած կտակողի մահուան օրից (յօդ. 1063)։

Կտակի ձեւը։

1. Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. ամէն։

Թիֆլիսի նահանգի Բօրչալուի գաւառի Սանահին գիւղ. հազար ինն հարիւր տաս և չորս թ. մարտի տասին։ Ես Սանահինի բնակիչ Մարտիրոս Կարապետեան Սարգսեանցս, գտնւելով առողջ մտքով ու հաստատ յիշողութեամբ իմ մահուան դէպքում անում եմ հետեւեալ կարգադրութիւնը իմ գոյքի մասին. ինձ պատկանող երեք օրավար հերկած հողը, որ գտնւում է Բօրչալուի գաւառում, և գնել եմ ազնւական Նիկողայոս Սիմոնեան Յովհաննիսեանից գնման թղթով (купчая крѣпость), որ հաստատւած է Թիֆլիսի շրջանային դատարանի աւագ նոտարի ձեռքով 1907 թւի սեպտեմբերի 1[illegible]-ին կտակում եմ իբրև սեփականութիւն իմ որդի Պետրոսին. իսկ իմ տունը, որ գտնւում է Սանահին գիւղում՝ իր գետնով ու այգիով 150 քառակուսի սաժէն տարածութեամբ,—որի սահմաններն են.—մի կողմից՝ փողոց, միւսից՝ փողոցիկը,—երրորդից ու չորրորդից՝ գիւղացի Աթանաս Յակոբեան Յովհաննիսեանի կալւածքը,— կտակում եմ իբրև սեփականութիւն միենոյն Պետրոս որդուս, իսկ իմ ամուսնուհի Շօղիկ Նաչխունեանին տալիս եմ իրաւունք՝ բնակելու նոյն տանը մինչև իր մահը։ Մնացած բոլոր գոյքս, որտեղ էլ լինի, և ինչում էլ կայանալիս լինի, կտակում են դուստր Վարդուհուն ըստ ամուսնու՝ Իսահակեան։

Այս կտակը իր սեփական ձեռքով գրել է կտակող՝ գիւղացի Մարտիրոս Կարապետեան Սարգսեանցը։

Կտակելու միջոցին վկայ էինք ու հաւաստիացնում ենք, որ կտակը առաջարկել է մեզ ինքը կտակող Մարտիրոս Կարապետեանցը, որին այդ միջոցին տեսանք անձամբ ու գտանք առողջ մտքով ու հաստատ յիշողութեամբ։

Գիւղացի՝ Աբրահամ Մինասեան Հայրապետեանց։ Մեշչանին՝ Գարեգին Խաչատրեան Միսակեան։

2. Եթէ կտակողը ինքը չի գրել կտակը, կտակողի խօսքերով գրողը (արտագրողը) պէտք է ստորագրի. այս կտակը՝ կտակողի խօսքերով (անունը, հայրանունը և ազգանունը) գրեց գիւղացի Համբարձում Միքայէլեան Սեդրակեանը, որի համար և ստորագրում եմ՝ Համբարձում Միքայէլեան Սեդրակեան։ Յետոյ

գալիս է կտակողի ստորագրութիւնը, իսկ յետոյ՝ երեք կամ երկու վկաների, եթէ նրանց թւումն է և հոգևոր հայրը։

3. Եթէ կտակողը չկարողանայ ստորագրել (անգրագիտութեան կամ հիւանդութեան պատճառով), պէտք է գրել այսպէս. անգրագէտ կտակողի կողմից (կտակողի հիւանդութեան պատճառով), այն է այս—ինչ մարդուց, նրա անձնական խնդրով ստորագրեցի (անուն, հայրանուն, ազգանուն)։ Այս անձնաւորութիւնը չի կարող ստորագրել միանգամից աւելի՝ կատարուած կտակի տակ, քանի որ չի կարող լինել ոչ արտագրող, ոչ էլ՝ վկայ։

Այսպիսի կտակ գրելիս պէտք է լինեն երեք կամ երկու գրագէտ վկայ, եթէ նրանց միջև կլինի կտակողի հոգևոր հայրը։

Վկաները գրագէտ պէտք է լինեն, այսինքն ստորագրել կարողացող։ Վկայ չի կարող լինել ոչ ձեռք դնողը (որ ստորագրել է կտակը՝ կըտակողի կողմից), ոչ էլ արտագրողը (որ գրել է կտակողի խօսքերով։

Մի անգամից աւելի չի կարող ստորագրել ոչ կտակողը, ոչ արտագրողը, ոչ ձեռք դնողը, ոչ էլ վկաներից իւրաքանչիւրը, որ մասնակցել է կտակը կատարելիս՝

4. Այսպէս, ուրեմն այն միջոցին, երբ կատարւում է կտակը, որ միշտ գրւում է կտակողի ձեռքով, պէտք է հրաւիրել միայն երկու գրագէտ մարդ՝ վկայ։

Եթէ կտակողը միայն ստորագրում է, բայց չի գրում կտակը իր ձեռքով, կարիք կայ չորս գրագէտ անձի մասնակցութեան, այն է՝ արտագրողի, որ կգրի կտակողի խօսքերով ու երեք գրագէտ վկաների. կամ երկուսի, եթէ նրանց թւումն է հոգևոր հայրը։

Եթէ կտակը չի կարողանում և՝ ստորագրել բացի նրանից հարկաւոր է և գրագէտ ձեռք դնող, որ կստորագրէ կտակողի կողմից։

Լ. Ք. .Ն

ՊԱՅՄԱՆԻ ՕՐԻՆԱԿՆԵՐ

Ա..

Հազար ինն հարիւր տասն և չորս թւի Հոկտեմբերի երեքին, Ալէքսանդրապօլ։

Մենք ի ներքոյ ստորագրող Ալէքսանդրապօլ քաղաքի բնակիչ Միքայէլ Հէյդարեանցս և Արամ Մարկիզեանցս կապեցինք մեր մէջ հետևեալ պայմանը. 1) Ես Միքայէլ Հէյդարեանցըս տւի քրէհով Ջիմ սեփական տունը (կամ կրպակը), որ գտնւում է քաղաքիս առաջին

մասում № 25 և բաղկացած է չորս սենեակից,
Արամ Մարկիդեանին մի տարի ժամանակով,
տարեկան քրէհն է մի հարիւր քսան րուբլի
(120 ր.) վերոյիշեալ թւից մինչև տարին լրա-
նալը. 2) Տարեկան քրէհ հարիւր քսան րուբլին
Մարկիդեանը պարտաւոր է վճարել երեք քա-
ռամսեակում (տրէթ), իւրաքանչիւր քառամ-
սեակի սկզբին քառասուն րուբլի (40 րուբլի)
ճշտութեամբ 3) Մարկիդեանը պարտաւոր է
տունը իր շրջակայքով կանոնաւոր մաքրու-
թեան մէջ պահել և ոստիկանութեան արած
նկատողութիւններին պատասխանատուն ինքն
է. 4) Պայմանաժամը լրանալուն պէս Մարկի-
դեանը պարտաւոր է դուրս գալ տանից և
տունը նոյնութեամբ յանձնել ինձ, ինչպէս ըս-
տացել էր. 5) Ես Հէյդարեանցս տարին չըլը-
րացած իրաւունք չունիմ Մարկիդեանին տա-
նից դուրս հանելու, նոյնպէս Մարկիդեանը
չունի իրաւունք դուրս գալու, եթէ մեր մէջ
համաձայնութիւն չկայանայ 6) Այս պայմանից
գրւեց երկու օրինակ, իսկականը մնալու կալ-
ւածատիրոջ՝ Հէյդարեանցի մօտ, իսկ նոյն ըս-
տորագրութիւններով վաւերացրած պատճէնը
Մարկիդեանցի, որի վրայ պէտք է գրել վճար-
ւած փողերի քանակութիւնը պատշաճաւոր ըս-

տորագրութեամբ 7) Մեզանից իւրաքանչիւրն
էլ պարտաւոր է մաքուր և անարատ պահել
այս պայմանը. 8) Ով որ այս պայմանի որևէ
կէտը խախտէ, պարտաւոր է արդար կողմին
վճարել իբրև տուգանք երկու հարիւր րուբլի։

Առ որ ստորագրում ենք. Միքայէլ Հէյդա-
րեանց, Արամ Մարկիդեանց.

Վկայ ենք՝ Սարգիս Տէր-Գրիգորեան, Սե-
նեքերիմ Մարմարեանց։

Բ.

Հազար ինն հարիւր տասներեք թւի մայ-
իսի 10-ին Ալէքսանդրապօլ։ Ես ի ներքոյ ստո-
րագրող կօշկակարների համքարից վարպետ
Յովակիմ Սարգսեանցս ընդունեցի իմ կօշ-
կակարութեան գործարանում կօշկակարութեան
արհեստը սովորեցնելու համար իմ համքա-
ղաքացի Մանուկ Յակոբեանցի որդուն՝ Հայկին,
վերոյիշեալ թւից հինգ տարւայ ընթացքում
հետևեալ պայմանով։

1) Ես պարտաւոր եմ Յակոբեանցին կա-
նոնաւոր սովորեցնել կօշկակարութեան ար-
հեստը, չը պահանջելով նրա հօրից՝ Մանուկ
Յակոբեանից ոչ մի կոպէկ սրա համար վար-
ձատրութիւն. 2) Ամբողջ պայմանաժամի ըն-
թացքում պարտաւոր եմ կերակրել նրան սը-

նընդարար կերակուրներով և հագցնել մաքուր ու կանոնաւոր. 3) Խիստ ծանր աշխատանքներով չպէտք է ծանրաբեռնեմ նրան և նրա գործած յանցանքների համար մարմնական պատիժ չպէտք է գործ դնեմ, այլ պէտք է յանդիմանեմ խօսքերով և երբ նա այս կերպով չուղղուի, պէտք է պայմանը խախտուած համարել և նրան վերադարձնել իր հօրը. 4) Հինգ տարուան ժամանակամիջոցը չլրացած Մանուկ Յակոբեանցը իրաւունք չունի իր որդուն գործարանից հանելու, նոյնպէս և ես չունիմ իրաւունք հեռացնելու, եթէ տեղի չէ ունեցել երրորդ կէտում յիշուած պատճառը. 5) Այս պայմանից գրուեց երկու օրինակ, իսկականը մնալու է Յովակիմ Սարգսեանցի մօտ, իսկ պատճէնը Մանուկ Յակոբեանցի, որը պարտաւոր ենք մաքուր և անարատ պահել: Յովակիմ Սարգսեան, Մանուկ Յակոբեան: Վկայ ենք՝ Արամ Դաւթեան, Գէորգ Սարաճեանց:

ՄԻ ԶՐՈՅՑ*)

(Լ. Ն. Տօլստոյ)

Մի շատ հեռու երկրում ապրում էր մի թագաւոր: Ծերութեան օրերին նրա միտքը դառնացաւ:

—Կեանքիս մէջ, ասում է նա, ամեն ինչ տեսայ և չը կայ մի բան, որը մատչելի լինէր մարդկային աչքին, որ ես աչքաթող արած լինեմ: Սակայն կեանքիս մէջ մի բան չիմացայ—Աստծուն չտեսայ: Ուզում եմ նրան տեսնել:

Եւ հրաման արձակեց իր իշխաններին, գիտուններին և քահանաներին:

—Եթէ ցոյց չը տաք ինձ Աստծուն, բոլորիդ կաքսորեմ և կը պատժեմ չարաչար կերպով:

Եւ նրանց ժամանակ տուաւ երեք օր:

Պալատում տիրեց ընդհանուր լռում: Բոլորը սրտատրոփ սպասում էին օրհասական ժամին:

---

*) Այս զրոյցը պատմել է Լ. Ն. Տօլստոյը գիւղացիներին նրանց հետ ունեցած մի խօսակցութեան ժամանակ:

Երրորդ օրը, ճիշտ կէսօրին, Թագաւորը նրանց իր մօտ կանչեց։

Լուռ, գլխիկոր կանգնած էին Թագաւորի առաջ գիտունները, քահանաները և պալատականները, և սոսկալի հրամանն արդէն պատրաստ էր դուրս թռչելու Թագաւորի բերնից, երբ դաշտից վերադարձող մի հովիւ ներս մտաւ և ասաց.

—Թոյլ տուր ինձ, Թագաւոր, քո ցանկութիւնդ կատարելու։

—Լաւ, պատասխանեց Թագաւորը, բայց իմացիր, որ հակառակ դէպքում գլուխդ պատասխանատու պիտի լինի։

Հովիւը հրաւիրեց Թագաւորին դուրս, կանգնացրեց հրապարակի վրայ, ցոյց տուաւ փայլուն, շողշողուն արևը և ասաց.

—Նայիր նրան, Թագաւոր։

Թագաւորը գլուխը բարձրացրեց, ուզեց նայել, բայց արևի սուր ճառագայթները ծակծկեցին նրա աչքերը. նա գլուխը կախեց և աչքերը փակեց։

—Ի՞նչ է, ասաց նա հովւին, դու ուզում ես ինձ կուրացնե՞լ։

—Թագաւոր, ասաց այն ժամանակ հովիւը, սա դեռ Արարչի հրաշագործութիւններից մէկն է, նրա վսեմութեան միայն մի փոքրիկ

նշոյլը, փոքրիկ անկիւնը՝ Աստուածային մշտավառ խարոյկի։ Հապա ինչպէս ես դու վստահանում մօտենալ և տեսնել նրանց քո թոյլ աչքերով։ Դու Աստուծուն տես ուրիշ աչքերով։

Թագաւորը այս հաւանեց և ասաց հովւին.

— Տեսնում եմ, որ խելօք մարդ ես, հապա այժմ ասա ինձ, թէ ինչ կար Աստծուց առաջ։

Հովիւը մտածեց և ասաց։

Խնդրում եմ, Թագաւոր, նեղութիւն կրիր համարելու։

Թագաւորը սկսեց.

Մէկ, երկու,...։

— Ո՛չ, ո՛չ, ընդհատեց հովիւը, այդպէս չէ. դու սկսիր մէկից առաջ։

—Ի՞նչպէս կարելի է մէկից առաջ, եթէ ոչինչ չը կայ։

—Խելօք բան ասացիր, Թագաւոր, ուրեմն Աստծուց առաջ էլ ոչինչ չի եղել։

Թագաւորն էլ աւելի հաւանեց այս և ասաց.

—Մեծամեծ պարգևների կարժանացնեմ քեզ, միայն թէ ասա ինձ, ինչ է անում Աստուած։

Հովիւը, տեսնելով Թագաւորի բարի վերաբերմունքը, ասաց.

—Լաւ, ես այդ հարցին կը պատասխանեմ, միայն կատարիր իմ խնդիրս. եկ փոխենք մեր հագուստները:

Թագաւորը հանեց իր թագաւորական ըզգեստը և հագցրեց հովւին, իսկ ինքը հագաւ նրա չուխան և կախեց հովւական պարկը:

Հովիւը ելաւ բարձրացաւ թագաւորի գահը, առաւ ձեռը թագաւորական գաւազանը և ասաց իր գահոյքի ներքև կանգնած հովւական պարկը վզից կախած թագաւորին.

—Ահա թէ ինչ է անում Աստուած: Մէկին գահն է բարձրացնում, միւսին՝ գահից տապալում:

Եւ ապա իջաւ և հագաւ դարձեալ իր ցըն-ցոտիները:

Թագաւորը խոր մտածմունքի մէջ ընկաւ: Այդ խօսքերը նրա վրայ խոր ազդեցութիւն էին գործել: Եւ յանկարծ, մեծ ցնծութեամբ նա բացականչեց.

—Ահա այժմ ես տեսնում եմ Աստծուն:

Փոխ. Ն. Հ.

ԽՈՂՃԸ

(Հնդկական 100 պատմւածքներից)

Այս դէպքը պատահեց առաջ, շատ առաջ, անյիշելի ժամանակներում, երբ պատմութիւն էլ չէր գրւում:

Այն ժամանակ էլ, պատահում էր, որ մարդիկ յիմարութիւններ էին անում, բայց ոչ ոք չկար, որ գրէր նրանց արած յիմարութիւնները: Գուցէ այս է պատճառը, որ մենք մեր պապերին ու նախնիքներին իմաստուն ենք համարում:

Այդ անյիշելի ժամանակներում էլ ծնւեց խիղճը: Նա ծնւեց այն հանդիստ գիշերը, երբ ամեն ինչ թաղւած է լինում մտածմունքի մէջ:

Մտածում է գետակը լուսնի շողերից փայլելով. մտածում է եղէգնը. շունչը պահած մըտածում է խոտը. մտածում է երկինքը:

Այս պատճառով էլ գիշերը լուռ է: Ցերեկն ամեն ինչ աղմկում է ու ապրում, գիշերն ամեն ինչ լուռ է ու մտածում: Իւրաքանչիւր հարսնեակ մտածում է, թէ որպիսի երփներանգ թիթեռ պիտի դառնայ: Բոյսերն իրենց մտքի մէջ գիշերը յօրինում են ծաղիկներ, սոխակը՝ երգեր, իսկ աստղերը՝ ապագայ:

Ահա հէնց այդպիսի մի գիշեր ծնուեց Խիղ-ճը։

Խոշոր էին նրա աչքերը. ինչպէս գիշերա-յին թռչուններինը։ Լուսնի լոյսը պատել էր նրա դէմքը գունատ փայլով. իսկ աստղերը նրա աչքերի խորքում կայծ էին դրել։

—Եւ անցաւ Խիղճը երկրի վրայով։

—Նա ապրում էր կէս լաւ, կէս վատ։

—Ապրում էր բուի նման։

Ցերեկը նրա հետ ոչ ոք չէր ուզում խօսել։

—Ցերեկը ոչ ոք ժամանակ չունէր։

—Մի տեղ տուն էին շինում, մի այլ տեղ փոս-փորում։

Երբ մօտենում էր որևէ մէկին, իսկոյն նրան ձեռքով ու ոտքով հեռու էին քշում.

—Չե՞ս տեսնում ինչ է կատարւում չորս կողմդ. այստեղ քարեր են քաշում, այնտեղ գե-րաններ գլորում, ձիեր են անցնում։ Այստեղ պէտք է զգուշանալ, որ մի կերպ գլուխդ ան-վտանգ պահես։ Մի՞թէ ժամանակ կայ քեզ հետ խօսելու։

—Մինչդեռ գիշերները նա աւելի հանգիստ էր գտնում։

Նա մտնում էր հարուստ, ճենապակուց

շինուած տները և եղէգնից շինուած տնակները։ Կամացուկ ձեռք էր տալիս քնածներին։ Քնածը զարթնում էր, մթութեան մէջ տեսնում էր Խղճի այրւող աչքերը և հարցնում էր.

—Ի՞նչ ես ուզում։

—Դու այսօր ի՞նչ արիր, կամացուկ հար-ցնում էր Խիղճը։

—Ի՞նչ արի. ես... կարծեմ, ոչ մի առան-ձին բան չեմ արել...

—Լաւ մտածիր։

—Արդեօք այն...

Խիղճը գնում էր ուրիշի մօտ, իսկ զարթ-նած մարդը այլևս քնել չէր կարողանում մին-չև հետևեալ առաւօտը և ամբողջ ժամանակը մտածում էր, թէ ինչ էր արել ցերեկը։

Եւ շատ բան, որ նա չէր լսել ցերեկւայ աղմուկի մէջ, լսում էր գիշերւայ լռութեան մէջ։

Եւ քիչերն էին քնում։

Բոլորի վրայ անքնութիւն էր եկել։ Նոյն-իսկ հարուստներին օգնել չէին կարողանում ոչ բժիշկները, ոչ ափիոնը։

Նոյն իսկ իմաստուն Լի-Խան-Ջուն ոչ մի դարման չէր գտնում անքնութեան դէմ։

Լի-Խան-Ջուն բոլորից շատ փող, բոլորից

շատ հող և բոլորից շատ ոսկի ունէր։

Դրա համար էլ մարդիկ մտածում էին.

—Երբ նա ամեն բան բոլորից շատ ունի, նշանակում է բոլորից շատ էլ խելք ունի։

Եւ Լի-խան-Ջուին անուանում էին ամենախելօք։

Եւ ահա ինքը ամենախելօք Լի-խան-Ջուն աւելի շատ էր տանջւում նոյն ցաւից և չէր իմանում ինչ անէր։

Բոլոր շրջապատողները նրան պարտ էին և ամբողջ կեանքերում նրան պարտք էին վըճարում։ Այսպէս խելօք էր կարծել Լի-խան-Ջուն։

Իբրև իմաստուն մարդ Լի-Խան-Ջուն գիտէր, թէ ինչ պիտի անէ։

Երբ նրա պարտապաններից որևէ մէկը մի բան էր գողանում նրանից և բռնւում էր, Լի-Խան-Ջուն թակում էր նրան իր իմաստութեամբ, այնպէս, որ միւսներն էլ դաս առնէին։

Եւ ցերեկը այս բանը շատ խելացի էր թըւում, որովհետև միւսներն իսկապէս վախենում էին։

Իսկ գիշերները Լի-Խան-Ջուի գլխում ուրիշ մտքեր էին պտտում։

—Իսկ ինչու՞ է նա գողանում։ Որովհետև

ուտելու բան չունի։ Իսկ ինչու՞ ուտելու բան չունի։ Որովհետև աշխատելու ժամանակ չունի։ Նա ամբողջ օրը չարչարւում է, որ ինձ ունեցած պարտքը վճարէ։

Այնպէս որ Լի-Խան-Ջուն ծիծաղում էր։

—Ա՛յ լաւ բան։ Ուրեմն դուրս է գալիս, որ ինձ թալանում են և ես եմ մեղաւոր։

Ծիծաղում էր, բայց և այնպէս քնել չէր կարողանում։

Եւ անքուն գիշերները նրան այն աստիճանին հասցրին, որ նա, չնայած իր ամբողջ գիտնականութեանը, վեր կացաւ և յայտարարեց.

—Վերադարձնում եմ նրանց բոլոր փողերը, հողերը և տները։

Իսկ այս բանի վրայ Լի-Խան-Ջուի ազգականները լաց ու աղմուկ բարձրացրին և ասացին.

—Այս բոլորի պատճառը նրա անքնութիւնն է։

Անքուն գիշերներից խելօք մարդը խելացնորուել է։

Բժիշկներն ևս նոյն բանն ասացին։

Աղմուկը տարածուեց։

Միայն «նա» է մեղաւոր։ Եթէ նա էլ ցընորուել է, ինչ կլինի մեր դրութիւնը։

Եւ սարսափում էին բոլորը, թէ հարուստները և թէ աղքատները։

—Նա ինձ էլ տանջում է անքնութեամբ։

—Ի՛նձ էլ։

—Ի՛նձ էլ։

Եւ աղքատներն աւելի վախեցան, քան հարուստները։

—Մենք որ ամեն բանից ամենից քիչ ունենք. ինչ կլինի մեր փոքրիկ խելքի գլութիւնը։

Իսկ հարուստներն ասում էին,

—Տեսէք, ինչպէս է «Նա» աղքատներին վախեցնում, հարկաւոր է նրանց պաշտպանել։ Եւ բոլորն էլ սկսեցին մտածել. ինչպէս անեն, որ ազատուեն—Խղճից։ Բայց ումից որ խորհուրդ էին հարցնում, ոչինչ չէր լինում։

Այն ժամանակ Նանկինում ապրում էր Ա-Պու-Օն, այնքան իմաստուն, այնքան գիտնական, որ իմաստութեամբ և գիտնականութեամբ նրան հաւասարը չկար ամբողջ Չինաստանում։

Եւ մարդիկ վճռեցին։

Հարկաւոր է նրանցից խորհուրդ հարցնել։ Բացի նրանից ոչ ոք ոչինչ անել չի կարող։

Կազմեցին պատգամաւորութիւն. բերին ընծաներ և մինչև գետին բազմաթիւ անգամ խոր գլուխ ուին.

—Օգնիր, ազատիր անքնութիւնից։ Լսեց Ա-Պու-Օն ժողովրդի վիշտը, մտածեց, ժպտաց ու ասաց.

—Կարելի է օգնել։ Կարելի է և այնպէս անել, որ «Նա»գալու անգամ իրաւունք չունենայ։

Եւ բոլորն ականջները սրեցին։

Ա-Պու-Օն նորից ժպտաց ու ասաց.

—Եկէք օրէնքներ շարադրենք։ Ո՞րտեղից պէտք է իմանայ անուս մարդը, թէ ի՞նչ պէտք է անել և ի՞նչ չանել։ Եկէք գրենք, թէ մարդ ինչ պէտք է անէ և ինչ ոչ։ Մանդարինները պէտք է օրէնքներն անգիր իմանան. իսկ միւսները թող գնան նրանց մօտ հարցնելու, կարելի՞ է թէ ոչ։ Թող այն ժամանակ «Նա» գայ. «ի՞նչ ես արել դու այսօր»։ «Այն եմ արել, ինչ որ պէտք էր, ինչ որ գրուած է»։ Եւ բոլորն էլ հանգիստ կը քնեն։ Իհարկէ մանդարինների գլխողները պէտք է նրանց վճարեն, ի դուր տեղը չպէտք է մանդարինները իրենց ուղեղը օրէնքներով լցնեն։

Այս բանի վրայ ուրախացան բոլորը։ Մանդարիններն ուրախացան, որովհետև աւելի հեշտ է գրքի նշանները քրքրել քան հողը։

Իսկ միւսները՝ որովհետև աւելի լաւ է մանդարիններին վճարել և ցերեկով նրա հետ մի քանի րոպէ խօսել, քան գիշերով «նրա» հետ երկար խօսքի բռնուել։

Եւ սկսեցին գրել այն ամենը, ինչ որ պէտք է անէր մարդ և ինչ որ չպէտք է անէր։

Եւ գրեցին։

Իսկ իմաստուն Ա.-Պու-Օ-ին դարձրին մանդարինների ամենամեծը։

Եւ սկսեցին մարդիկ շատ լաւ ապրել։

Նոյնիսկ նրանց արտաքինն սկսեց աւելի լաւանալ։

Եթէ մէկը ուզում էր մի բան անել, իսկոյն գնում էր մանդարինի մօտ և դնում էր նրա առաջ իր նուէրը։

—«Բարև, ամենաիմաստուն, հապա մի բաց արա օրինագիրը,—ինչ պէտք է անել այս ինչ դէպքում»։

Եթէ վէճ պատահէր, երկու կողմն ևս մանդարինի մօտ էին գնում, երկուսն էլ նուէրները դնում էին նրա առաջ։

—Բաց արա՛ օրէնքները. ո՞վ է արդարը։

Միմիայն ամենաաղքատները, որոնք ոչինչ չէին կարող վճարել մանդարիններին, տանջւում էին անքնութիւնից։

Իսկ միւսները, որոնց մօտ էր գալիս գիշերով Խիղճը ասում էին.

—Ի՞նչ ես գալիս մեզ մօտ, ես օրէնքով եմ վարուել։Ինչպէս օրէնքում է ասած։ Ես չեմ։

Եւ շուռ գալով միւս կողերին, քնում էին։

Նոյն իսկ իմաստուն Լի-Խան-Ջուն, որ բոլորից շատ էր տանջւում անքնութիւնից, այժմ միայն ծիծաղում էր, եթէ երբեմն Խիղճը գալիս էր մօտը։

—Բարև, գեղեցկուհի, ի՞նչ ես ասում։

—Չէ՞ որ դու ունեցածներդ ուզում էիր վերադարձնել, հարցնում էր Խիղճը, ուղղելով նրա վրայ իր աչքերը, որոնց մէջ աստղեր էին փայլում։

—Իսկ ես ունէ՞ի,—հռհռում էր Լի-Խան-Ջուն, իսկ ի՞նչ է գրւած օրէնքում. «իւրաքանչիւր հարստութիւն իր տիրոջը և ժառանգներին է պատկանում»։ Ես ինչպէս պիտի բաժանեմ իմ հարստութիւնը, եթէ իմ ժառանգները համաձայն չեն։ Սրանից հետևում է, որ ես կամ գող եմ և նրանցից գողանում եմ, կամ խելագար եմ, որովհետև ինձնից եմ գողանում։ Իսկ օրէնքում ասած է. «գողին և խելագարին շղթայակապ անել»։ Ուստի և խնդրում եմ, ինձ հանգիստ թողնես քնելու, քեզ էլ խորհուրդ եմ

տալիս, աւելի լաւ կանես, եթէ քնես, քան թափառես։

Շուռ էր գալիս «Նրանից» և հանգիստ քնում.

Եւ ամեն տեղ, ուր որ գնում էր Խիղճը, նոյն բանն էր լսում.

—Մենք չգիտենք, ինչպէս որ մանդարինները են ասում, այնպէս էլ անում ենք։ Գնա՛, նրանց հարցրո՛ւ։ Մենք օրէնքով ենք վարւում։

Գնում էր Խիղճը մանդարինների մօտ։

—Ինչո՞ւ համար ինձ ոչ ոք չի ուզում լսել։

Մանդարինները ծիծաղում էին։

—Իսկ օրէնքներն ինչո՞ւ համար են։ Մի՞թէ կարելի է, որ մարդիկ քեզ լսեն և առածով վարւեն. իսկ եթէ մէկը չհասկանայ քե՞զ և սուտ ասէ՞։ Այն ինչ այստեղ բոլորի համար սև թանաքով դեղին թղթի վրայ գրւած է։ Հանճարը բան է այս։ Իզուր չէ, որ Ա-Պու-Օն այս բանը հնարելու համար ամենամեծ մանդարինն է համարւում։

Այն ժամանակ Խիղճը ամենախմաստուն Ա-Պու-Օ-ի մօտ գնաց։

Շատ կամաց ձէն տւեց նրան և կանգնեց։

Զարթնեց Ա-Պու-Օն և ոտի ցատկեց։

—Ի՞նչպէս ես համարձակւում, առանց

հարցնելու, գիշերով ուրիշի տունը մտնել։ Ի՞նչ է գրւած օրէնքում։ «Ով որ գիշերով ծածուկ ուրիշի տունը մտնի, նրան գող համարել և բանտ նետել»։

—Բայց ես քո մօտ գողութեան համար չեմ եկել, պատասխանեց Խիղճը։ Ես Խիղճն եմ։

—Իսկ օրէնքով, դու անառակ կին ես։ Պարզ ասւած է. «Եթէ կինը գիշերով օտար տղամարդու մօտ գնայ,—նրան համարել անառակ և բանտ նստեցնել»։ Նշանակում է, անառակ ես, եթէ գող չես։

—Ի՞նչպէս թէ անառակ եմ, բացականչեց Խիղճը, ի՞նչ ես ասում։

—Ա՛խ, նշանակում է, դու ոչ գող ես և ոչ անառակ, այլ օրէնքը չես ուզում կատարել։

Այդ դէպքում, դրա համար էլ օրէնքը կայ. «Ով որ չի ուզում օրէնքը կատարել, նրան համարել օրինազանց և բանտ նստեցնել։ Է՛յ, մարդիկ, կալանաւորէք այս կնոջը և բանտ դրէք ընդ միշտ. իբրև անառակի, որ կասկածւում է գողութեան մէջ և բռնւած է դէպի օրէնքը ցոյց տւած անհնազանդութեան մէջ։

Եւ նրանք շղթայեցին Խղճի ձեռքերը և բանտարկեցին։

Այն օրւանից սկսած նա, ի հարկէ, ոչ ոքի

մօտ չի գալիս, և ոչ ոքի չի անհանգստացնում։

Այնպէս որ նոյն իսկ բոլորովին մոռացել են նրա մասին։

Երբեմն միայն որևէ մի կոպիտը մանդարիններից անբաւական զոռում է.

—Դուք խիղճ չունէք։

Նրան խոկոյն թուղթը ցոյց են տալիս, որ խիղճը բանտարկուած է։

Նշանակում է, կայ «Նա», որ բանտարկած ենք պահում։

Եւ կոպիտը լռում է, որ իրաւացի են։

Եւ այն օրուանից ապրում են մարդիկ հանգիստ ու խաղաղ։

Թարգմ. ռուս. **Ա. Բէօսապապեան**

I

Դ. Ա. Տ

Հոգին թողեց մարմինը և հրեշտակը բըռնած նրա ձեռքից տարաւ մի մռայլ ու տխուր անապատ և նստեցրեց մի քարի վրայ։ Իսկ բարձրից, նրա գլխին տարածուած գորշ-արճիճային մառախուղից, լսեց մի ձայն՝ «դատիր ինքդ քեզ»։

Եւ իսկոյն և եթ հոգու աչքերի առջև սկսեց հոսել մի գետ, որի ջուրը, որքան կարողացաւ հասկանալ հոգին, արցունքներից էր գոյացած։ Ջուրը պղտոր էր։

Հրեշտակն ասաց․

—Նայիր, ահա այն արցունքները, որոնք թափել են մարդիկ քեզ համար, քո պատճառով, այն ժամանակ, երբ դու ապրում էիր երկրում։

Հոգին պատասխանեց․

—Այո, բայց այստեղ խառնուած են և իմ արցունքները։

Երեք անգամ հրեշտակը ասաց միևնոյն բանը հոգուն և հոգին տուեց միևնոյն պատասխանը։

Բայց յանկարծ գետի ջուրը անչափ խորացաւ ու դարձաւ մաքուր, ինչպէս բիւրեղ։ Հրեշտակն ասաց․

—Սա քո մօր արցունքներն են։

Եւ հոգին, ծածկելով երեսը ձեռքերով, պատասխանեց.

—Այո, ես մեղաւոր եմ, այստեղ խառը չեն իմ արցունքները։

II

ԲԱԽՏԸ

Զխօսենք բախտի մասին, որին մենք տենչում ենք ու փափագում։ Զխօսենք նրա մասին...

Բախտը նման է փոքրիկ թռչնիկի—հեշտ է նրան վախեցնելը։

Սպասենք հանգիստ, առանց շտապելու, չը խօսենք նրա մասին, նոյն իսկ չմտածենք նրա մասին։ Հոգու լուռ խորքերում, սրտի թաքուն ծալքերում անհուն տենչանքով ցանկանանք նրան, ծածկելով այդ ցանկութիւնը նոյն իսկ մեր սեփական մտքի առաջ։

Որովհետեւ բախտը, ինչպէս արեւը ամպերում, կնայի ամպերի տակից միայն մի րոպէ և այնպէս, հեշտութեամբ, կծածկուի ամպերում։

Զկանչենք բախտին, չձգտենք նրան, չպայքարենք նրա համար։ Ինչպէս երեխաները երազում են ծննդեան նախօրեակին այն մասին, թէ Քրիստոս կգայ նրանց մօտ ընծաներով, և սպասում են այդ բանին զգուշութեամբ ու երկիւղած, յուզմունքով ու անհամբեր—այնպէս էլ մենք կսպասենք նրան։

Եթէ գալու է—կգայ... մենք չգնանք նրա մօտ։

Բախտը արև է, որի մասին երազում են այն ծաղիկները, որոնք ծաղկում ու ապրում են միայն մի օր... Նրանք չեն կարող գնալ նրա մօտ, նրանք սպասում են...

Եթէ օրը պարզ է—նա կգայ։ Եթէ ամպերը ծածկել են երկինքը—նրանք իզուր են սպասում։

Կթառամեն, և չեն տեսնիլ արևին։ Գիշերը, մահուան ժամին, նրանք կասեն՝ իզուր բացւեցինք արևին ընդառաջ... Նա չեկաւ...

Սպասենք բախտին զգոյշ ու հանգիստ... բախտը սրտի համար միևնոյնն է, ինչ որ արևը այն ծաղիկների, որոնք ծաղկում են ու ապրում միայն մի օր.. եթէ գալու է—կգայ։

Զխօսենք բախտի մասին, որին մենք ծարաւի ենք, չխօսենք նրա մասին... Նա վախկոտ է, ինչպէս թռչնիկը։ «Բագ. Ձայն»

Կազիմիր—Տետմայերից

ԿՈՅՐԻ ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹԻՒՆԸ

Երեկոյ էր։

Սայլակը դանդաղ առաջ էր ընթանում, իսկ ծերուկ սայլապանը մեղմ ձայնով երգում էր։ Խեղճ ձին արդէն յոգնել էր։ Երևի երկար ժամանակ էին նրանք ճանապարհին։ Նստած պատանին դարձաւ դէպի կառոցը և հարցրեց.

—Մայրիկ, առաւօտ է, թէ՞ երեկոյ, աղէն հով է, ծածկիր ինձ։

—Երեկոյ է, զաւակս. շուտով կը հասնենք։

—Ախ, մայրիկ. եթէ ճիշտ է այդ բոլորը, ուրեմն ես շուտով քեզ·կը տեսնեմ, վերադարձին այս միևնոյն ճանապարհը կտեսնեմ։ Մայրիկ, մի՞թէ կարող է այդպիսի բաղդ լինել.. Չեմ հաւատում։

—Օ՛, որդեակս, Աստուած կը բարկանայ. ինչպէս կարելի է չհաւատալ։ Ների՛ր, Տէր, նա երեխայ է։

Եւ դիմեց նորից որդուն։

—Պէտք է հաւատալ. կարող է Աստուած և պատժել, և ներել, նա ի՛նձ պատժեց, հիմա էլ կը ներէ։

Մինչ մայր ու որդի այդպէս խօսում էին,

կառապանը դարձաւ և պատմեց, թէ ինչպէս ինքը իր միևնոյն սայլակով 3 հիւանդ է տարել, որոնք վերադարձին չեն էլ ուզեցել սայլ նստել, այլ վազելով են քաղաք հասել։

—Այս սուրբը շատ զօրաւոր սուրբ է,— աւելացրեց կառապանը։

Կոյր պատանին սայլակում նստած նիրհում էր։ Եւ քաղցր երևակայութիւնը նրան շոյում էր։ Մտապատկերները մէկը միւսին փոխարինում էին։

«Այն սարսափելի օրւանից եմ ես կոյր... մուրացկան,—մտածում էր նա,—թուք, մուր, քաղց-ծարաւ տանող կեանքի խորթ զաւակ... և ոչ ուշ քան վաղը՝ կլինեմ հպարտ պատանի։ Վաղը կտօնեմ տանջանքներիս վախճանը և պատւիս, ինքնասիրութեանս վերածնումը...»։

Հասան ս. ժայռին։

Մայրը ծնկաչոք աղօթում էր, երեսը յատակին քսում... մոմեր վառում...

—Ահա՛, որդի. երեսդ քսիր այստեղ, աղաչիր Աստուծուն, որ լսէ քեզ։

Եւ վերցնելով մի բուռը հող՝ ածեց որդու աչքերը։

Քիչ անց, յանկարծ որդին բացականչեց.

—Մայրիկ, մայրիկ, որքա՜ն փոխւել ես. իմ

խեղճ մայրիկ, բոլորովին ծերացել ես։ Այդ ինչ է մայրիկ, ջուր է հոսում։

Մայրը քարացել էր, կանգնել. չէր իմանում՝ որդուն գրկի ու սեղմի կրծքին, թէ ուրախութիւնից լաց լինի…

Հրաշքը կատարուել էր…

Մի քանի ժամ տևեց այդ դրութիւնը։ Լուսինը սկսեց գունատուել, դալկանալ և կառապանը մօտեցաւ ու յիշեցրեց, որ եթէ ուզում են կէս օրին հասնել քաղաք, պէտք է ճանապարհուեն։

Այնտեղ միայն յիշեց մայրը իր դառն վիճակը…

«Տէր—Աստուած,—մտածում էր նա.—մինչև հիմա սա կոյր էր, մուրացկանութեամբ ապրում էր. մարդիկ ողորմում էին կոյրին… իսկ այժմ… կերթայ, կաշխատի, իսկ ինձ որդեօք կօգնէ՞, ինչո՞վ պէտք է ապրիմ ես այսուհետև…»։

Մինչ նա այսպէս երկմիտ մտատանջութեան էր մատնուած, որդին նորից կորցրեց իր աչքերի լոյսը…

Լսւեց մի սրտաճմլիկ, աղիողորմ ճիչ…

Դառն կերպով հեկեկում էր թշուառ պատանին։

Նա դարձեալ կոյր էր, կոյր մուրացկան…

Օլգա Տէր-Աւագեան

ՍԱՆՁԱՀԱՐՈՂ

(Ֆրանսերէնից)

Մի երեկոյ, երբ ազատ էի, կրկէս գնացի։ Կարգը հասաւ ծրագրի վերջին համարին—առիւծներին սանձահարելուն։

Ասպարէզ դուրս բերին մի մեծ երկաթէ վանդակ։ Նրա մէջ արագ-արագ ճեմում էին երեք հատ հիանալի, ջահել առիւծներ, որոնք արձակելով մի խուլ մռնչոց, բաշերն էին թափահարում և աչքերը ցոլացնում. Նրանք, ինչպէս երեւում էր մտածում էին իրանք իրանց։ Նայելով նրանց զանազան տեսակ մռնչալու եղանակին, կարելի էր հասկանալ, որ այդ մտածութիւնները զանազան տեսակ նիւթերի մասին էին։

Վանդակի շուրջը շփոթուած՝ ման էր գալիս կրկէսի ծառան և կարծես թէ ուզում էր ասել.

—Հանդարտ, հիմա դուրս կը գայ սանձահարողը։

Նրանք, կարծես, ուշադրութիւն չէին դարձնում նրա վրայ և շարունակում էին իրանց բարձրաձայն մտածողութիւնները։ Մէկն ասում էր.

—Ո՞վ կը համարձակուի հրամայել ինձ։

Ո՞ւմ առաջ կը խոնարհեցնեմ գլուխս և ում վրայ ծանկերս չեմ սրիր։ Ես այստեղից դուրս կը փախչեմ, կարծես թէ ինձ միայն տեսած լինէին։ Կը ջարդեմ բոլոր նիգերը, կը հասնեմ հեռու հայրենիքս—խաղաղ անապատին։ Այնտեղ, որտեղ վիթերը, որոնցով ես փորս կը կշտացնեմ. ջուր են խմում առւակից, որտեղ և ծարաւս կը յագեցնեմ. ինձ սպասում են տաք աւազի վրայ գլորւելով, մատաղ էգ առիւծները մետաքսանման բրդով, կանաչ կրակով վառւող աչքերով։

Ես կարձակեմ ուրախութեան և կրքոտ սիրոյ ձայն, և իմ ձայնիս արձագանք կը տայ նա, որ սիրում է ինձ։ Մենք երկուսս միասին կերթանք ընդարձակ անապատով, արևից խանձւելով, հպարտ, երջանիկ և ազատ։ Անձնատուր լինելով կրքոտ և վայրենի սիրոյ առաջին հիացման, լիզելով յաջող որսի արիւնաներկ շրթունքները, մենք քաղցր կը քնենք, և միայն լուսինը, վախեցած և հիացած, անամպ երկնքից կըսկսի դիտել անապատի արքայական զոյգի երջանիկ քունը։

Միւսն աւելի ևս սուր եղանակով էր կաղմում իր յատակագծերը.

—Ո՞վ է մտածում հպատակեցնել ինձ։ Ո՞ւմ

առաջ կը խոնարհւի իմ հպարտ պարանոցը։ Այս բոպէիս կը բռնեմ վանդակապատը, կողպէքները և աւելի հեշտ կը կրծոտեմ, քան երեխան՝ ընկոյզը։ Բայց ես չեմ հեռանալ դէպի անապատի խաղաղութիւնը և հանդարտութիւնը.—ես կը վազեմ քաղաքները, որտեղ իմ եղբայրակիցներս մաշւում են գերութեան մէջ, որտեղ համարձակւում են նրանց դուրս բերել՝ միայն զւարճանալու համար։ Ես կը քանդեմ բոլոր վանդակները և կազատեմ դժբախտ կաշկանդեալներին։ Մենք կը դառնանք տասնեակներ, հարիւրներ, հազարներ. և միայն այն ժամանակ, երբ ողջ երկրագնդի երեսին ոչ մի բանտարկւած առիւծ չի լինիլ, միայն այն ժամանակ կը վերադառնամ հայրենի երկիրս ազատւած և ազատարար, ուրախ սրտով և փառքով շրջապատւած, այն յաղթութիւնը տանող թագաւորի նման, որ վերադառնում է հայրենիք՝ յաղթութիւն տանող ժողովրդի գլուխը կանգնած։

Ներոնդը բոլորովին ուրիշ բանի մասին էր մտածում։

—Աւելի լաւ է, թող չաշխատեն ինձ ճընշելու։ Ի զուր տեղը ժամանակ կորցրած կը լինեն։ Ոչ մի հայեացք չէ կարող ինձ շւարեցը-

նել: Իմ ուժեղ թաթիս մէկ հարուածով ես կը-
տոր-կտոր կանեմ և փայտ, և վանդակիս եր-
կաթը. բոլորը տաշեղ և փոշի կը դարձնեմ:
Բայց ես ձգտում եմ ազատութեան ոչ թէ սի-
րոյ համար, ոչ թէ ճնշուած եղբայրների ազա-
տարարի փառքին հասնելու համար, ոչ, դա
բոլորովին հեռու բան է: Ես կը հասնեմ ա-
մենահեռու անապատը, որ ոչ մարդիկների և
ոչ առիւծներին է յայտնի. այնտեղ ես կըսկ-
սեմ ապրել մենակ, դիտելով իմ շուրջս ան-
սահման ծովը, անապատը և երկինքը: Ես հայ-
եացքովս միայն աստղերի հետ կը խօսակցեմ:
Վերջապէս, ծերանալով այս դիւթիչ անսահմա-
նութեան մէջ, ես կը մեռնեմ, գլուխս դնելով
թաթերիս վրայ, արևի մայր մտնելու ժամա-
նակ:

Կարծեմ այսպէս էին մտածում այս երեք
ջահել առիւծները, վանդակի մէջ կաշկանդուած,
որ դրուած էր կրկէսի հրապարակի մէջտեղում,
երբ յանկարծ բացւող դռան սեմի վրայ երևաց
սանձահարողը:

Նա աչքի չէր ընկնում ոչ ուժով, ոչ գե-
ղեցկութեամբ. նա նիհար էր, դժոյն, յոգնած,
հագած էր տրիկօից հագուստ՝ փայլուն զարդե-
րով: Աջ ձեռքում նա բռնած ունէր մի փոք-

րիկ մտրակ, որ մի փոքր շան հազիւ կարող էր
վախեցնել:

Բայց այդ երեք վայրենի առիւծները նը-
րան տեսան թէ չէ՝ իսկոյն դադարեցին մըռ-
մռալուց և պոչերը հուպ տալով, քաշւեցին հա-
կառակ անկիւնը: Կարծես, մի րոպէ նրանց
աչքերը վառւեցան բարկութեան կրակով, բայց
նա շարժեց մտրակը, և նրանք հանդարտեցին:
Այդ մտրակի շարժելով էր, որ յետոյ նա ըս-
տիպեց նրանց թռչել պատնէշների վրայից և
օղակների միջով:

Նա, որ փափագում էր, սիրահարուած վայ-
րենի էգ առիւծի արիւնաներկ շրթունքները
լիզել, հիմա լիզում էր սանձահարողի ձեռքերը:
Բոլոր առիւծներին ազատելու յոյս ունեցողը՝
լաւ վարժւած շան նման կծեց իր ընկերներից
մէկին, որ չը կարողացաւ ժամանակին թաթը
պարզել իրան, իսկ արևի մայր մտնելը դիտե-
լով մեռնել ցանկացողը՝ բոլոր մարմնով դողաց
անգնդակ լցրած ատրճանակի տրաքելուց:

Վերջապէս ներկայացումը վերջացաւ:

Սանձահարողը վանդակից դուրս գալու
ժամանակ առիւծներին տւեց մի-մի կտոր միս:
Նրանք, սեղմելով միսը թաթերի մէջ, մեռած
հայեացքով սկսեցին լափել, կարծես, բոլորովին
գոհ իրանց վիճակից:

Արդեօք միւնոյնը չի՞ լինում մարդկանց հետ։ Այս երեք առիւծները արդեօք երիտասարդութեան երեք հիանալի ցնորքները չէ՞ն.— կրքավառ սիրոյ, փառքի, ծարաւի, բարձր գաղափարների։

Բայց . . . . . հարկաւոր է ուտել։

Սանձահարողը՝ դա կեանքն է։

Գ. Սիւրէնեանց

ՄԵՂՒԱԲՈՒԾԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

(Բառաշմնյառէր)

1. Մեղուապահ չը դառնալ—եթէ այդ գործին ձգտում չունիս։

2. Սկզբում մի անգամից շատ մեղուի ընտանիքներ մի ձեռք բերիլ։

3. Մի հրապուրւիր այն մտքով, թէ մեղուները ծախս ու հոգս չեն պահանջում և հէնց առաջի տարին ծախսած դրամը յետ կստանաս։

4. Չը մտածես, թէ կարելի է եօլա գնալ առանց մեղուաբուծական կարևոր իրերի և գործիքների։

5. Չը մոռանաս գնել լաւ մեղուաբուծական ձեռնարկ և ստորագրուել լուրջ թերթի։

6. Մի հաշւիր թէ դէն շպրտած է այն դրամը, որ խելացի կերպով ծախսել ես մեղուանոցի վրայ։

7. Հռչակւելու համար մի հնարիլ նոր տեսակի փեթակներ, իրեր ու գործիքներ։

8. Դու ինքդ շատ փորձեր մի կատարիր, այդ թող նրանց, որոնք քեզնից աւելի հմուտ ու ձեռնհաս են և դրա համար միջոցներ շատ ունեն։

9. Առանց անհրաժեշտ կարիքի ձեռք մի տալ բնի շրջանակներին։

10. Արհեստական չէչ ձեռք բերելու համար խնայողութիւն մի անիլ։

11. Փեթակներ մի գնիլ այնպիսի շրջանակներով, որ հմուտ մեղուապահներից համարուած չի ամենալաւը։

12. Մի թողնիլ մեղուներին շինելու չափից դուրս շատ բոռի հացեր։

13. Մի խեղդիլ մեղուներին չափից դուրս ծխելով. խելացի կերպով գործածած մի փոքր քանակութիւնն էլ լիովին նրանց հանդատացընում է։

14. Մի ծաղրիր նրանց, որոնք մեղուների հետ բանելիս գործ են ածում երեսի քող, խայթելուց ազատ մնալու, համ էլ գայրացած մեղուներին չը փչացնելու համար։

15. Ստէպ ստէպ փեթակներում շրջանակները տեղհան մի անիլ և մեղրով շրջանակները բաց օդում մի թողնիլ։

16. Մեղուներիդ մի կողոպտիր.

17. Մի ծախիր այն մեղրը, որ դուրսալի տեսք չունի. դա վնասում է մեղրի վաճառմանը։

18. Մի մոռանալ աշունքը, ընտանիքներին, երկար ձմեռը անցկացնելու համար, պատրաստել մեծ զգուշութեամբ։

19. Արկանոցները ձմեռը մի փոքրացնիլ։

20. Գարունը ամենից առաջ քննիր՝ կա՞յ արդեօք փեթակում մայր մեղու և բաւականաչափ մեղրի պաշար։

21. Թոյլ ընտանիքներին մի խնայիր և աւելի լաւ է նրանցից 2—3-ից կազմել մի ուժեղը։

22. Աշխատիր քո ծանօթների ու ցանկացողների շրջանում տարածել կանոնաւոր մեղուապահութիւն ու սիրով հաղորդակից արա նրանց քո փորձառութեամբ ձեռք բերածները։

Թարգմ. Յ. Յովհաննիսեանց

ԹՌՉՆԱԲՈՒԾՈՒԹԻՒՆ

(Ըստ պ. Ն. Ելագինի)

Շատ փորձերով հաստատուած է, որ մինչև անգամ սակաւաթիւ թռչուններ պահողները, չնայելով ինչպէս էլ որ պահելու լինեն, միշտ շահ կունենան, որի շատ կամ քիչը կախուած կլինի նրա պահելու եղանակից, կերի թանգ կամ էժան լինելուց, ձուի թռչունի (կենդանի կամ մորթած) և փետուրի ծախելուց և այլն. ընդունենք որ ամէն ծախսը անելուց արդիւնք մնայ 1 կոպէկ, դա էլ փող է. հապա ինչ արժէ այն առաւելութիւնը, որ թէ ինքդ ու երեխայքդ կարող էք ուտելու համար ունենալ միշտ թարմ ձու և առողջ ճուտ կամ հաւի միս:

Ով ունի միջոց, համբերութիւն և գործի հմտութիւն, նա վստահաբար կարող է տնտեսութեան այս ճիւղը աւելի ընդարձակ ծաւալով պահել. որքան շատ լինի թռչունների թիւը, համեմատաբար արդիւնքն էլ շատ կլինի, իսկ ծախսը և ժամանակի կորուստը աւելի պակաս կլինի:

Բերենք մի քանի օրինակներ. մի տնտեսութեան մէջ պահուած 10 սագի ճտերի, փետուրի և ձուերի ծախելուց, մի տարուայ ընթացքում,

ամէն ծախսը հանած զուտ արդիւնք է մնացել 12 ր.: Մի ուրիշը ունի 44 հաւ, 17 հնդկահաւ, 12 սագ և 60 բադ. սրանց պահելու բոլոր ծախսը դուրս եկած տարեկան զուտ արդիւնք է ունեցել 100 ր. և այսպէս օգուել է նա 12 տարի շարունակ:

Մի տնտեսութեան մէջ ուր պահում էին միայն 60 հաւ, ստացւում էր տարէնը զուտ արդիւնք 112 ր 40 կ. ուրեմն ամէն մի հաւը տալիս էր մօտ 3 ր. արդիւնք:

Սրանց նման բազմաթիւ օրինակներ կան, որոնց հաշիւը շարունակաբար ստացւում է երկրագործական դեպարտամենտում, և այս օրինակները բերուած են մեծ քաղաքներից հեռու եղած գիւղերի տնտեսութիւններից, իսկ եթէ թռչնապահութեամբ պարապեն մեծ քաղաքների շրջակայքում, ի հարկէ զուտ շահումը աւելի շատ կլինի, որով ձուն, վաղահաս ճտերը կամ գիրացրած հաւերը ու ամորձահատուած աքաղաղները (կապլուն) աւելի բարձր գնով կըծախուեն քան թէ գիւղերում ու այսպիսի տեղերում կան շատ ընտանիքներ, որոնք միմիայն թռչնապահութեամբ պարապելով նրա տուած արդիւնքովը կարողանում են չափաւորապէս ապրել:

Օրլովկա գիւղում (Նովգորոդի նահ.) մի տնտեսութեան միջից արտահանում են Մոսկըւայի և Պետերբուրգի շուկաները տարեկան մինչև 3000 գիրացրած հաւեր. հէնց այստեղ էլ 1903 թւի բացւել է ռուսական թռչնաբուծական գործնական առաջին ուսումնարանը։

Արրաշեւ «Птицеводство» գրքում յիշւում է մի ժրաջան թռչնապահ տիկնոջ անուն (Մավրա Սէմէնովնա Սէմէնովա), սա մեռնելիս իր ժառանգներին թողեց 40,000 ր., որը գանձել էր միմիայն թռչնապահութեան արդիւնքներից, և աւելացնում է, որ Պետերբուրգի Մարինսկի շուկայի առեւտրականներից գեռ ես կան կենդանի շատերը, որոնք հաստատում են որ Մավրէն պահում էր միմիայն 500 հաւ և ոչ աւել։

Ն. Ս.

ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹԻՒՆ

Ընտանի անասունների յաճախ պատահող հիւանդութիւնների առձեռն բժշկութիւնր

1. Արիւնահոսութեան դադարացնելը

Եթէ այս հիւանդութիւնը թեթև է, դրան շատ է օգնում լւանալ սառը ջրով կամ քացախախառն ջրով. իսկ սաստիկ արիւնահոսութեան ժամանակ ամենակարուկ միջոցն է գործադրել կիսաքլոր երկաթի ջրախառն լուծւածքը (Լիքօռ ֆեռրի սեսքիխլորատա), այս հեղուկում թրջել գզւած վուշի կամ բամբակի բաւականաչափ մի գունդ ու դնել այդ վէրքի վրայ և, եթէ յարմարութիւն կայ, մի լաթով կապել որ վայր չընկնի։

Եթէ արիւնահոսութիւնը ռնգերից է, պէտք է վէրքի տեղից քիչ բարձրից պինդ կապել. որանով արիւնը իսկոյն կդադարի։

2. Մակաբոյծներ

(Ոջիլ, մուն տիզ և այլն.)

Կենդանուն (լինի նա կով, հորթ, խոզ, աւանակ և այլն) իրեն վրայ զանազան պատճառներից գոյացող մակաբոյծներից ազատելու և նրանց իսպառ ոչնչացնելու համար ամենա-

լաւ միջոցներից մէկն է նրա մազերը տակից խուզել ու յետոյ քսել ամբողջ մարմինը 1 մասը բենզին 6 մասը ձէթի հետ խառնած հեղուկ. իսկ եթէ եղանակի ցրտի պատճառով չուզենաք խուզել, այդ դէպքում պատրաստելու է բորակի (поташъ) պինդ լուծուածք, մանրաբերան սանրը, նրա մէջ թաթախել ու խնամքով սանրել և ամեն սանրելիս սանրի բերանը մաքրել. նոյն հեղուկի մէջ թաթախել ու կոշտ վրձինով սանրի ատամները պէտք է ազատել նրանց մէջ մտած ոջիլներից կամ մուներից. այդ հեղուկը նրանց իսկոյն սպանում է։ Երբ հաւաստիանաք թէ անասունի ամբողջ մարմինը լաւ սանրուել է, պէտք է քսել նրա մարմինին 1 մաս կանաչ սապոն և 3 մաս վերոյիշեալ բորակահեղուկի լուծուածք և 24 ժամ յետոյ կոշտ վրձինը՝ թաթախելով գարջ (գոլ) ջրի մէջ լաւ մաքրելու ամբողջ մարմինը, կամ թէ քսել վերը յիշուած 1 մաս բենզինի և 6 մաս ձէթի լուծուածք։ Լաւ է օգնում մակաբոյծներին ոչնչացնելու համար նաև կրէօլինը, խառնած 3% ջրով. սրանով լողացնում. սա շատ զօրեղ դեղ է և անասունին բոլորովին անվնասակար է։ Որև է դեղ մարմինին պէտք է լաւ քսել, առանց մի տեղը բաց թողնելու և կրկնել ու նոյն գործը չորս

օրից յետոյ, որպէս զի այդ ժամանակամիջոցում մակաբոյծի անիծից (ձուերից) գոյացած ոջիլները իսպառ կոտորուին։

3. Հորթերի և խոճկորների լուծը

Եթէ լուծը թեթև տեսակից է և նշաններից իմացւում է որ մրսելուց է առաջացել, շուտով պէտք է հիւանդ անասունին տաք տեղ պահել և խմացնել օրը մի քանի անգամ լորձունաւոր հեղուկ, այն է՝ կամ խաշած կտաւհատի հունդի ջուր և կամ թէ փիփերթի (բալբա, մոլոշ, կըտատի, (Альтеи) արմատի խաշած ջուր. ու քսել հիւանդի փորին օղի կամ ցնդուող օծանելիք (Летучая мазь)։ Իսկ եթէ նկատւի որ լուծը առաջացել է անմարսողութիւնից, որից հիւանդի կղկղանքը լինում է թթուած և ունենում է սուր հոտ, այդ դէպքում վերը յիշուած խմելիքի մէջ խառնել լաւ փոշիացրած կաւիճ, հորթերին ամեն անգամ տան այս հեղուկից թէյի մի լիքը գդալ, իսկ խոճկորներին—դրա կէսը։

Եթէ լուծը չը կտրւի, այլ աւելի սաստկանայ, հորթերին տալ 4 գրամ խշխունի (Ревень) արմատ փոշիացրած, $1^1/_2$ գր. ածխաթթուատ մագնեզիա և $^1/_3$ գր. ափիօն, խառնելով հացի 2 գդալ օղու հետ և կամ թէ լորձունաւոր խը-

մեղքի հետ խառնում են օրը 3—4 անգամ 1/8 գր. տինկտուրի աֆիոն և կամ թէ օրը երեք անգամ հոքնայի (կլիստիր) միջոցով ներարկում են հիւանդի ուղիղ աղիքի մէջ 2 լիտր գոլ ջուր, որի հետ խառնելու է մարգանցաթթուակալի այնքան, մինչև որ ջուրը բաց կարմիր գոյն ստանայ:

Բ. ԵՂՋԻՒՐԱՒՈՐ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ՏԿԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

4. Լուծը կտրելու դեղեր

300 գրամ գլաուբերի աղ լուծել մի լիտր կտաւհատի հունդի խաշած ջրի մէջ ու լցնել տկար կենդանու փորը. եթէ 8 ժամւայ ընթացքում դէպի լաւը նշաններ չերևացին, նոյնը կրկնելու է:Կամ 60 գրամմ սովորական ծխախոտը 2 լիտր ջրում եփում, որան քամելուց-պարզացնելուց յետոյ մէջը լցնում են 50 գր. կերակրի աղ և այս միանգամից են բերանը լցնելու, եթէ չազդեց, 24 ժամից յետոյ նոյնը կրկնելով անպատճառ հիւանդութիւնը կանցնի:

5. Կովերի կուրծի բորբոքումն

Կուրծի բորբոքումն ըստ մեծի մասին առաջացնում են մանրէները. շատ քիչ դէպքերում պատահում է կոշտ առարկաներին ուժգին

կպչելուց կամ անզգոյշ հարւածից, որով քընքուշակազմ կուրծը վնասւում է, այդ պատճառով էլ կուրծի բորբոքումը շատ անգամ լինում է վարակիչ: Կուրծի բորբոքւած մասը ուռչում, կարծրանում ու ցաւ է պատճառում անասունին, երբեմն էլ կուրծքը մինչև անգամ կարմրում է. հիւանդ ծծերից այլևս կաթ չէ ստացւում, ցաւը ազդելով առողջների վրայ, կաթը սակաւանում է: Տկար մասի ծծերը կթելիս նրանցից ծորում է դեղնաւուն շիճուկ—կտրւած կաթի (կազէինի) բրթուճներով խառն: Անասունի ախորժակը պակասում է:

Հիւանդութեան նշանները նկատելիս պէտք է ցաւագար մասերի վրայ առաջին երկու օրերը դնել տաքացնող դեղեր, այն է՝ տաքացըրած բորակի լուծւածք (5 գրամմ բորակ 1 լիտր ջրում բաց արած), իսկ հետևեալ օրերին օրը մի քանի անգամ նոյնը կրկնել և պահել դեղը կուրծի վրայ մի քանի ժամ շարունակ: Ջրի տաքութիւնը լինելու է 39° Ռ. և զգոյշ մնալ, որ այդ տաքացնողը թրջոցը (припарка) դնելուց յետոյ կուրծը չը մրսացնել:

Ամեն անգամ թրջոցը վերցնելուց յետոյ նոյնպէս և հետևեալ օրերին կուրծին պէտք է քսել ալիւրից պատրաստած թանձր շփոթ ու

ծածկել վրան բամբակի բարակ շերտերով, իսկ տկար անասունի մէջքը ծածկել բրդէ փալասով, որը երկու կողքերից բաւական ցած կախւած լինի. սրանով կուրծը կը պաշտպանւի դրսի ցուրտ օդից կամ քամուց։

Տկարացած կուրծի մասի ծծերը առաջի երկու օրերում ժամը մի անգամ պէտք է լաւ կթել, իսկ հետևեալ օրերում օրը մի քանի անգամ միայն։

Անասունը եթէ կապ լինի պէտք է խմացնել կէս—1 ֆունտ գլաուբերի աղ, լուծած գոլ ջրում, եթէ լաւ չազդեց, նոյնը կրկնել երկրորդ օրը։ Անասունին պէտք է այնպիսի տեղում պահել, որ օդի միջանցիկ հոսանքից պաշտպանւած լինի։ Տաքացնող կապոցը աւարտելուց յետոյ անասունի տակը փռելու է բաւական հաստ շերտով չոր ծղօտ կամ խոտ։ Եթէ տաքութիւնը և ցաւը անցնելուց յետոյ կուրծի տկարացած մասերի պնդութիւնը անցած կըլինի, պէտք է 1—2 շաբաթ շարունակ, ամեն օր լաւ տրորելով քսել այդ պինդ մասերի հաւասար չափերով կանաչ սապոնի և մանանեխի իւղից (միայն թէ կծւած չլինի) շինած օծանելին։

Յաջող դեղ է համարւում այս ցաւի դէմ նաև կամֆօրի կամ կրէօլինի օծանելիքը։

Կուրծի բորբոքման նախազգուշութեան ամենից լաւ միջոցը այն է, որ ծնելուց յետոյ, առաջին օրերը, կովի կուրծը պաշտպանւի մըրսելուց, որը կարող է առաջանալ միջանցիկ քամուց կամ գոմի սառ յատակից և հէնց կուրծի մրսելուցը, որից, ինչպէս վերը յիշեցինք, ըստ մեծի մասին առաջանում է բորբոքումը։ Խորհուրդ է տրւում տկար անասունին զատել առողջներից. ամենից յետոյ նրանց կթել և ամեն զգուշութիւն բանեցնել, որ տկարի կաթը որ և է առիթով չը կպչի առողջ կովի կուրծին։

6. Կուրծի ջարդւածքը և վէրքերը

Թեթև ջարդւած կուրծը ըստ մեծի մասին շատ է ուռչում, ցաւ է պատճառում, տաքանում է և կարմրում. սրանից ջարդւած տեղը ժահրակալում, երբ ժահրը հասնում է, դուրս է գալիս կամ կուրծի վերնամաշկից և կամ թէ մնում է կուրծի ներսում եղած կաթնատար խողովակների մէջ և կթած ժամանակը կաթի հետ պտուկներից է դուրս ծորում։ Բորբոքումը անցնելուց յետոյ կարող են կաշւի վրայ ծակոտիներ (фистула) գոյանալ։ Կուրծի վէրքը շատ անգամ տարածւում և ամբողջ կուրծն բռնում, մանաւանդ եթէ վիրաւորւած են ոչ թէ

կուրծի վերնամաշկը միայն, այլ նրա ներքին կազմուածքի գեղձերը, որից յաճախ, ինչպէս վերը յիշեցինք, կարող են առաջանալ կաթնածոր ծակեր:

Այս ցաւը բժշկելու համար մի քանի օր շարունակ վիրաւորուած մասի վրայ պէտք է դնել բորակի լուծուածքի տաքացնող թրջոց (припарка) 4 գր. պօտաշ լուծել մի լիտր ջրում): Գիշերները վիրաւորուած տեղին մաժելով քսել մանանեխի (խարդալ) իւղ: Վէրքերը անպատճառ պէտք է կանոնաւորապէս ախտահանել, և եթէ կարիք լինի մինչև անգամ կարել:

Եթէ վէրքերը ժահրակալեն հարկաւոր է ամէն օր նրանց լուալ կարբօլեան թթուտով և կամ կրէօլինի ջրով:

Այն պտուկը, որից ինքն իրեն կաթ է թափւում, կարելի է պտուկի վրայ հագցնել ռետինէ ծծուկ (սօսկա), միայն ծայրը քիչ կտրելու է:

Եթէ պտուկների արտաքին մաշկը ճաքճաքւի կամ կոշտանայ պէտք է նրան օրը մի քանի անգամ ջրով լուանալ, քսել մանանեխի իւղ և գոմում, տկար կովի տակը փռել չոր յարդ կամ խոտ, որպէս զի անասունը նստելիս կուրծը և պտուկները չաղտոտուեն:

Ն. Ս.

ԿՕՕՊԵՐԱՑԻԱ.

Գիւղական տնտեսութեան մէջ փողի պակասութիւնն ու նեղութիւնը սովորական, համարեա անխուսափելի մի բան է: Շատ ժամանակ գիւղացին ոչ մի հնարաւորութիւն չունի փող ճարելու: Իսկ եթէ մի կերպ ճարում էլ է, ինչպէս այդ բոլորին յայտնի է հեշտութեամբ թաղւում է պարտքերի մէջ և քայքայում իր տնտեսութիւնը:

Դրա առաջն առնելու ու պաշտպանելու համար կօօպերացիան ահա հրաւիրում է բոլոր գիւղացիներին կազմել մի վարկի (կամ փոխատու-խնայողական—դոքա համարեա միևնոյն բաներն են) կօօպերատիւ ընկերակցութիւն:

Գիւղացիներից ամէն մէկը, ինչքան էլ աղքատ լինի, ձեռքը փող ընկած ժամանակ (աշխատավարձն ստանալուց յետոյ) միշտ կարող է մտցնել ընկերակցութեան դրամարկղը որոշ, ոչ շատ մեծ, անդամավճար: Իսկ եթէ մէկի համար դժւար է միանգամից տալ ամբողջ անդամավճարը, թոյլ է տրւում մաս-մաս վճարել: Այդ փոքրիկ զոհողութիւնների փոխարէն վարկի ընկերութիւնը հարիւրներով կը հասուցանէ գիւղացուն:

Փողի խիստ կարիքի րոպէին, օրինակ, գարնանը, երկրագործական աշխատանքների ընթացքին, գիւղացին էլ կարիք չունի վազելու վաշխառուի մօտ։ Գիւղացին ապահով գնում է իր վարկի կօօպերատիւ ընկերութիւնը և ինչպէս նրա անդամ, կանոնադրութեան հիման վրայ, վերցնում է, ի հարկէ որոշ բայց փոքրիկ տոկոսով, իր համար պէտք եղած գումարը։

Կօօպերատիւ օգնութեան գործը հասկանալի կը լինի, եթէ յիշենք մեր հին առածը— «գիւղը որ կանգնի, սար շուռ կտայ». գիւղացիների անդամավճարների փշուրներից կօօպերատիւ դրամարկղում այնպիսի մի գումար է գոյանում, որով կարելի է, ժամանակաւոր կարիքի դէպքում, մինչև իսկ ամբողջ գիւղական տնտեսութիւնը պահպանել։

Այդպիսի վարկի կօօպերատիւ ընկերութիւնը նրա համար չէ հիմնւում, որ փողը շահեցնի, ինչպէս վաշխառուներն են վարւում, և ոչ էլ նրա համար, որ կեղեքի գիւղացուն՝ օգտւելով նրա կարիքից ու անհրաժեշտութիւնից։

Այդ ընկերութիւնը հիմնւում է նրա համար, որ համերաշխ ջանքերով գիւղացիք կարողանան իրենք իրենց օգնել, մէկ մէկու ձեռք մեկնելով ու տնտեսական ծանր րոպէներին օգնութեան հասնելով։

Ամեն մի գիւղացի, հէնց որ մտաւ այդ ընկերութեան մէջ, արդէն դառնում է կօօպերատոր։ Այդ րոպէից սկսած նա արդէն դառնում է այդ ընկերութեան տէրերից մէկը։ Ընդհանուր ժողովներում նա միւս անդամների հետ միասին կարող է ընկերութեան համար կանոններ հիմնել, ընտրել կառավարելու համար վստահելի անձնաւորութիւններ։

ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԿՕՕՊԵՐԱՑԻԱ

Եթէ կարելի լինէր մի կօօպերատիւ ընկերութեան միջոցով և՛ փող պարտք տալ ձեռնտու պայմաններով, և՛ գնել, և՛ ծախել ամեն մի բան , սկսած գիւղատնտեսական մեքենաներից մինչև կօշկեղէնը, շաքեղէնն ու ծխախոտը, այն ժամանակ ի հարկէ մի կօօպերատիւը մի գիւղի համար բաւական կլինէր, նա ամեն ինչ կանէր։

Բայց մինչև հիմա ոչ մի տեղ դեռ այդպիսի ընկերութիւն չկայ։ Մեր օրէնքների համաձայն, հէնց փորձի հիման վրայ էլ, այդ ծառայութիւնները անում են առանձին կօօպերատիւ ընկերութիւնները, ամեն մի տեսակ կարիքի համար հիմնւում է առանձին ընկերութիւն։ Այսպէս օր. մեր օրէնքի համաձայն,

գիւղատնտեսական ընկերութիւնը, առանց զ-
բաղման տուրք (Промысловый налогъ) վճա-
րելու, կարող է ծախել իր անդամներին միայն
այն բաները, ինչ որ նոցա պէտք են գիւղա-
կան տնտեսութիւնը վարելու համար: Իսկ եթէ
ուրիշ բան էլ ծախելու լինի, նա պիտի վեր-
ցնի առևտրական վկայական (патентъ) ինչպէս
բոլոր միւս վաճառականները:

Ահա այդ կարիքն էլ բաւարարութիւն է
տալիս գիւղական կօօպերացիայի երրորդ տե-
սակ գիւղական սպառողական ընկերութիւնը:

Գիւղական կեանքի թանգութիւնն է, որ
ստիպում է հիմնել սպառողական ընկերութիւն-
ներ:

Կեանքը հիմա էլ թանգ է, բայց օրէց օր
աւելի դժւար է դառնում գլուխ պահելը: Կեն-
սական, անհրաժեշտ առարկաները արագ ու
խիստ կերպով թանգանում են:

Ինչ կուզես արա բայց ուտել պէտք է:
Մի փութ ալիւրի համար միշտ չի լինում քա-
ղաք գնալ և ակամայից, աւելի գնով առնում
ես քո «հարևան» նպարավաճառից: Իսկ նա
գիւղում—այժ է: Գիւղում եղած աւելի կոպէկը
նա ձեռքից բաց չի թողնի:

Գիւղացիք իրենք էլ տեսնում են թէ ուր

է հոսում գնում իրենց փողերը. գիւղում լաւ
են հասկանում, որ գրօշանոց բանը ծախում
են իրենց չլսւած գներով: Արիւն ծծող, ռըզ-
բոյնիկը են անւանում խանութպաններին, նըս-
տում իրենց դառն օրն լաց լինում ու չեն ի-
մանում, որ միանալով միմեանց հետ նոքա
կարող են խանութպանների կեղեքումներից
ազատւել:

Այդ միջոցն է ահա կօօպերատիվ սպառո-
ղական ընկերութիւնը: Բոլոր գիւղացոց էլ պէտք
է ամենօրեայ սպառման, գործածման համար
թարմ և արժան ապրանք: Նոքա չեն ուզում ոչ
ոքի աւելորդ մի կոպէկ տալ և հասկանում են
ընդհանուրի համար գումարով գնելու օգտա-
ւէտութիւնը: Այդ նպատակների համար է, որ
բացւում են գիւղական սպառողական խանութ-
ներ:

Ի՞նչ օգուտներ կարող է տալ իր անդամ-
ակցերին սպառողական խանութը: Շատ մեծ
և տարբեր:

Նախ և առաջ դա էժանացնում է խանու-
թից գնողների ապրուստը: Ընկերութիւնը գը-
նում է մեծ գումարի ու քանակութեամբ ապ-
րանք, և այդ պատճառով էլ կարող է ամեն ինչ
ծախել շուկայի միջին գնով, այսինքն մանրա-

վաճառների գներից շատ աւելի ցած գնով։ Ընկերութիւնը աւելորդ փող չի վճարում գիւղական դալալներին, և սպառողական խանութը դրա համար էլ կարիք չունի դրանց տուածը ապրանքից դուրս բերել և գների վրայ գալ, ինչպէս որ այդ անում են խանութպանները։

Եւ վերջապէս որովհետև բոլոր անդամները հէնց իրենք խանութի տէրերն են, ուստի և սպառողական խանութը ոչ ոքի խաբելու կարիք էլ չունի։ Նա փչացած ապրանքը չի ծախիլ· և երբ գիւղացին գնայ սպառողական խանութ՝ նա համոզուած կլինի, որ ալիւրի մէջ կիր չի խառնած, իսկ բրինձի մէջ աւազ։

Ընկերութեան օգնութեան շնորհիւ սպառողական խանութը արագ կերպով ուժեղանում է ու առանձին խանութների առևտուրը կտրում։ Վերջիններիս մնում է՝ կամ իրենց գործը ուրիշ տեղ տեղափոխել և կամ փոխանակ փթած ապրանքը գիւղացու վզին կապելու, աւելի ազնիւ ու մաքուր զբաղմունք գտնել իրենց համար։

Եւ եթէ անդամները ամեն ինչ իրենց խանութում են գնում, արագութեամբ զարգանում ու առաջ է գնում «ընկերութեան խանութը», շուտով մինչև իսկ վաստակ էլ է մնում։ Այս-

տեղ էլ բանից դուրս է գալիս, որ խանութը ոչ միայն էժանացրել է ապրուստը և լաւացրել ապրանքը, այլ և մի քանի ուրիշ բան էլ է արել։ Կեանքն արդէն ցոյց է տուել, որ ամեն սպառողական խանութ, եթէ գործը լաւ է տարւում, կարող է որոշ վաստակ տալ բոլոր գնողներին և շատ ուրիշ տեսակի օգուտներ ու ծառայութիւններ անել։

Մանր խանութպանի ջանքերը ուղղուած են ամբողջովին—որքան կարելի է մեծ վաստակ ստանալու։ Իսկ ստացած վաստակը նա գործադրում է այնպէս, ինչպէս իր սիրտն ուզում է։

Իսկ երբ սպառողական խանութն վաստակ է ստանում· դրանից օգտւում է ոչ թէ մէկը· այլ բոլոր անդամները, այն բոլոր գնողները, որոնք իրենց առած—գնածով պահպանել են այդ խանութը։ Տարւայ վերջը հաշիւ են տեսնում—ով ինչքան ապրանք է գնել—եւ ստացած գումարի համաձայն իւրաքանչիւրին հասնում է վաստակի համապատասխան բաժինը։

Անդամների ցանկութիւնից է կախուած այդ գումարը իրար մէջ բաժանելը։ Բայց առհասարակ այդպէս չի արւում. սովորաբար այդ փողի մի մասն են վերցնում, իսկ միւս մասը թողնում են խանութի բարգաւաճման ու շրջառու-

թիւնը մեծացնելու համար։ Անդամների չնչին մասնիկներից կազմւում է բաւականին խոշոր գումար։ Այդ գումարներով խանութին կից հիմնւում են գրադարաններ, ընթերցանութիւն, դպրոցներ: Իսկ երբ փողը շատանում ու մեծ գումարների է հասնում, շինում են իրենց սեփական կոօպերատիւ արհեստանոցներ, այսինքն, այնպիսի արհեստանոցներ, գործարաններ և այլն, որոնց տէրը իրենք բոլորն են և ոչ թէ մէկ գործատէր—շահագործող։

Մի խօսքով, երբ մի տեղ հիմնւում է սպառողական կոօպերատիւ խանութ, և եթէ գործը հէնց սկզբից լաւ է տարւում, ընկերութիւնը հեշտութեամբ ընդլայնում է նրա օգտաւէտութիւնը, խնամքով ու գուրգուրանքով է վերաբերւում նրա յետագայ գոյութեան։

Բժ. Ս. Բուդաղեան

ՄԱԳՆԻՍԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹԻՒՆ

(Լեօնարդ գալլ)

Նոր մտքերի մէջ արտայայտւած այն ամենաթանկագին իղէան, որն առաջ է բերել մի որոշ հոսանք, դա ինքնաբժշկութեան կամ ուրիշներին բժշկելու առանձին եղանակն է՝ մագնիսական ոյժի գործադրութեան միջոցով, այսինքն ոգու ոյժի հոսանքով, որն անց է կացընում մագնետիզմը, որի ներգործութիւնը մարդկային օրգանիզմի վրայ այնքան մեծ է, որ նոյնիսկ դժւար է նկարագրել։ Մագնիսական հոսանքով բժշկութեան եղանակը գործադրւել է, ի հարկէ, զանազան ժամանակներում և շատ երկրներում, մի տեղ գիտակցաբար, իսկ մի ուրիշ տեղ էլ անգիտակցաբար, սակայն ամեն տեղ էլ այդ մեթոդի հետևորդները ձգտել են մի նպատակի—վերականգնելու օրգանիզմի խանգարւած գործողութիւնները և գրգելու կենսական ոյժերին դէպի աւելի արդիւնաւոր գործունէութիւն։

Հիւանդութիւնների գոյութիւնը համարւում է ամենալաւ ապացոյց այն բանի, որ օր-

գանիզմի մագնիսական ներդաշնակութեան մէջ առաջ է եկել այնպիսի փոփոխութիւն, որի շնորհիւ նուազել է այդ անձնաւորութեան կենսական էներգիան։ Յիսուս Քրիստոսը, այդ մեծ ուսուցիչն ունեցել է, անկասկած, բուժիչ մագնիսական ուժի ահագին պաշար, որի օգնութեամբ նա, ձեռքը դնելով հիւանդ անդի վրայ, կամ թէ միայն արտասանելով բերանացի ներշնչում, կարողացել է գործել կատարեալ հրաշքներ։

Ներկայումս ինչպէս տղամարդիկ, այնպէս և կանայք գործադրում են մագնիսական բըժշկութիւնը, որով հազարաւոր հիւանդներ թեթևութիւն են գտնում իրանց ցաւերից։ Ամեն տեղ միայն փչացնում է մեր արիւնը և խանգարում է ներդային համակարգութիւնը։ Շատ ու շատ բժիշկներ համոզուած են այդ բանում, սակայն միևնոյն ժամանակ նրանք շատ լաւ գիտեն, որ բաւական է միայն դադարել նշանակել հիւանդներին լատինական խոհանոցի այդ արտադրութիւնները և ահա իսկոյն նրանք բոլորը, կամ գոնէ նրանց մեծ մասը կը փախչեն նրանցից։

Առանց չափազանցնելու կարելի է ասել, որ չկայ այնպիսի հիւանդութիւն, որ չենթարկուէր

մագնիսական բժշկութեան։ Եւ իսկապէս, չէ՞ որ մագնիտիզմը դա—հէնց ինքը կենսական ուժն է և նրա հզօր ազդեցութիւնը հմուտ մարդու ձեռքում ուղղակի անսահման մեծ է։ Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ յաջողութիւնը կախուած է այն բանից թէ որքան համոզուած է հիւանդը, որ մագնիսական հոսանքն ունի բուժիչ յատկութիւն և որքան գո՞րծ է գնում նա իր ամբողջ կամքը նրա վրայ, որ ինչ էլ լինի ինքն ազատուի իր ցաւերից։ Ոչ մի բանի չը հաւատացող մարդիկ առհասարակ բժշկելու քիչ յոյս են ունենում. այդպիսի անձնաւորութիւններն իրանք են մեղաւոր իրանց տանջանքների համար, այլ խօսքով, նրանք իրանք են իրանց համար նշանակում այս կամ այն հիւանդացնող երևոյթը կամ դրութիւնը։

Մագնետիզմը և մտքի ուժը ամենաէական ֆակտորներն են, որոնք ահագին նշանակութիւն ունին ինչպէս մարմնի առողջ, այնպէս էլ անառողջ դրութեան մէջ, ինչպէս յաջողութիւնների, այնպէս էլ անյաջողութիւնների ժամանակ։

ՔԻՄԻԱՆ ԵՒ ՄՏԱԾՈՂՈՒԹԻՒՆԸ

Մենք պէտք է խիստ զգոյշ լինենք մեր մտածողութեան գործարանի վերաբերմամբ, գիտնականներն, օրինակ, պնդում են, որ մտածողութեան գործողութիւնը ազդեցութիւն է անում ամբողջ մարդկային օրգանիզմի վրայ։ Այսպէս, կատաղութիւնն ու յուզմունքը, թունաւորում են մեր արիւնը։ Այս մասին պրօֆէսօր Էլմիր Գատեսը ասում է հետեւեալը.

«Իմ բազմաթիւ գիտողութիւնների հիման վրայ ես հաստատում եմ, որ ամեն օր մեզ տիրող մեր ոգու անհաճոյ տրամադրութիւնը կարող է առաջ բերել մարդու օրգանիզմի մէջ հոգեկան արգելքներ։ Դա կարելի է ապացուցանել առանց որ և է դժւարութեան. հարկաւոր է միայն քննել քրտինքը և միւս արտաթորումները։ Բացի դրանից, ամեն մի անձնաւորութեան մարմնից առաջ եկած գոլորշիացումների անալիզ հիման վրայ կարելի է հաստատապէս որոշել, թէ ինչ տրամադրութեան մէջ է գտնւում նա այն րոպէին։ Եւ ինքն ըստ ինքեան հասկանալի է, մենք, առանց մի րոպէ տատանւելու, կը որոշենք այդպիսով գիւրաբոր-

բոք և գիւրագրգիռ մարդուն փափկասիրտ, բարեհոգի և հանդարտ մարդուց։

Ոգու ամեն մի վատ տրամադրութիւնը առաջ է բերում մարդկային օրգանիզմի մէջ որոշ փոփոխութիւն և միևնոյն ժամանակ կենսուրախ տրամադրութիւնը լաւացնում է արեան բաղադրութիւնը, իսկ, հետեւապէս, և ուրիշ հիւթերինը։

Թէ մի և թէ միւս ներգործութիւնը տարածւում է մեր բարդ մեքենայի բոլոր գործարանների վրայ, մինչև նոյն իսկ գլխի ուղեղի ամենամանր վանդակները, իսկ այս տեսակէտից հասակը ոչ մի նշանակութիւն չունի։

Այսպիսով, անհրաժեշտ է շարունակ հոգ տանել մտածողութեան գործարանի վրայ, որը ոչ մի առնչութիւն չպէտք է ունենայ երբեմնակի մարդուն ալեկոծող, տխուր տեսակի զգացմունքների հետ։ Պէտք է միայն գործել այդ ուղղութեամբ և ամենամօտ ժամանակում կերևայ դրա արդիւնքն առողջութեան ինչպէս ֆիզիքական, այնպէս էլ հոգեկան դրութեան վրայ։ Ուղեղի այն առանձին բջիջները, որոնք մարդու մէջ նշանակւած են այն ամեն բանի համար, ինչ որ ազնիւ է և մաքուր, կըզարգանան, իսկ վատ բնազդների շրջանակները միշտ աւելի ու աւելի կընեղանան։

ՄՏԱԾՈՂՈՒԹԵԱՆ ՈՅԺԻ ՄԱՍԻՆ

ՎԻԼԼԻԱՄ ՎՕԼԿԵՐ ԱՏԿԻՆՍՕՆ

Ով ուժեղ է իր յոյսերով, ով շարունակ կրկնում է միշտ միենոյնը—«ես կարող եմ եւ ես ուզում եմ».—նրա կողմն է ամեն հաւանականութիւն յաջողութեամբ պսակուելու համար ներքին վստահութիւնից, այդ «ես կարող եմ եւ ես ուզում եմ» մտքի ուժեղ գիտակցութիւնից է կախուած այն, ինչ որ մենք, մարդիկս, սովորել ենք արտայայտել «բաղդաւորութիւն» խօսքով։ Եւ շատ յաճախ է պատահում, որ ամենից աւելի ընդունակներն աւելի քիչ բանի են հասնում, քան թէ այսպէս կոչուած «ինքնուրոյնները»։

Եթէ մենք իզուր չենք վատնիլ մեր մտածողութեան ոյժը, իսկ ընդհակառակը—կը գործադրենք նրան մեր օգտին, եթէ մենք համոզուած կը լինենք, որ մենք ուզում ենք եւ կարողենք, այն ժամանակ մենք միշտ աւելի շատ բանի կը հասնենք, աւելի լաւ կը մտածենք և կը գործենք և վերջապէս ինքներս աւելի լաւ կը լինենք։

Թոյլ մի տուր այնքան, որ երկիւղը մտնէ քո տունը, դուրս արա նրան ինչպէս մի ան-

պէտք ճիճուի, քո կամքիդ բոլոր ուժերով մի թոյլ տար նրան մինչև քո դռներիդ շէմքը, քանի որ միակ ճանապարհը, որ տանում է մեզ դէպի բարձրագոյն ազատութիւն, դա—վախից բոլորովին ազատ լինելն է։ Դուրս կորզիր նրան քո ուղեղից իր արմատներով։

Դու կզգաս քեզ աւելի ազատ և աւելի բաղդաւոր, քո մէջ կամրապնդուի վստահութեան զգացմունքը, կեանքը և ամբողջ աշխարհը քեզ կը ներկայանան ուրիշ աւելի պայծառ լոյսով. քեզ հարկաւոր է միայն վերջացնել վախի ըզգացմունքը։

Արտաքսիր երկիւղը քո ուղեղից, պաշտպանուիր նրանից ինչպէս ամենաչար թշնամուց, չը նայած այն բանին, որ սկզբում քեզ տարօրինակ կը թուայ, որ դու դարձել ես անվախ։ Դրա փոխարէն կզգաս թէ ինչպէս դու ամրանում ես։ Հեռացրու այդ մտքերը և մի արտասանիր այն խօսքերը, որոնք ասում են. «ես չեմ կարող» կամ «ես վախենում եմ», «ախ, եթէ» և այլն։

Մի անգամ ընդ միշտ դուրս ձգիր նրանց քո նաւից և յիշիր, որ երկիւղ տածել կարելի է միայն հէնց երկիւղից։

Ես յուսով եմ, որ ինձ կը յաջողուի այնքան

ապրել և լսել, թէ ինչպէս աստիճանաբար այդ հրէշը, ամենաչարը, բայց և միևնոյն ժամանակ երկչոտը բոլորովին կանհետանայ աշխարհից: Համարձակ սկսենք կռիւը և թող մեր լօզունգը լինի.

Ես անվախ եմ, ես ոչ մի բանից չե՛մ վախենում, ես ազատ եմ:

«Առողջապահ»

ԱՆԳԻՏԱԿՑԱԿԱՆ ՀՈԳԻՆ

Պէտք է իմանանք, որ ոչ միայն զգացմանց և կրքերի, այլ և մտածողութեան արմատը անգիտակցական կեանքի մէջ պէտք է որոնել: Անգիտակցական հոգեկան կեանքի երևոյթներին, թէև բաւական ուշադրութիւն նուիրում են և փիլիսոփայ հոգեբանները, սակայն այդ առարկան առաւել մշակւում է այժմ բնախօս հոգեբաններից և հոգեբոյժներից: Կարևոր է ուրեմն՝ փոքր ինչ ծանօթանալ այդ անգիտակցական հոգեկան աշխարհի նշանակութեանը:

Մարդ շատ անգամ այս և այն հանգամանքներում, առանց որ և է գիտակցութեան ոչ միայն զանազան շարժողութիւններ է կատարում, այլև նրա գլխումը շատ զգացմունք և մտքեր են պտտում, որոնց մասին ինքը՝ ոչ մտածել և ոչ յիշել կարող է, որովհետև չգիտէ նրանց գոյութիւնը իր մէջ: Հռչակւած անգլիացի հոգեբոյժ Մաուդսլին պնդում է թէ՝ «մարդուս շատ գործողութիւնների մէջ այդ անգիտակցական հոգեկան կեանքը աւելի մեծ դեր է խաղում, քան թէ գիտակցականը»: Համբաւաւոր գերմանացի հոգեբոյժ Գրիզինգե-

նը ասում է նոյնպէս թէ՝ «հոգու մէջ գիտակցական լուսաւոր կեանքի հետ անդադար տեղի ունի մտքի անգիտակցական աւելի հարուստ աշխատանք, որից գլխաւորապէս և կախում ունի մարդուս նկարագիրը, ինքնուրոյն և յանկարծակի ծնած մտքերը և այլն։ «Այդ բանը հաստատում է և Վունդտը պսիխօ-ֆիզիօլօգիայի մէջ։

Վեր առնենք օրինակներ։ Ամենքիս շատ անգամ պատահած է. որ աշխատել ենք մի շատ կարևոր բան մտքերս ձգելու (այսինքն այն բանը, որ հաստատ մեր հոգու մէջ կայ, բայց անգիտակցական հոգեկան կեանքի խորքերում թաղուած է) և քանի գիտակցութեանը զօռ ենք տուել, այնքան աւելի դժուարացել է մոռացածը մտաբերել։ Այդպիսի դէպքում ժողովրդական փորձը ահա ինչ հնար է ցոյց տալիս. չպէտքէ միտքը աշխատեցնել մոռացածի վրա, այլ պէտք է հանգարտօրէն մի այլ, բոլորովին անտարբեր բանի վրայ մտածել և ահա անգիտակցական խորքից յանկարծ հանում է գիտակցութեանը այն մեր մոռացածը, որը մենք նրան բոլորովին չէինք սպասում։

Պատմում են հանճարաւոր և օգտաւէտ գիւտեր անող մարդկանց կեանքից, ըստ իրենց խոստովանութեան՝ թէ մի գիւտի վրայ երկար

աշխատելուց յետոյ, երբ չեն կարողացել վերջակէտին հասնել, թողել են բանը անվճիռ։ Շատ անգամ ամիսներ անցած, մէկ էլ տեսնես մի հասարակ խօսակցութեան ժամանակ, մի աննշան դէպքում, յանկարծ խնդիրը ինքն ըստ ինքեան գլուխը վճռուած առաջ է եկել նրանց գիտակցութեան մէջ։

Հետաքրքրական է և հետևեալ դէպքի պատմութիւնը, որ բերուած են հոգեբոյժ Մաուդսլիի գրքում և զանազան հոգեբանական գրուածքներում։ Մի 25 տարեկան անուս, անգրագէտ աղախին վարցաւքով (տիֆօյով) բռնուած՝ իր գիշերային զառանցանքների մէջ սկսել էր զանազան մտքեր յայտնել յունական, լատինական և հրէական լեզուներով և այն էլ՝ շատ բարձր ոճով։ Այդ բանը այնքան զարմանալի հրաշք էր երևում, որ կաթոլիկ հոգևորականը (հարաւային գերմանիայում էր դէպքը) և հիւանդին շրջապատողները վճռել էին, թէ այդ երևոյթը սատանայի գործ է, թէ հիւանդը դիւահարուած է։ Բարեբախտաբար հիւանդի մօտ բերին մի երիտասարդ բժիշկ, որ ինչպէս սովորաբար բժիշկների պարտքն է, անշուշտ պէտք է աշխատէր սատանայի գոյութիւնը ոչնչացնել և նրա հրաշքները ցրել։ Նա սկսեց ամէն կողմից իր հիւանդի անցեալի մասին

տեղեկութիւններ հաւաքել։ Դուրս եկաւ, որ դա աղջիկ ժամանակից որբ մնացած, ծառայելիս է եղել մի գիտնական ծերունու՝ բողոքական պաստորի մօտ։ Այս պաստորը սովորութիւն է ունեցել առաւօտները իր սիրած յունական, հրէական հեղինակներից բարձր ձայնով կարդալ, քայլելով պատշգամբի վրա, որ խոհանոցին մօտ էր։ Բժիշկը գտնում է պաստորի քեռորդու մօտ նրա գրքերը, որոնց զանազան գլուխների սկզբներում նկատում են հիւանդ աղախինի արտայայտած ցնորական մտքերը. ուրեմն՝ այդ խեղճ կինը, առանց իմանալու թէ նա լատինական և յունական բաներ իր ուղեղի մէջ ըմբռնում է, այնուամենայնիւ ըմբռնել է հակառակը իր կամքի։ Եւ երբ ուղեղի այն հին խորշիկները գրգռւել են հիւանդութիւնից, անմիջապէս առաջ են եկել հիւանդին անիմանալի հին տպաւորութիւնները։

Վերջապէս՝ մտաբերեցէք, թէ՝ ինչ բաներ չի տեսնիլ մարդս երազների մէջ։ Որտեղից են դրանք, եթէ ոչ նոյն անգիտակցական կերպով ստացած բիւրաւոր տպաւորութիւններից։ Նոյնպէս շատերը լսած կը լինին, թէ քլորոֆորմի, ափիոնի և այլ քնացնող նիւթերի ազդեցութեան տակ մարդիկ ինչ զարմանալի և

վաղուց մոռացած պատմութիւններ չեն արել, որ սթափելուց յետոյ իրանք ևս զարմացել և ապշել են, լսելով ուրիշներից իրանց պատմութիւնը, չհաւատալով անգամ թէ այդպիսի բաներ իրանց ուղեղի մէջ լինէին։

Ո՞վ չի լսել երազաշրջիկների (սօմնաբուլների, լունատների) մասին, թէ ինչպիսի ճարպիկ գործողութիւններ են կատարում, ման գալով անվնաս ահագին բարձրութիւնների, պատշգամբների, բարակ փայտերի վրայ. այն ինչ՝ արթուն ժամանակ անշուշտ նրանք վայր պէտքէ ընկնէին այդպիսի տեղերից և ջախջախուէին. . . .։

Մեր սովորական կեանքից այսպէս հարիւրաւոր օրինակներ կարելի է բերել, որոնցից պարզ կերևի անգիտակցական կեանքի գոյութիւնը և նշանակութիւնը։ Ո՞ւմ չէ պատահել երազի մէջ այնպիսի գեղեցիկ ճառախօսութիւն անել, որ արթուն ժամանակ երբէք չի յաջողւել։

Մեզանից ո՞րը չէ փորձած աշակերտութեան ժամանակ, որ երեկոյեան դասերը կատարեալ չսերտած՝ այլ միայն մի երկու անգամ կարդացած քնել ենք և առաւօտեան զարթած՝ մեր դասը աւելի լաւ պարզւած ենք տեսել

7

մեր գլխում։

Անցեալները ես մի անգամ այցելութեան էի գնացել մեր մի վիպասան բանաստեղծին: Նա վերջացրել էր իր վիպասանութեան երկրորդ մասը և շատ նեղանում էր, որ ինքը պէտք է արտագրէ: Նրա հիւանդութիւնը գիտենալով ես առաջարկեցի արտագրել տալ: «Ո՛չ, պատասխանեց նա ժպտալով, ուրիշը այս հում նիւթի մէջ գլուխը կը ջարդէ, բայց չի կարող դուրս գրել այն, ինչ որ ինձ է պէտք»: Ինչի՞ց է այդ:–Որովհետև բանաստեղծը իր ոգևորութեան րոպէներին շտապում է իր անգիտակցական խորքերից ծնած պատկերները, որքան կարելի է, շուտով դուրս շփրտել, շատ անգամ չհասցնելով ձեռաց մկանունքները, պատկերների իրար հետևելու արագութեանը գլխի մէջ. նա միայն հասցնում է կարճառոտ էսկիզներ (ուրուագծեր) ձգելու: Եւ յետոյ դուրս գրելու ժամանակ՝ երբ գիտակցութիւնը զօրեղ գործում է, պատահում է, որ իր սևագրի մէջ մի քանի խօսակցութիւնների և պատկերների կապը միւսների հետ ինքն էլ չի հասկանում և ստիպուած է դուրս ձգել:

Այս է պատճառը, որ շատ անգամ երևելի բանաստեղծներ և արտիստներ, ըստ իրանց խոստովանութեան, կարողացել են յառաջացնել գեղեցկութեան այնպիսի մանրամասնութիւններ, որ սովորաբար հէնց իրանց անյայտ էին: Այս է պատճառը, որ շատ հեղինակ-բանաստեղծներ, որ սովորական գիտակցական կեանքի մէջ իրանց վարմունքով, ընկերական յարաբերութիւններով և գործնական մտածողութիւնով անտանելի թերութիւններ են ներկայացնում, իսկ նրանց գրուածները երբեմն կատարելութիւն են լինում և ցոլացնում են իրանց մէջ մեծ խելք ու բարոյականութիւն:

Ի հարկէ, ամեն ուղեղ իր մանկութեան, պատանեկութեան տպաւորութիւնների կամ զգայութիւնների հետքերը չի կարող իր անգիտակցական խորշիկներում այնպէս վառ պահել, որ ոգևորութեան րոպէներին նրանք իրանց սկզբնական թարմութեամբ ու պայծառութեամբ յառաջ գան:

Այս է պատճառը, որ ամեն ուղեղի բան չէ բանաստեղծութիւնը: Այս է պատճառը, որ տաղանդը և հանճարը, արդարացի կերպով բնատուր ձիրքեր են համարւում, որոնք կրթութիւնով և աշխատութիւնով միայն կատարելագործւում են և աւելի լայն ասպարէզների վրայ սփռում իրանց ձիրքը: Չպէտք է մոռանանք ես, որ ուղեղի անգիտակցական կեանքը

սնունդ է առնում ոչ միայն դրսից ստացած տպաւորութիւններից, այլ և իր ներքին կազմուածքի բոլոր գործարաններից և նոյն իսկ այն արիւնից, որ սնուցում է ուղեղը: Այս է պատճառը, որ երբ մարդ ստամոքսի թեթև տկարութիւն ունի, օրինակ՝ փորի ամրութիւն, մի մասը ցաւում է և այլն, այդ դէպքում նա աւելի ենթարկւում է տխրութեան, բարկութեան և այլ կրքերի: Երբ փոքր ինչ ջերմութիւն ունի, սիրտը աւելի առատ արիւն է ղրկում ուղեղին, դարձեալ բոլորովին ուրիշ հոգեկան դրութիւն է լինում: Շլէգէլի պատմութիւնը, որ շատ հոգեբանական գրուածքների մէջ յիշւում է, ևս առաւել մեզ պիտի համոզէ, որ կրքերը կարող են ծնուել առանց որ և է գիտակցութեան, անգիտակցական կեանքի խորքերից: Մի կին, ասում է Շլեգելը, իր յղութեան 4-րդ ամսից ամեն գիշեր երազի մէջ չափազանց ուրախութեան կրքերի էր ենթարկւում և վերջում մի գեղեցիկ մանկիկ գալիս էր նրան համբուրում: Այդ երազը կրկնւում էր և այնպիսի օրեր, երբ կինն ամբողջ օրը զբաղուած էր լինում տնային գործերով և մինչև կէս գիշեր հիւրերով և այդպէս դադրած յոգնած, քուն էր մտնում: Կինը ազատուեցաւ այդ երազական մանկիկի անդադար

այցելութիւններից այն ժամանակ միայն, երբ երեխան աշխարհ տեսաւ, երբ մօր ուղեղը ազատուեց արգանդից ստացած անգիտակցական տպաւորութիւններից: Այսպիսի գիտողութիւնների հիման վրա էր, որ առաջուայ ժամանակների փիլիսոփաները, մարդկային կրքերի աղբիւրը, բունը սխալմամբ համարում էին բուսական գործարանները (արիւնային, մաղձային և աւիշային գործարանները):

Եթէ վերցնենք օրինակներ խելագարների կեանքից կը տեսնենք, որ երբեմն նրանց սանձարձակ կրքերի պատճառը լինում են, նրանց բուսական գործարաններում կատարուած անկանոն գործողութիւնները և անգիտակցական տպաւորութիւնները . . . :

Դառնանք այժմ մանուկների և ապուշների կեանքին: Այս տեղ ևս տեսնում ենք, որ նրանք շատ սակաւ մտաւոր պաշար, գաղափարներ ունին, բայց աւելի շատ կրքերի ենթարկուած են: Ամեն մի թեթև անբաւականութեան զգացումից ապուշը ցասում և փոթորիկ է հանում, ամեն մի թեթև հաճոյական զգացումով մանկիկին կարելի է հրճուանք պատճառել: Իջնենք կենդանեաց դասակարգի մէջ, մենք կը գտնենք կենդանիներ, որ համարեայ բոլորովին զուրկ են գիտակցական կեանքից, բայց այնու-

ամենայնիւ գոյութիւն և զգացողութիւն ունենալով՝ բաւական չափով կրքեր են ներկայացնում:

Որպէսզի ամեն մեր ընթերցողին աւելի հասկանալի դառնայ՝ գիտակ և անգիտակ ուղեղային կեանքը, համեմատենք մարդկային ուղեղը մի բարդ ժամացոյցի, օրինակ՝ ՄԻՒՆ-ՍՏԵՐԻ տաճարի զարմանակերպ ժամացոյցին: Նորա փակ անտեսանելի ներքևի և յետևի յարկը, ուր տեղաւորուած են զսպանակն և գործում են ծածկաբար անթիւ ատամնաւոր անիւները (չարխերը), պէտք է համեմատել ուղեղի անգիտակ ներքևի յարկին: Իսկ ժամացոյցի տեսանելի ցուցադրուած վերևի մասը, ուր շարժւում են ակնթարթ, րոպէ, ժամ, ամսաթիւ և այլն ցոյց տւող սլաքներ, ուր որոշ ժամանակների համար որոշ չափ զանգեր են զարկում և համապատասխան եղանակներ նըւագում, այդ պէտք է, համեմատել ուղեղի վերևի շերտերին կամ գիտակցական վերի յարկին: Ի հարկէ, ամենաթանկագին և ամենաբարդ ժամացոյցի մեքենայութիւնը շատ չնչին է, համեմատ աստուածակերտ հրաշալի և անհասանելի ուղեղային մեքենայութեանը. բայց մենք այս նմանութիւնը բերինք մեր միտքը

ընթերցողին փոքր 'ի շատէ պարզելու համար:

Գիտակցական կամ վերի յարկի ամեն շրջանակում (երբ մարդ արթուն է) տեղի ունին միասին մեր հոգու երեք գործօնները—դատողութիւնը (միտքը) զգացմունքը և կամքը (շարժողութեան ձգտումը): Երբ դատողութիւնըն է բռնում գիտակցութեան շրջանակի մեծ մասը, մարդս հանդարտ մտածութեան մէջ է, որին ուղեկցում են փոքր չափով՝ զգացմունքը և մարմնի թեթև շարժողութիւնները: Երբ ըզգացմունքն է տիրապետում գիտակցական շըրջանակի մեծ մասը, դատողութիւնը փոքրիկ չափով միայն ուղեկցում է զգացմունքին—օրինակ՝ վախի, կասկածի, նախանձի, սիրոյ մի երկու մտապատկերով, այդ դէպքում մարդս կրքի ազդեցութեան տակ է ընկնում. հետևաբար՝ կրքի բռնկման ժամանակ էլ մեր գիտակցութիւնը չէ մնում բոլորովին առանց մտապատկերի կամ մի որ և է գաղափարի: Վերջապէս երբ ուշադրութեան ոյժով երրորդ գործօնը—կամքն է տիրում շրջանակի մեծ մասը, մարդս զօրեղաբար և անդադար գործում է, մինչև նպատակին հասնելը, ուղեկցութեամբ մտքի և զգացմունքի՝ որոշեալ չափերով:

Բժշկապետ Ա. Բաբայեան

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ

Կեղտոտութեան չարիքները

Թէ որ աստիճան կարեւոր է մարմնի, հագուստի և բնակարանի մաքրութիւնը վարակիչ հիւանդութիւնների դէմ կռւելու հարցում, կարելի է դատել հետեւեալ օրինակից։

Ինչպէս յայտնի է, ծաղկի պատուաստը վաղուց է գտնւած, նրա շնորհիւ բիւրաւոր կեանքեր են փրկւած. Գերմանիայում այժմ այդ հիւանդութիւնը համարեայ թէ գոյութիւն չունի. 1895-ին այնտեղ ծաղկից մեռել են միայն 27 հոգի՝ (երկիրը ունի 45 միլիօն բնակիչ)։ Իսկ տեսէք թէ ինչ է կատարւում այսօր, 17 տարի վերջը, Իտալիայում։

Հարաւային Իտալիայում, մանաւանդ Սիկիլիա կղզում, այդ ցաւը համաճարակի բնոյթ ստանալով, զոհերի քանակը իսկապէս առասպելական չափերի հասաւ։ Բաւական է յիշել Ռուսսա բժշկի գրւածքը. Պալերմօյում, որը հռչակւած է իր ըստ ամենայնի բարեկարգութիւնով, յայտնի մաքրութիւնով, բժշկական— սանիտարական ընդարձակ կազմակերպութիւնով, շատ նպաստաւոր կլիմայական պայմաններով (արեւի առատ լոյս, օդի մաքրութիւն, ա-

(առողջարար ջուր, ծովի մերձակայութիւն և այլն) մօտ 400,000 բնակչով 20,000 հոգի ծաղկով հիւանդ են եղել, որից 20 հոգուց մէկը մեռաւ ու համաճարակը չի թուլանում, այլ գնալով աւելի է սաստկանում թէ դրա վերջը երբ կլինի, յայտնի չէ։

Զարմանալին այն է, որ այնտեղ վաղուցւանից սովորութիւն է դարձել հորթի ծաղկով պատուաստելը. գրեթէ չը կայ այնտեղ մէկը, որ պատուաստւած չլինի, շատերն անգամ, կեանքի պարտականութեան ծէս, 2—3 ու աւելի անգամ են իրենց պատուաստել տւել ու ազգաբնակութիւնը իրեն համարում էր այս ցաւից ըստ ամենայնի պաշտպանւած և ապահովւած, բայց, չնայելով այս նախազգուշութիւններին, կարճ միջոցում ծաղկից տկարացել են 20,000 հոգի։

Ոչ թէ չարաբաստիկ «Սև մահի» օրերում, եղած դէպք է այս, այլ միայն մի քանի տարի առաջւայ իրողութիւն է. ծաղիկը մուտք գործեց Վիտտօրիօ (Սիկիլիայում) քաղաքը ու 26,000 հոգուց սպանեց 2100 մարդ։

Նոյն ժամանակներումն էլ Լէփ գիւղի 414 բնակչից ծաղկացաւից մեռաւ 51 մարդ։

Նէապօլում, 1901 թւի համաճարակին մե-

ում 897 հոգի, իսկ Անգլի-ում—363 հոգի։

Ի՞նչ է այս տարօրինակ երևոյթի պատճառը։

Բաւական է մի լաւ զիտել այս սարսափելի ցաւի բնի վրայ, իսկոյն կը համոզուի թէ ինչի՞ցն է, որ ցաւը հէնց այնտեղ այդքան ահռելի չափերի է հասել և ոչ ուրիշ տեղ. այնտեղ ժողովուրդը խմբուած է, քաղաքի ազգաբնակութիւնը այնքան խիտ և իրար վրայ է թափուած, որ կարծես նեղ բանտում լինեն, ուր 5 հոգու համար յատկացուած սենեակում բնակեցնում են 300 հոգի։

Այն տեղ կանգնած մնում են 2—3—5 հարիւր տարեկան փթխարի տներ, որոնց պատերի մէջ բառի բուն նշանակութեամբ խոր բնակւած են վնասակար անթիւ մանրէներ (միազմներ). ամբողջ թաղեր ահագին շինութիւնների հետ սեփականութիւն են աւատական իշխանների և ժառանգական աւագանիների, որոնք հարիւրաւոր տարիների ընթացքում աւելորդ են համարել որևէ վերանորոգումն մտցնել ու, մինչև անգամ մաքրել տալ։

Այն տեղ մոլեռանդ հոգևորականը իր անմիտ քարոզներով գրգռում է կրօնամոլ և ողջ ժողովրդին բժիշկների դէմ ասելով—որ բոլոր

բժիշկները մասօններ և անաստուածներ են»։ Թաղերը և տները չի կարելի ինչպէս հարկն է մաքրել—ախտահանել, որովհետև նրանց տէրերը թէ անհասկացողներ են և թէ դիրք ունեցողներ։

Թանձրամիտ կղերը իր զօրութիւնով ահագին ճնշումն է գործադրում դպրոցների վրայ, որովհետև դպրոցներում սովորեցնում են միայն անհաւատութիւն և ազխալութիւն»։ Այնտեղի կանանց սեռը հարեմական բանտարկեալներ են. մի օրիորդ եթէ մտադիր լինի մտնել համալսարան, դրանով սաստիկ նշաւակած կլինի իր ընտանիքը, իսկ եթէ նա համարձակւի յայտնել որ ցանկութիւն ունի բժշկութիւն սովորել դրանով անպատւած կլինի իր ազնիւ տոհմը մինչև եօթը պորտը։

Այնտեղ, այս ցաւի դէմ առնելու գլխաւոր միջոցը համարում են ոչ թէ ախտահանութիւն, այլ հիւանդները առողջներից հեռացնել—մեկուսացնելը և մեծահանդէս թափորով «պրօ-չէսսիօնէ րէլիջիօզա» քաղաքի պաշտպան սրբուհի Ռօզալիայի արձանը քաղաքի չուրջը պտտացնելը միայն։

Այնտեղի ազգաբնակութեան դաւանանքը անմաքրութիւնն է, չէ՞ որ անմաքրութիւնը այն

տեղ պատմական սեպականութիւն է դառել և կիտուել է նա դարերով. այդի կիտուկները իրենց նախորդներից մնացել են բլուրներով. իսկ ինչ որ նախորդից է մնացել, դա սուրբ և անձեռնամխելի է յետնորդներին։ Հին Հռոմը, կռապաշտ Հռոմը ունէր հարիւրաւոր հասարակական բաղանիքներ, իսկ կաթոլիկ Հռոմը, կղերական Հռոմը հռչակեց՝ թէ առհասարակ մաքրութեան և մանաւանդ մարմնի մաքրութեան հոգսը անբարոյականութիւն է։

Եւ այժմեան Հռոմը իր 700000 բնակչով ունի միայն 2 հատ հասարակական բաղանիք, որոնք գրեթէ միշտ դատարկ են։

«Առողջապահ»

ՏՈՒԲԵՐԿՈՒԼԵՕԶ ԵՒ ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ

Տուբերկուլեօզաւորները չպէտք է ամուսնանան, եթէ աչքի առաջ ունենան իրենց ապագայ սերունդի վիճակը։

Գիտնականները դեռ վճռած չեն թէ հիւանդութեան կամ թէ Կոխի մանրէն անցնում է հիւանդ մօրից երեխայի կազմուածքը՝ արեան միջոցաւ։

Ֆրանսիացի գիտնական Կալմեթ-ը ծնած վայրկեանի 2000 մանուկների վրայ տուբերկուլինի փորձը կատարել և միշտ բացասական հետեանք է ստացել. մինչդեռ մի քանի ամիս վերջը նոյն փորձը կրկնելով միևնոյն մանուկների վրայ, գտաւ մի խոշոր տոկոս արդէն վարակուած։

Պրոֆ. Լանդուզի քննելով նորածին 86 շնիկներ, ճագարներ, ծովախոզեր, նկատել է որ սրանցից մէկն էլ տուբերկուլեօզ չունի։

Իսկ 68 փոքրիկ ծովախոզեր, որոնք մնացել էին իրենց տկար մօր մօտ, 16-ը շուտով հիւանդացել են, չնայելով որ նրանց մայրերի ոչ ծծի և ոչ ուրիշ մի որ և է բացուածքի վրայ տուբերկուլեօզի վէրքեր են եղել։

10 խոզիկներին չնայած, որ անմիջապէս հեռացրել են հիւանդ մայրերից, այնուամենայնիւ մէկը այդ ցաւով հիւանդացել է։ Ընդհանուր առմամբ 41 9 % թոքախտաւոր ծնողներից ծնուած փոքրիկ խոզիկները չեն կարողանում երկար ապրել, իսկ կենդանի մնացածները լինում են թուլակազմ, փոքրահասակ և հազար ու մի տեսակ այլասերման նշաններով ու պակասութիւններով օժտուած։

Եթէ Կոխի միկրոբը անմիջապէս չի անցնում հիւանդ ծնողից մատաղ սերունդին, նրա առաջ բերած թունաւորութիւնը անցնում է։

Այս վերջինը ժառանգական է և նա, սի-

Փիլիսի և գինեմոլութեան (ալկոհոլիզմ) հետ միասին մարդկային ցեղի այլասերման գլխաւոր տարրերից մէկն է հանդիսանում։ Այնպէս որ գործնական տուբերկուլեօզը շատ վտանգաւոր է նոր սերնդի համար, նախ՝ որ ծնելով թուլակազմ, տափակ և երկար կրծքի վանդակով, նրանք շնչառութեան միջոցին չեն կարողանում պէտք եղած քանակութեամբ թթուածին իւրացնել, նրանք ինքնապաշտպանութեան համար տկար զինուած են, աշխարհ գալիս դժուարութեամբ են դիմանում փոքրիկ և զանազան վարակումներին. մինչդեռ ապրելով շարունակ հիւանդ ծնողների հետ մութ, խոնաւ և վարակուած մթնոլորտում, նրանք միշտ ենթարկուած են վարակուելու երկիւղին։

Բժ. Լ. Օհանջանեանց

ԳԱՐԵՋՈՒՐ

Ալկոհոլի սննդարար յատկութեան մասին գիտնական Աթվաթերի յարուցած տեսակէտը (թէօրիան) իր ժամանակ բաւական վէճի առարկայ դարձաւ։ Ոչ պակաս վէճեր էլ մօտ օրերումս, Անգլիայում, ուր գարեջուրը ընդհանուրի սովորական խմելիքն է, մասնագէտներից

կազմուած մասնաժողովի զեկուցումը առաջ բերեց, երբ փաստալի վկայութիւններով յայտարարեց, թէ գարեջուրն էլ ոչ պակաս սննդարար յատկութիւններ ունի։ Յանձնախմբի ենթադրութիւնը հաստատուն է. նա ապացուցում է, որ մի փունտ գարեջուրը այնքան սննդարար նիւթ է արտայայտում, որքան մի փունտ բանջարեղէնը. միևնոյն ժամանակ նա մատնանիշ է անում այն յատկութիւնները, որոնք պէտք է ունենայ լաւ գարեջուրը և որոնցով պէտք է նրան ճանաչել և յետոյ, առողջապահական տեսակէտից նայելով, վստահօրէն առաջարկում է գինու փոխարէն գարեջուր գործածել։

Նոյն յատկութիւնից երևում է, որ գարեջուրը ունի բաղադրիչ այն ամէն մասերը, ինչ որ կան կաթի և մսի մէջ, բացի մսի ճարպային մասերից։

Սակայն յօգուտ գարեջրի ցուցադրած այս ամէն բարեմասնութիւնները սահմանափակ են։ Գարեջուրը ամենքին դուր չի գալիս. նա լաւ է միայն որոշ կազմուածք ունեցողներին, նա օգտակար չէ կարող լինել գեր (չաղ) մարդկանց համար, նա կարող է առաջացնել միզարգելութիւն նրանց, որոնք ամորձիքի ցաւ

ունին, կամ թէ որոնց մէջ կայ պտղաշաքար, բայց այնտեղ, ուր այդ տեսակ երեւոյթներ չը կան՝ գարեջուրը գինուց աւելի նպաստաւոր խմելիք է և նա ամէն պարագայում ալկօհօլային միւս խմիչքներից գերադաս է։

Բայց գարեջուրը մի նշմարելի թմրեցուցիչ զօրութիւն էլ ունի. նրան գործածողը գլխաւորապէս այնպիսի մարդիկ են, որոնք լաւ ու հանգիստ են քնում. մի բաժակ գարեջուրը քնելուց առաջ եթէ խմւի, լաւ քուն կը բերի և գայլուկի խմորման զօրութիւնը որքան շատ լինի, այնքան խմողի քունը խոր, երկարատև ու հանգիստ կլինի։

Գարեջրի մի ուրիշ առաւելութիւնը կաթից այն է, որ շնորհիւ նրա պատրաստելու կերպին, նրա մէջ շատ քիչ են մարդու կազմւածքի հիւանդութիւններ առաջ բերող գործարանական նիւթերի և մանրէների քանակը։

Յիշեալ յանձնախումբը իր տեղեկագրի մէջ դրած է նաև գարեջրի, թէյի, կաթի և մաջրի մէջ եղած սննդատու նիւթերի համեմատական մի աղիւսակ, որը նոյնպէս գարեջրի առաւելութիւնն է ցոյց տալիս։

Հետևաբար, համաձայն վերոյիշեալ նըպաստաւոր զեկուցումների, մի բանւոր, եթէ

նախաճաշի համար ունենայ մի շերտ հացի վրայ քսած կարագ, քիչ պանիր և մի բաժակ գարեջուր, նա կարող է կշտանալ. իսկ Մ. Լանդուգի տեսակէտով՝ մի աղքատ մարդ շատ գոհ և կուշտ կմնայ, եթէ կարողանայ ամէն օր ձեռք բերել քիչ հաց, գրիւիէր պանիր ու մի բաժակ գարեջուր։

«Առողջապահիկ»

ԵՐԿԱՅՆԱԿԵՑՈՒԹԵԱՆ ՏԱՍՆԱԲԱՆԵԱՆ

1. Բոլոր չափազանցութիւններից, մանաւանդ ուտելու և խմելու մէջ, շատ զգոյշ եղիր։

2. Կեր ապրելու համար և ոչ թէ ապրիր ուտելու համար։

3. Մարմինը սնուցանելու յարմար եղող ուտելիքներ ընտրիր։

4. Մաքուր, միայն մաքուր օդ ներշնչիր։ Իսկ գիշերը մաքուր օդ ննջասենեակդ թող մուտ գործէ բաց պատուհաններից։

5. Մարմնով և մտքով մաքուր եղիր։ Մաքրութիւնը վահան է հիւանդութեան դէմ։

6. Հանդարտ, անխռով պահիր միտքդ։ Մըտատանջութիւնն ու յուզումը վնասակար են։

7. Միշտ ժիր, աշխատասէր եղիր։ Զբաղւիր

մարմնով և մտքով, միշտ օգտակար, համեստ գործով։ Սակայն չափազանց մի յոգնիր։

8 Կանուխ անկողին մտիր, աշխատիր բաւականաչափ քուն վայելել։

9. Բարկութիւնը, կիրքը հեռու պահիր քեզանից և անձդ էլ՝ նրանցից, եթէ ոչ մահացու հարուած կստանայ կեանքդ։

10. Լաւ չէ մարդուն առանձին, միայնակ լինել, այս Աստուածային պատգամ է. ուստի կեանքի յարմար մի ընկեր ճարիր յարմարաւոր ժամանակին։

ԱՌՈՂՋԱԿԱՆ ՏԱՍՆԱԲԱՆԵԱՅ

1. Գիշեր ցերեկ օդասուն տեղ ապրիր։
2. Ամէն օր բացօդեայ տեղեր շարժում արա, գործելով, պտոյտ անելով և աշխատելով։
3. Կեր ու խմէ չափաւորապէս ջուր, կաթ և պտուղ, քան թէ ոգելից ըմպելիներ։
4. Ցրտի դէմ մարմինդ ամրացրու սառը լոգարաններով և ,երբեմն տաք բաղնիս գնա։
5. Ոչ չափազանց տաքացնող, ոչ էլ շատ սեղմող հանդերձ հագիր։
6. Չոր տուն բնակիր, բաւական մեծ ու արևոտ։

7. Կանոնաւոր աշխատանքը մարմինն ու հոգին զերծ են պահում հիւանդութիւնից, ուրախ, զուարթ են դարձնում նրան, դժբախտութեան մէջ մխիթարում են։
8. Գործից յետոյ հանգիստ մի որոնիր այնպիսի տեղերը, որոնք յուզողեն. զւարճութեան տեղը ընտանեկան վայրն է. գիշերը եղած է քնելու և ուժերը կազդուրելու։
9. Քաջառողջութեան գլխաւոր պայմանն է աշխատութիւնով արդիւնաւորուած կեանքը, որ բարի գործերով ազնուացած է։
10. Կիրակին հանգստեան օր է մարմնի, մտքի և հոգու. նա, ով հանգստեան օրը ըստ արժանւոյն չի գործածում, վերջը ծանր տուժելու է ֆիզիքապէս, նիւթապէս և հոգեպէս։

ՀԻՒԱՆԴԱՊԱՀՆԵՐԻ ՏԱՍՆԱԲԱՆԵԱՆ

(Դոկ. Թէրզեան—Պէպէք)

1. Հիւանդներն առանց հոգատար ձեռքերի չեն կարող բժշկուել։

2. Այս խնամատարներն են հիւանդապահները, որոնք ամեն րոպէ հիւանդին հսկելով, բժիշկի հրահանգներն անթերի գործ են դնում։

3. Բժշկի ճարտարութիւնը միայն բաւական չէ. հիւանդապահները մեծ դեր ունին հիւանդի բժշկութեան մէջ։

4. Ճիշտ ժամանակին դեղ և սնունդ տալով, մաքրութեան և այլ պէտքերի հոգողութիւն անելով է, որ հիւանդը բժշկւում է։

5. Աչալուրջ հոգողութիւն. դրսից գործածելի դեղը սխալմամբ ներսից տրւելով ցաւալի վրութիւն և մահուան իսկ դէպք է պատահել։

6. Տան մէջ ամենից յարմարը պէտք է ընտրել հիւանդապահ լինելու։ Սա պէտք է գրի առնէ բժշկի հրահանգներն և կէտառկէտ գործ դնէ։

7 Հիւանդի ձեռքի, բերնի, ճերմա՛կեղէնների, անկողնի, սենեակի և օդի մաքրութեան խիստ ուշադիր պէտք է լինի։

8. Հիւանդի մօտ հիւր ընդունելու չէ. շատ խօսեցնելուց, ցրտառութիւնից. գարշահոտութիւնից, աղմուկից, ծխից պէտք է հեռու պահել։ Նաև բժշկի պատւիրած սնունդից զատ ուրիշ ոչ մէկ բան չպէտք է տալ։

9. Բժշկի գնալուց յետոյ բոլոր պատահածներն, ընդունած սնունդի, տաքութեան, քնի, բնական պէտքերի մասին տեղեկութիւններ գրի առնելով բժշկին հաղորդելու է, երբ նորից գայ։

10. Հիւանդի սենեակը պէտք է գտնուի ժամացոյց, ջերմաչափ և ուրիշ կարևոր գործիքներ ըստ յանձնարարութեան բժշկի։ Դեղ և տրւած սնունդը չընդունող հիւանդին այլ և այլ կերպով պէտք է համոզել, որ ընդունէ, փոքրերին մինչև իսկ ստիպել։

ՎԱՂԱՀԱՍ ՄԱՀԸ ԱՐԳԵԼԵԼ

Մարդս բնական մահով մեռնում է 80—90—100—120 մինչև իսկ 150—160 տարի ապրելով, իր կենսական ուժերն սպառում են և մահը յաջորդում է, ճիշտ այնպէս, ինչպէս ճրագը մարում է միայն իր իւղի վերջին կաթիլն ըսպառելու ժամանակ։ Վաղահաս ծերութիւնը հիւանդութեան մէկ տեսակն է, և հնարաւոր է բուժել սովորական ուրիշ հիւանդութիւնների նման ծագումի, տեսակի և պատճառի հետամուտ լինելով և այն մէջտեղից հեռացնելով։ Տեսակ տեսակ մակաբոյծներ են, որ սնելով մեր մարմնից, կրծելով և մաշեցնելով քայքայում, առաջ են բերում, ինչպէս փոքրիկ մի որդ հսկայ կաղնին գետին է տապալում, նրա կեանքի հիւթը երկար ժամանակ ծծելուց յետոյ։ Մէչնիկով խրատում է շատ մածուն ուտել. որ ծենիքով խրատում... ծերութիւն բերող միքրոպների դէմ հզօր կռիւ

է մղում։ Ինքն այդ փորձը կատարել է, թէև նրա գերդաստանի մէջ խոր ծերութեան հասնող մէկ հոգի չէ եղել, սակայն ինքը այժմ 70 տարին անցրել է։ Ուստի ՄԱԾՈՒՆ ԿԵՐԷՔ։

ԵՐԿԱՅՆԱԿԵՑՈՒԹԵԱՆ 17 ԿԱՆՈՆՆԵՐ

1. Քնիր 8 ժամ։
2. Անկողինդ պատից հեռու լինի։
3. Ննջարանիդ պատուհաններն ամբողջ գիշերը թող բաց լինեն։
4. Ննջարանիդ դրան առաջ ոտքի սրբիչ դիր (այսինքն ննջարանդ խիստ մաքուր լինի)։
5. Ընդունածդ լոգարանի ջուրը մարմնիդ ջերմութիւնը պէտք է ունենայ։
6. Նախաճաշից առաջ շարժում արա։
7. Քիչ միս կեր, այն էլ խիստ լաւ եփած։
8. Կաթ շատ խմիր։
9. Շատ իւղ—կարագ—կեր։
10. Արբեցուցիչ ըմպելիներից հեռու կեցիր։
11. Ամեն օր բացօդեայ տեղեր շարժում արա։
12. Բնակարանիդ մէջ անասուններ չլինեն. սրանք հիւանդութեան սերմեր են բերում։

13. Եթէ հնար է գիւղը բնակուիր։
14. Աշխատանքիդ մէջ փոփոխութիւն արա։
15. Յաճախ կարճ արձակուրդներ ունեցիր։
16. Սանձիր փառասիրութիւնդ։
17. Զսպիր կրքերդ։

ԿԵԱՆՔԸ ԵՐԿԱՐԱՑՆՈՒՄ ԵՆ

Հանդարտ խիղճը, գոհ միտքը, բարքի մաքրութիւնը, զուարթութիւնը, մտերմութիւնը, մարմնամարզութիւնը, պարզակեցութիւնը և բանջարակերութիւնը, կանուխ քնելը և 8 ժամեայ քունը, յոյսը, առողջարար զբաղմունքը, չափաւորութիւնը, ծիծաղը, առողջ միջավայրը, ժուժկալութիւնը, ամուսնութիւնը, օդասուն սենեակները և այլն։

ԿԵԱՆՔԸ ԿԱՐՃԱՑՆՈՒՄ ԵՆ

Թարգախուած ուտելիքները, ցանկութիւնը, անհանգիստ խիղճը. բարկութիւնը, նեղութիւնը, վատ օդը, չափազանց հոգսը, կանուխ ամուսնութիւնը, նախանձը, չափազանց ուրախութիւնը, վիշտը, ատելութիւնը, ծուլութիւնը, անբաւական քունը, ուշ պառկիլը, ուշ ընթրե-

լը, մտաւոր ձգտումը, չափազանց ուտելը, կերակուրը կէս ծամելը, անմաքրութիւնը, վատառողջ զբաղմունքը, բուռն կիրքը, անբաւական յագեցնող մարմնամարզութիւնը և այլն։

ԿԷՍ ԲԺՇԿԱԿԱՆ

ԽԱՅԹՈՒԱԾՔԻ ԴԷՄ.—Օձի և կարիճի խայթուածքները շատ վտանգաւոր են, բայց չպէտք է շփոթուել, որովհետև կարելի է անմիջապէս բժշկել։ Նախ. կամ ծծեցէք վէրքը, կամ կապեցէք վէրին կողմից, յետոյ լայնացրէք վէրքի բերանը և խորունկից այրեցէք անուշադրով, կամ ասիտ ֆէնիքով, կամ ալբոյով, կարմրած երկաթով։ Հիւանդին տուէք տաք թէյ և կօնեաք։

ՍՆՈՒՆԴ ԵՒ ՆԿԱՐԱԳԻՐ.—Եզի միս շատ ուտողները լինում են ազդեցիկ, քաջ, յանդուգն. խոզի միս շատ ուտողները՝ յոռետես, անհամբեր, սկեպտիկ. ոչխարի միս շատ ուտողները՝ հեզահամբոյր, մելամաղձոտ, տխուր. հորթի միս ուտողները՝ թոյլ, տկար, երկչոտ. հաւկիթ և կաթ շատ ուտողները՝ մտածող և շնորհալի. կարագ չափազանց շատ ուտողները՝ դանդաղ և ծանրաշարժ. գետնախնձոր շատ ուտողները՝ ձանձրացող և մեղկ։

ԽՆՁՈՐ ԿԵՐԷՔ.—Մանաւանդ մտքի աշխատաւորների համար գերազանցապէս յանձնարարելի է խնձորը թէ ստամոքսն է ուժեղացնում, թէ ախորժակը բաց անում, թէ պատուական մարսողական է և թէ ուղեղն աւելցնում է, ասում են։ Գերմանացիները խնձորը Սիրոյ խորհրդանշան էին համարում։

ՍՈԽԸ սնուցիչ յատկութիւն ունի, գրգռում է մարսողութեան ջղերը և շարժում է տալիս աղիքներին և հեշտացնում է նրանց գործունէութիւնը։ Մանաւանդ ազդում է նաև մէզի արտահանութեան և ներքին գործարանների թաղանթների վրայ։ Բայց չափազանցութեամբ ուտելն էլ վնասում է։ Գէր, թոյլ ու մեղկ, մաղասաւոր (պաղարիւն) մարդու համար օգտակար է և յարմար է սոխ ուտելը, քան թէ դիւրագրգիռ, նիհար և տկար մարդկանց։ Սոխը շատ բաների համար էլ իբր դեղ է գործածւում օրինակի համար, հազի, կուրծքի ցաւի դէմ մեղուի կամ միջատի խայթուածքի, քթի արիւնահոսութեան դէմ և այլն։ Արևելեան երկիրների մէջ էլ սոխը դարերից ի վեր իբրև դարման էր գործածւում մազերի և ունքների դէմ։

ԲԵՐՆԻ ՎԱՏ ՀՈՏ.— Բերնի վատ հոտը ե-

թէ ատամներից չէ, այլ ստամոքսից, չափաւոր քանակութեամբ շաքար ուտելով (օրական 100 — 150 գրամ) կ'անհետանայ: Այս քանակութեամբ շաքարը հականեխիչ ազդեցութիւն ունի:

ԱՆՔՆՈՒԹԻՒՆ.— Անքնութեան դէմ գլխաւոր միջոց է համարւում հետևեալը.— Բամպակէ գուլպաները պէտք է պաղ ջրի մէջ թրջելուց յետոյ քամել ու հագնել, և այդ թաց գուլպայի վրայից բրդէ չոր գուլպաներ հագնել: Այս գործողութիւնը պէտք է անկողին մտնելուց առաջ անել: Առաւօտը հանել գուլպաները: «Ջրաբուժական այս կօշիկները» շատ է գործածւում այժմ Եւրոպայի մէջ:

ԽԱՂՈՂ ԿԵՐԷՔ.— Խաղողի բժշկումը յանձնարարելի է ույժ տալու համար նրանց, որոնք սակաւարիւն տկար և հիւանդութիւնից նոր ելած են: Բնականաբար խաղողի հետ պէտք է ուտել բնասպիտ ունեցող սնունդ. ինչպէս միս, հաւկիթ և այլն: Իսկ թութք կամ դժուարամարսութիւն ունեցողներին — ոչ:
Օրական կէս բաժինը պէտք է ուտել առաւօտ անօթի, միւս կէսն էլ օրուայ մէջ 2—3 անգամից: Խաղողի կուտն ու մաշկը պէտք է հանել: Խաղողի բժշկութիւնը չորս շաբաթ պէտք է տևէ:

ԻՆՉՊԷՍ ԲԺՇԿԵԼ.— Աչքի շլութիւնը պարզ միջոցով շատ հեշտ է բժշկւում: Առողջ աչքը մետաքսի սև շորով կապում են ու թողում, որ միայն շիլ աչքը գործէ. 10—15 օրից շիլ աչքը բժշկւած է լինում: Կարելի է նաև սև կարտօն կապել շիլ աչքի վրայ, մէջտեղը սիսեռի մեծութեամբ ծակ բանալով, շիլ աչքը ստիպւած է լինելու այդ ծակից նայել ու այսպիսով բժշկւում է:

ՓՈՐՁԸ ԻՆՁ Է ԱՍՈՒՄ. — Փորձառութեամբ ստուգւած իրողութիւն է, որ մարդկանց մեծագոյն մասը չափազանց սնունդ առնելով է մեռնում, քան քիչ սնունդ առնելով:

ՎՈԼՏԷՐԸ ոչ բժիշկ և ոչ դեղ էր ճանաչում. «Դեղերը շներին տալ յարմար է» ասում էր: Բժիշկը ասում էր նա, մի մարդ է, որ տեսակ տեսակ դեղեր մարդու մարմնի մէջ է լցնում, առանց մարմնի մասին տեղեկութիւն ունենալու:

ՄՐՏԻ գիշերային բաբախումների դէմ շատ օգտակար է լիմոնի հիւթը շաքարի ջրի մէջ քամել ու խմել: Այս լիմոնատից 1—2 բաժակ խմելով, ցանկալի արդիւնքը է ստացւում:

ԹԱՐՄ լիմոնի հիւթը լաւագոյն դեղն է հարբուխի, կոկորդի ու քթի բորբոքման դէմ: Ափի մէջ քամելով լիմոնի հիւթը, քթից քաշել

ընդնի մէջ։ Այսպէս երեք անգամ բաւական է կատարելապէս բժշկելու համար։

ՁԿԱՆ ԻՒՂ.

Կազմով վատառողջ, ջիղերով տկար,
Մեծ ու փոքրերուն յաւէտ օգտակար,
Բուժիչ կ'ազդուիչ դեղ մ'անուանի
Եթէ կայ, ձկան զուտ իւղն է անի.
Եւ հրաշագործ այդ ձուկն է Մօռին
Իւր իւղն ըմպողը կը դառնայ կորիւն։
Կուտայ ախորժակ, ոյժ, քուն, և իսկոյն
Կարմրին այտեր խնձորի հանգոյն։

ՄԵՂՐ ԿԵՐԷՔ

Իսկական ծաղկի մեղրը իր սննդառութեամբ գերազանցում է կաթին, մսին և շաքարին, մարդի կազմուածքում չի պահանջում առանձին մշակում կամ կերպարանափոխութիւն, մարսւում է, ծծւում հեշտութեամբ արեան մէջ, ուստի և յանձնարարելի է աճող երեխայոց, փիզիկ. և մտաւոր աշխատողներին, զինուորներին, գիտնականներին, ծերերին, իբրև բարձր սըննդատու արտադրութիւն։ Մեղրը բաղկանում է խաղողաշաքարից (42 տոկոս ։ Բացի դրանից նա պարունակում է երկաթի կիր և ֆոսֆորային աղեր։ Մէկ հացի գդալ մեղրը՝ իր սընն-

դատութեամբ հաւասար է կէս լիտրի (2 թէյի բաժակ) կաթի և մէկ ձուի։ Երկաթի քանակը նրա մէջ հաւասար է սպիտակ հացի նոյնանըման չափի։ Ըստ նորագոյն հետազօտութեան՝ աճող երեխայոց լաւ է տալ մեղր, քան երկաթի հաբիկներ, որովհետև մեղրը հրաշալի նախազգուշացուցիչ միջոց է ռախիտի դէմ, արեան պակասութեան դէմ և այլն։ Այն երեխայոց, որոնց կերակրում են շիշով, կաթին աւելացնում են մեղր, որից նրանք շատ լաւ են զարգանում։ (Вет. Ф-ръ, 1910, № 12)։

ՅԱՋՈՂՈՒԹԵԱՆ ԳԱՂՏՆԻՔԸ

ՄԻՇՏ համբերող ու հաստատուն եղէք ձեր գործերի մէջ։ Շատ մարդիկ անյաջողութեան են հանդիպել անհամբերութեան պատճառով։ Ի՛նչ գործի մէջ էլ լինի, յաջողութեան համար հարկաւոր է ուղղամտութիւն, ժրաջանութիւն և բարեկարգութիւն։ Ով գործի մէջ անփոյթ ու անկարգ է, երբէք չմտածէ թէ յաջողութիւն կարող է գտնել։

ՈՐՋԱՓ էլ փող շատ աշխատէք, աւելի մի ծախսէք։ Որոշ գումար խնայեցէք։ Մանաւանդ երբէք պարտք մի անէք։ Եթէ ամսէնը 500 ըր. օգուտ ունէք, 499 ծախսելով՝ մէկ րուբլին պա-

հեցէք։ Քաղցածութիւնն ու ցուրտը վատ բաներ են, բայց պարտապան լինել շատ աւելի վատ է։ Պարտք մի լինիք ոչ ոքի, որքան էլ փոքր լինի պարտքը։

ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆԻՑ օգտւելու համար պէտք է շատ մտածել։ Շատ հարստութիւնը մի ծանր բեռ է։ Հարստութեան մի վատ կողմն էլ այն է, որ մարդուն ժլատ է դարձնում, իսկ ժլատութիւնը շատ վատ բան է. ինչպէս ասում է Սենեկան «աղքատը զուրկ է շատ բաներից, ժլատը զուրկ է ամեն բանից։»

ԿՈՅՐ միլիօնատէր Տայլ Ռօս ասում է, 28 մլ. ֆրանկս կտամ տեսողութիւնս վերադարձնելու համար. ապա սովորեցնում է հարստանալու միջոցը։ Հարստանալու առաջին պայմանը աշխատանքն է. Նրան պէտք է միանայ կորովամտութիւնն ու նախատեսութիւնը։ Այրեցէք ձեր մայր հաշիւները. կանխիկ առէք և կանխիկ տուէք, երբէք մի՛ նեղւիք, մի քաշւիք «ոչ» ասելու. մերժումը երկու կողմից օգտակար է։ Էժան առածդ, էժան ծախիր. մեծ շահ աչքի առաջ ունենալով երկար ժամանակով սպասիր մի տաք, այդ զգուշութիւնը սկզբում զրաւիչ է, բայց վերջը ձեզ համար կործանարար կդառնայ։

ՀԱՆԳՏԻՆԿՏԸՆ 250 միլիոնի տէր է, հա-

րստանալ ցանկացողներին տալիս է հետեւեալ խրատը։ Գործի ժամանակը չպէտք է շատախօս և ժամավաճառ լինել յաճախորդների հետ պէտք է մեղմ վարւել ու նրանց վստահութիւն ներշնչել ասած խօսքերի մասին։ Զշտապել երբէք հարստանալու, այլ միայն յարատեւութեամբ աշխատել։ Պէտք է գիտենալ, որ հարստութիւն ասածը լոկ դրամ չէ։

ՄԻՀԷՍ 125 միլիոն ունի, ասում է —Հարստանալ ցանկացողներին յորդորում եմ, որ նախ և առաջ իրանց առողջութեանը հոգ տանին, ցաւալի է նրա վիճակը, ով հարստութիւն է դիզում կեանքը տալով. ուստի օրւայ 24 ժամից 8 ժամը պէտք է քնի յատկացնել, 12 ժ. աշխատելու, 4 ժ. հանգստի և զւարճութեան. լաւագոյն է ընկերակցութեամբ գործ սկսել և իրար վերայ մեծ հաւատ ունենալ։

ՀԻՆԱԽՈՒՐՑ ասած է թէ մարդ հարուստ կամ աղքատ կ՚լինի դրամը գործածելու եղանակով, շատ ուղիղ է այդ ասածը։ Չպէտք է ամեն մարդ անպատճառ հարուստ լինի. զանազան պատահականութիւնների առջև պատրաստ գտնւելու համար անհրաժեշտ է մի մաս դրամ խնայողութեամբ պահել, որովհետև եթէ աղքատութիւնը տան դռնից ներս մտնի՝ սէրն ու

անգորրութիւնը պատուհանից դուրս կը թռչին։ Այսու հանդերձ դրամ պահելու համար հարկ չէ ընտանիքը զրկել քաղցած ու մերկ թողնելով։ Փողը խնայելու է, բայց այս խնայողութիւնը փող դիզելուց հեռու է լինելու։ Դրամը խնայել պէտք է ընտանեկան բարեկարգութեան ու անդորրութեան համար։

ՄԱՐԴ ընաւ չի կարող երջանիկ լինել փողով միայն։ Շատ մեծահարուստ մարդիկ իրենց բոլոր կեանքի մէջ գո՛նէ մի վայրկեան բարեբախտ չեն եղած։ Յայտնի չէ՞ միթէ որ շատ հարուստ մարդիկ քաղցածութիւնից են մեռել։ Բիւֆօն ասում է թէ հարուստ մարդիկ այնքան խոռն ու խուռն գործերով զբաղուած են, որ իրենց վրայ խնամք տանելու ժամանակ անգամ չեն ունենում։ Բացի դրանից հարստութիւնն էլ՝ չքաւորութեան պէս՝ մի կարգ մտատանջութիւններ ունի։ Հարուստներն ընդհանրապէս չեն կարող ծախսել իրենց դրամները։ Շատ հարուստ մարդիկ դրամատէր լինելու համար զրկուած են իրենց բարոյական զօրութիւնից։ Ընդհանրապէս աղքատի խրճիթը հարուստի ապրանքից աւելի հանգիստ, աւելի խաղաղ է։

«Համազգ. օր.»

ԲԺ. ԱՂԷՔՍԱՆԴՐ ՂԱԶԱԶԵԱՆ

† 1913 թ. յունվ. 31

ՄԵՐ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԸ 1913Թ ԻՆ

ԲԺԻՇԿ ԱՂԷՔՍԱՆԴՐ ՂԱԶԱԶԵԱՆ

«Կեանքի մէջ շատ սակաւ են երեւում այնպիսի անձինք, որոնք՝ առանց ցուցամոլութեան, ներքնօրէն զգան և իրագործեն այն ամենը, որը գաղափարական և հասարակ օգուտ բնոյթ ունի։ Այդպիսին էր հանգուցեալ բժ Ղազազեանը։

«Այդ գաղափարականութիւնը, իդէալիզմը Ղազազեանի մէջ աւելի ևս զարգացել է ուսանողական շրջանում՝ Պետերբուրգ, երբ Ռուսաստանում տիրում էր 60-ական թւականների ժողովրդասիրական վեհ զգացմունքը, երբ ռուս ուսանողութիւնը ոգեւորւած էր այդ գաղափարով։ Ոչ պակաս ազդեցութիւն ունէին մեր այն ժամանակւայ հայ ուսանողութեան վրայ երկու նշանաւոր, անմահ անձնաւորութիւններ՝ յայտնի գիտնական և ազգասէր Կ. Եզեանը և նրա մտերիմ բարեկամ Սանասարեանը։ Կ. Եզեանի տունը հայ ուսանողութեան համար բաց էր կիրակի և տօն օրերը. ամենքը առանց հրաւէրի մուտք ունէին նրա տունը, ուր հիւրա-

սիրել, միմեանց հետ շփուել և ներշնչուել Եղեանի խորիմաստ մտքերով և ազգային խոհերով—սովորական երևոյթներ էին։

«Վերջացնելով Ակադեմիան, Ղազազեան գալիս է Ախալցխա զինուորական բժշկի պաշտօնով, աւելի լաւ պատրաստուած և տոգորուած իդէալիզմով և շատ շուտով ամուսնանում է Կարապետ աղա Մութաֆեանի դստեր Սոֆիայի հետ, կազմելով մի օրինակելի հայ ընտանիք, ուր գաղափարների և ձգտումների մէջ կատարեալ միութիւն կար. այնպէս բժ. չէր կարող մնալ ցմահ հաւատարիմ իր դաւանանքին։ Ախալցխայում բացի բժշկականութիւնից նա եռանդուն կերպով զբաղւում էր հասարակական և ազգային գործերով, լինելով թէ հոգաբարձու, թէ ուսուցիչ, թէ կարգաւորիչ եկեղեցական գոյքերի և կայքերի և այլն»։

«Մի քանի տարուց յետոյ, 1879 թ. զինուորական պաշտօնով տեղափոխւում է Կարս, ուր նա մնում է 25 տարի։ Այս շրջանը ամենաբեղմնաւորն է լինում. նա՝ ընկերակցութեամբ իր նման իդէալիստ բժիշկներ Տէր-Յարութիւնեանի և Կաճկաճեանի, նոր հոսանք, նոր կեանք են առաջացնում այդտեղ։ Նրանք՝ թէ բժիշկներ, թէ ուսուցիչներ, թէ հոգաբար-

ձուներ, թէ թատերասէրներ և թէ հիմնադիրներ դպրոցների, Կ. Հ. Բար. Ընկ. ճիւղի, մեծ զարկ են տալիս ազգաբնակութեան կուլտուրա—բարեգործական զարգացման։

Ղազազեանը Ղարսի շրջանի հայ ազգաբնակութեան կողմից երկու անգամ ընտրուել է կաթուղիկոսական ընտրութեան պատգամաւոր՝ Ներսէս պատրիարքի և Մակար կաթուղիկոսի ընտրութեան ժամանակ։

«1903-ին հանգ. տեղափոխուել է Թիֆլիս ուր իսկոյն երևացել է նրա գործունէութիւնը եղել է հոգաբարձու, թեմ. խորհ. անդամ և գանձապահ, Ներսիսեան դպրոցի հոգաբարձութեան ընտրութեան Ախալցխայի գաւառից պատգամաւոր, անդամ բազմաթիւ ընկերութիւնների։

Ղազազեանը հեռու չէր գրականութիւնից. հէնց աշակերտական շրջանից նա մասնակցել է Յորէն Սոնեփ. Հայկական աշխարհում և մի քանի թերթերում. վերջերս գլխաւորապէս Առողջապահ և Առողջապահիկում։ Բժշ. Ղազազեանի մասին կարելի է ասել, որ նա մնացել է իդէալիստ մինչև իր մահը և ամենայն իրաւամբ կարող է ասել, որ իր մարդկային և ազգային պարտքը կատարել է լիովին։

ԳԷՈՐԳ ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆ

Գ. Բարխուդարեան ծնուել է Թիֆլիսում 1836 թ։ Սկզբնական ուսումն ստացել է գիմնազիայում, աշակերտել է յայտնի Սաքել վարժապետ Արարատեանին։ Այդ միջոցներին Դորպատի անունը սիրելի էր դարձել Թիֆլիսի հայ երիտասարդների համար Խաչատուր Աբովեանի շնորհիւ։ Բարխուդարեանն էլ ոգևորուում է Դորպատով և գիմնազիայի Զ. դասարանից դուրս գալով՝ փուրգօնով ուղևորուում է Դորպատ 1851 թ.։ Այդ ժամանակ Դորպատի հայ ուսանողութեան ամենածաղկեալ շրջանն էր, ուսանողութիւնը ոգևորուած էր վերածնութեան գաղափարներով։ Բարխուդարեանն էլ ընկնելով հայրենասէր երիտասարդների մէջ, ինքն էլ ոգևորուում է նրանց քարոզած գաղափարներով։ Բարխուդարեան երկու տարի է միայն սովորում Դորպատում, հիւանդութեան պատճառով յետ է գալիս։ Բարխուդարեանը գրել է ոտանաւորներ, բայց նա իբրև ինքնուրոյն բանաստեղծ յայտնի չէ մեզանում, նա յայտնի է իբրև գեղեցիկ թարգմանիչ բանաստեղծ. նրա թարգմանութիւնների գլուխ գործոցը «Ֆաուստն» է։ Բարխուդարեան եղել է ուսուցիչ, թեմական տեսուչ և այլն։

ԳԷՈՐԳ ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆ
† 1913 թ. օգոստ. 13-ին

«Շիրակ» 1914 թ.

ՅՈՎ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
1913 թ. Օգոստ. 23.

«Շիրակ» 1914 թ.

ՅՈՎ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ

Յովհաննէս Տէր-Մարկոսեանը՝ Գրիգոր Արծրունու սիրելին էր, աջակիցը և աւանդապահը, «Մշակի» լաւագոյն աւանդութիւնների պահապանը։
Մտնելով «Մշակի» խմբագրութեան մէջ դեռ պատանի, հազիւ 15 տարեկան, նա շուտով դարձաւ Գր. Արծրունուն աջակից. նա շուտով իւրացրեց նրա լուսաւոր և վեհ գաղափարները և մինչև իր մահը, որ վրայ հասաւ 56 տարեկան հասակում, նա անխախտ հաւատարիմ մնաց Գր. Արծրունու յիշատակին և եղաւ հաւատարիմ դրօշակակիրը նրա թողած մեծ ժառանգութեան՝ «Մշակի»։

Նա իր ուսումն ստացել էր Ներսիսեան դպրոցում, որ այն ժամանակ չէր կարող, ի հարկէ, գիտութեան մի մեծ պաշար տալ իր սաներին, բայց Գր. Արծրունու ղեկավարութեան ներքոյ՝ նա ինքնակրթութեամբ, գրքերի ընթերցանութեամբ ոչ միայն հիմնովին սովորեց ռուսերէնը, ֆրանսերէնը, այլ և ծանօթացաւ ռուսական և եւրոպական լաւագոյն գրական արտադրութիւնների հետ և դարձաւ մի մշակեալ միտք, կարող վիճաբանելու գրական, արւեստագիտական, փիլիսոփայական հարցերի

և նոր գաղափարների մասին։ Նա անշեղ կերպով հետևում էր գրականութեան, կարդում էր ռուս ամսագրերը, կարդում էր ամեն մի նոր վէպ, որ ֆրանսիական կամ ռուսական գրականութեան մէջ աղմուկ էր հանում, և տալիս էր տեղեկութիւն այդ մասին «Մշակի» ընթերցողներին։ Այդպիսի մտաւոր և գրական պատրաստութեամբ, լեզւագիտութեամբ նա, առողջ, գեղեցիկ և զւարթաբարոյ երիտասարդ, ընդունւած Թիֆլիսի լաւագոյն ընտանիքների մէջ, կարող էր ստեղծել իր համար կարիերայ ստեղծել նիւթական ապահովութիւն, բայց նա չէր կամենում բաժանւել Գր. Արծրունուց և «Մշակից»․ շահասիրութեան բացակայութիւնը նրա բնաւորութեան տիրապետող գիծն էր․ գաղափարն էր, որ կապում էր նրան, սերտ շաղկապելով «Մշակի» հետ։

«Մշակի» յոբելեանը այնքան ազդեց նրան, որ նա բաւական ժամանակ իրան կազդուրւած և ոյժերը վերստացած զգաց․ բայց դաւաճան հիւանդութիւնը կամաց-կամաց ըսպառում էր նրա ուժերը։

Եւ նա մեռաւ համեմատաբար երիտասարդ հասակում (56 տարեկան), երբ դեռ կարող էր գործել, աշխատել։

«Մ.»

ՍԻՄԷՈՆ ԶԱՒԱՐԵԱՆ

† 1913 Թ. Հոկտ. 11.

«Շիրակ» 1914 Թ.

ՍԻՄՈՆ ԶԱՒԱՐԵԱՆ

Ծնուել է Սիմոն Զաւարեանը 1867 թւին Լօռի պատմական հայ գաւառակի Այգեհատ կամ Իգահատ գիւղում։ Տարրական կրթութիւն ստացել է մասամբ տանն ու տեղական ծխական դպրոցում, մասամբ Թիֆլիսում. իսկ միջնակարգը Թիֆլիսի րէալական դպրոցում բացառապէս, որտեղ միշտ աչքի է ընկել ոչ միայն իբրև վերին աստիճանի աշխատասէր ու ընդունակ աշակերտ, այլ և վերին աստիճանի շիտակ, ազնիւ պատանի՝ ակնյայտնիօրէն օժտւած վսեմ, բարձր ձգտումներով. միջնակարգ դպրոցում արդէն Զաւարեանը աչքի ընկաւ իբրև մէկն այն հազւագիւտ անհատներից, որոնք կոչւած են ապրել ուրիշների համար…

Րէալականն աւարտելուց յետոյ Զաւարեանը մտնում է այն բարձրագոյն դպրոցը, որը տարիներ շարունակ Ռուսաստանի լաւագոյն փարոսներից մինն է եղել, այն է՝ Մօսկւայի Պետրովսկայա ակադեմիան, որտեղ նա ուսանողութեան մէջ սկզբից մինչև վերջը աչքի ընկնող տեղի ու դերի տէր է լինում, նա իբրև մի բացառիկ հոգու ու սրտի տէր մարդ, որն ամբողջովին տարւած էր ուրիշի ցաւերով

ու հոգսերով, որի տաք սրտից կեանք էր բող-
խում ամենացուրտ մթնոլորտում անգամ,
անչափ յարգուած է լինում ակադեմիայում՝ թէ
ուսանողների, թէ պրոֆէսորների կողմից,
յարգուած ու սիրուած բոլորի կողմից առանց
ազգութեան խտրութեան։ Պետրովսկի ակադե-
միան բացառապէս ռուս առաջադէմ ուսանո-
ղութեան օրրան է եղել անցեալներում, Սի-
մօնի ուսանողութեան տարիներում ու նրան-
ցից առաջ. ակադեմիայի շէնքով անցնելուն
պէս նա միանգամայն արժան համարեց այդ
նուիրական օրրանի զաւակը լինել և եղաւ՝ ոչ
միայն ակադեմիայի պատերի մէջ, ուսանողա-
կան նստարանի վրայ, այլ և, որն անչափ ա-
ւելի գնահատելի է ու արժէքաւոր, այլ և ա-
կադեմիայից դուրս ուսանողական նստարանը
թողնելուց յետոյ, կեանքի պէս-պէս ասպա-
րէզներում և ուղիներում, որոնցից փառաւոր-
ները, բայց և անչափ տառապանքներն էին
վիճակուած Սիմօնին... Ակադեմիան թողնելուց
յետոյ նա տարիներ շարունակ պաշտօնավա-
րում է Կովկասի գիւղատնտեսական ընկերու-
թեան մէջ, կատարում է բազմապիսի յանձ-
նարարութիւններ, պաշտօնավարելով ոչ թէ
տաք առանձնասենեակում, այլ դրսում, գիւ-

ղացիութեան մէջ, ժողովրդի խաւերում, հայ
գիւղացու անշուք խրճիթում, ցրտի, անձրևի
տակ, բաց դաշտում, սարեր ու ձորեր ընկած,
նա ուսումնասիրում է գիւղացիութեան կացու-
թիւնը, նրա տնտեսական վիճակը ու իր ու-
սումնասիրած նիւթը մշակում, գրում ու յանձ-
նում ընկերութեան, որի ամենախոշոր ու ա-
մենագործօն ոյժերից մինն է եղել նա տարի-
ներ շարունակ։

Նա ժամանակ էր գտնում նաև հասարա-
կական այլ գործերի համար, խոշոր ու մեծա-
պահանջ գործերի, որոնցով նա բացառապէս
տարւեց 90-ական թւականների երկրորդ կի-
սից ու որոնք իրենց բազմապիսի ծանրագին
պահանջներով այնքան վաղաժամ կերան, կլա-
նեցին նրան բարի բուն մարդ։

«Հ.»

ԱՂԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ

Աղէքսանդր Քալանթար ծնւել է Վերին-Ագուլիս գիւղում 1855 թ. սեպտ. 20-ին։ Յետագայում նա փոխադրւելով Բագու 1875 թ. ոսկէ մեդալով աւարտել է այնտեղի ռէալական գիմնազիան և մտել է Մոսկւայի Պետրովսկի-Ռազումովսկի գիւղատնտեսական ճեմարանը, ուր և 1879 թ. աւարտել է՝ գիւղատնտեսական կանդիդատի աստիճանով և նոյն թւականին իսկ նշանակւել է Եդիմօնովի կաթնատնտեսական դպրոցի կառավարիչ, որը և վարել է մինչև 1882 թւականը. իսկ այս թւին պետական կալւածների մինիստրութեան յանձնարարութեամբ ուղարկւել է արտասահման—Գերմանիա, Անգլիա, Դանիա, Շվէցիա, Ֆրանսիա, Շվէյցարիա—ուսումնասիրելու կաթնատնտեսութեան գործնական և տեսական դրութիւնը այդ երկրներում, որը կատարելուց յետոյ, 1883 թւականին, նշանակւել է անդամ այն յանձնաժողովի, որին յանձնւած էր հետազօտել Ռուսաստանի անասնապահութեան ժամանակակից դրութիւնը։ Ահա այդ միսիայով Քալանթարը 1883-ից մինչև 1888 թիւը ճանապարհորդել է Ռուսաստանի 15 նահանգներ և, կա-

ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ

† 1913 թ. Հուլ. 20.

«Շիրակ» 1914 թ.

տարելով իրան յանձնած ուսումնասիրութիւնը, մի շարք քաղաքներում կարդացել է իր մասնագիտութեան վերաբերեալ դասախօսութիւններ՝ համագումարների, ցուցահանդէսների ժամանակ և նահանգական ու գաւառական գեմստւային ժողովներում։

Աւարտելով այդ ուսումնասիրութիւնը, նա նշանակուել է Կովկաս և այս անգամ նրան յանձնուել է մի ուրիշ պատասխանատու գործ, այն է՝ պարզել պետական արօտատեղերի դրութիւնը և ընդհանրապէս անասնապահական պայմանները ամբողջ Կովկասում։ Այս հետազօտութեան արդիւնքն է նրա կազմած «Состоянiе скотоводства на Кавказѣ» լուրջ ու մեծահատոր աշխատութիւնը, որը մի խոշոր գանձ է ոչ միայն կովկասեան անասնապահութեան ուսումնասիրութեան վերաբերութեամբ, այլ ընդհանրապէս մասնագիտական գրականութեան մէջ, որը և հրատարակուած է առանձին գրքով 1890 թ. կազմելով 230 մեծածաւալ երեսներ։

Այն օրւանից, երբ Աղ. Բալանթարը հիմնաւորուեց Կովկասում, այն է՝ մօտ, 25 տարիներից ի վեր, չէ եղել որևէ գիւղատնտեսական համաժողով, ցուցահանդէս, որին մասնակցած

չը լինէր նա և որոնց մէջ մացրած չը լինէր իր լուման: Բալանթարի գիւղատնտեսական շրջանում ունեցած գրաւոր գիտաւոր աշխատութիւնների թիւը անցնում էր 140-ից, իսկ կարդացած դասախօսութիւններինը՝ 250-ից: Այդ զեկուցումներն ու դասախօսութիւնները ընդգրկում են մեր երկրի գիւղատնտեսական բոլոր ճիւղերը, վերաբերելով մեր տնտեսական կեանքի բազմազան հրատապ խնդիրներին, ինչպէս անասնապահութեանը, կաթնատնտեսութեանը, ծխախոտագործութեանը, շերամապահութեանը, անասնաբուժութեանը, երկրի ոռոգմանը, անտառագործութեանը, զեմստվային հարցերին և այլն և այլն:

Նա Դր. Արծրունուց յետոյ ամբողջ 20 տարի անշեղ վարեց նրա սկսած, սիրած և փայփայած գործը—«Մշակի» խմբագրի պաշտօնը և շատ դժուարութեանց հետ կապուած թերթի հրատարակչական գործը—միշտ բարձր պահելով նրա դրօշը, և կատարելով հայ կեանքում քաղաքակրթական մի այնպիսի մեծ առաքելութիւն, որի նմանը շատ քիչ ենք տեսնում արձանագրուած հայ վերջին պատմութեան էջերում:

Նա անդուլ ու ժիր աշխատաւոր էր, ունէր որոշ աշխարհայեացք, առաջադիմական ուղղութիւն և անսասան բարոյական սկզբունքներ:

Նա ունէր առանձին չվհատուող ոգի և շինարար ձեռք, և անդադար գործում էր հայութեան բոլոր խաւերում, նրա կեանքի ամեն ասպարէզներում, զբաղուելով անխտիր և նոյն սիրով մամուլի, գրականութեան, թատրոնի, գեղարուեստի, եկեղեցու, դպրոցի, տնտեսութեան, գիւղատնտեսական և ազգային ու քաղաքական հարցերով:

Մենք նրան տեսնում էինք ամեն տեղ, ուր հարկաւոր էր նրա մտքի և սրտի ազդեցութիւնը, որովհետև նա ամբողջապէս նուիրուած էր ժողովրդի՝ մանաւանդ գիւղացիութեան մտաւոր-բարոյական ու տնտեսական զարգացման գործին:

Եւ ահա այսպիսի անձնուէր, չարքաշ և անխոնջ բազմակողմանի աշխատանքը մաշեց, հետզհետէ ուժասպառ արեց և անժամանակ յաւիտենականութեան գիրկը տարաւ մի խոշոր դէմք, և մի անզուգական հասարակական գործիչ մեծ վիպասանի շիրմի մօտ:

ԿՈՍՏԱՆԴԻՆ ԽԱՏԻՍԵԱՆ

Կ. Խատիսեան իր ազգային և հասարակական գործունէութիւնը սկսեց դեռ ուսանողական ժամանակից։ Նա պատկանում է մի ընտանիքի, որ առհասարակ ունի հասարակական ջիղ, ուստի և մատաղ հասակից նրա մէջ եռում էր հասարակական գործունէութեան եռանդը։ Այդ եռանդը նա ամենից առաջ գործ դրեց Թիւրքահայ ժողովրդի դատի պաշտպանութեան համար այն եղանակով, որ հասկանում էր իր ժամանակի երիտասարդութիւնը։ Սակայն, երբ նա իր պրօֆէսիայի բերմունքով (նա ինժեներ-տեխնօլօգ էր) հաստատուեց Բագւում, նա անձնատուր եղաւ հասարակական և ազգային գործունէութեան։ Ունենալով անսահման եռանդ, նա, ինչպէս յատուկ է երիտասարդներին, ձգտում էր միանգամից ամեն բան անել։ Նա տեսնում էր, որ հայ ժողովրդին շատ բան է հարկաւոր, որ նա շատ է յետ մնացել, և կարծում էր, որ կարելի է միանգամից ամեն բան անել նրա համար, նա կամենում էր միաժամանակ նպաստել և հայ գիւղացուն, և հայ արհեստաւորին, և հայ բանուորին, և հայ դպրոցին, և հայ գրականութեանը,

ԿՈՍՏԱՆԴԻՆ ԽԱՏԻՍԵԱՆ
† 1913 թ. Հոկտ. 24.

«Շիրակ» 1914 թ.

և հայ գեղարւեստին։ Ուստի երկար ժամանակ որոնում չէր, տատանումներ էր անում և նրա այդ որոնումները, տատանումները վերջ ի վերջոյ ձուլեցին մի կազմակերպութեան մէջ, որին նա տւեց «Հայոց Կուլտուրական Միութիւն» անունը և որով նա կամենում էր գոհացում տալ հայ ժողովրդի վերոյիշեալ բազմատեսակ պահանջներին։

Չի կարելի չը գնահատել Ծատուրեանի այն անսահման, սաստիկ եռանդը, որով նա նւիրւում էր գործին, և նւիրւում էր շտապով, յաճախ լաւ չը մտածւած ձևով, ուստի և երբեմն էլ ստիպւած էր լինում թողնել մի ըսկսած գործը և սկսել մի ուրիշը։ Նա չը գիտէր յուսահատւել. չէր աջողւում իր ձեռնարկած մի միջոցը, նա առանց վհատւելու՝ ձեռնարկում էր երկրորդ, երրորդ միջոցներին, մինչև որ կարողացաւ, ինչպէս ասացինք, գտնել մի ուղի, որի մէջ նա յարատևեց, այն է՝ «Կուլտուրական Միութիւնը», որի հոգին էր նա և ղեկավարը։

Կ. Ծատուրեանը մասնակցում էր ոչ միայն Բագւի, այլ և ուրիշ տեղերի հասարակական և ազգային գործերին։

«Մ.»

ՅՈԲԵԼԵԱՆՆԵՐ

1914 թւին

Լազարեան ճեմարանի 100-ամեակը

ԼԱԶԱՐԵԱՆՆԵՐ

Շատ քիչ յայտնի տոհմեր կարողացել են հռչակւել ազգի և հայրենիքի համար բարեգործութիւններով, ինչպէս Լազարեանների յայտնի տոհմը:

Այս պատւական տոհմի երեք սերունդը հարիւր տարւայ ընթացքում (արական ճիւղի վերջին շառաւիղը Խրիստափոր Լազարեան մեռաւ 1871 թ.) հազւագիւտ համեստութեամբ մրցում էին բարեգործութեան ասպարիզում, իրանց սրտին մօտիկ ընդունելով թէ քաղաքացիների և թէ իրանց ազգակից հայերի կարիքը, որոնց լուսաւորութեան համար ահագին զոհաբերութիւն արին:

Ո՞ւմ յայտնի չէ 1815 թ. հիմնած և ապահովեցրած արևելեան լեզուների Լազարեան ճեմարանը: Նրանց բարեգործութեան արդիւնք են նոյնպէս մայրաքաղաքի հայոց եկեղեցիները, ուղղափառների շատ տաճարներ իրանց միաբանութեան բնակարաններով, շատ դպրոցներ և աստւածահաճոյ հաստատութիւններ:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԼԱԶԱՐԵԱՆ

Լազարեան ճեմ. 100-ամեակի առթիւ

«Շիրակ» 1914 թ.

Դեռ 1856 թ. Լազարեանների զանազան բարեգործութիւնների համար նուիրաբերած գումարը 2 միլիօն րուբլու էր հասնում։

Լազարեանների տոհմը (որոնք մինչև Ռուսաստան գաղթելը կոչւում էին Եղիազարեան), ինչպէս երևում է Եկատերինա II-ի 1771 թ. հոկտ. 3-ի շնորհած հրովարտակից, ծագում են իշխանական ցեղից։

XIV դ. Կիլիկիայի հայոց թագաւորութեան անկումից յետոյ, Հայաստանի զանազան մասերում մնացել էին կիսանկախ հայ իշխանական ցեղեր. սրանց թւին հաւանօրէն պատկանում է և Լազարեան տոհմը։

XVIII դարում աղւանների արշաւանքից յետոյ, Պարսկաստանում առաջացան խռովութիւններ, որից ստիպւած Ջուղայի նշանաւոր հայերը թողին իրանց հիմնած գաղութը և ցրւեցին Ասիայի և Եւրոպայի զանազան կողմերը, սկսած Հնդկաստանից և Արշիպելագ կղզիներից մինչև Աւստրիա և Ռուսաստան։ Ռուսաստան գաղթած հայերի թւումն էին և Լազարեանները։

Լազարեանների Նահապետը Ղազար Նազարեան Լազարեանը Պարսկաստանից իւր հետ բերում է մեծ հարստութիւն և թանկագին քա-

ներ, որոնց թւում լինում է յայտնի «Օրլովեան» գոհարը (185 կարատ), որը այժմ զարդարում է ռուսաց կայսերական գաւազանը։ Այդ գոհարը Լազարեանից գնել է կոմս Ա. Օրլովը 450 հազար ռուբլով, իսկ այժմ գնահատում են մօտ 2 միլիօն ռուբլուց աւելի։ Պատմում են, որ Լազարեանը պարսից շահերից այդ գոհարը թագցնելու համար, ճեղքել է իր ազդրը և թագցրել նորա մէջ։

Լազարեանը սկզբում բնակութիւն հաստատեց Հաշտարխանում, իսկ յետոյ տեղափոխուեց Մօսկւա։ Մօսկւայի շրջակայքում նա հիմնեց օրինակելի բամբակի և մետաքսի գործարաններ և ձեռնտու գներով մատակարարում էր արքունիքին, մրցելով Լիօնի յայտնի գործուածքների հետ։ Տաղանդաւոր Լազարեանը շուտով իր վրայ գրաւեց Եկատերինէ II-ի ուշադրութիւնը, որը վրաց թագաւորի և հայոց կաթուղիկոսի հրովարտակի համաձայն՝ Լազարեաններին տոհմային ազնուականութիւն շնորհեց։

Ղազարի մեծ որդի (ծն. 1735 թ. † 1801 թ.) Յովհաննէսը, որ առանձին կրթութեան և ընդունակութեան տէր էր, տեղափոխուեց Պետերբուրգ, որտեղ ամենամօտիկ յարաբերու-

թիւն էր պահպանում Եկատերինէ II-ի շրջանի նշանաւոր գործիչների՝ ինչպէս իշխան Պօտեօմկինի, կոմս Զուբովի և այլ ուրիշների հետ։ Յովհաննէս Լազարեան օգտուելով Եկատերինէի, Պաւել I-ի և Աղէքսանդր I-ի բարեհաճութեամբ ստացաւ յայտնի հաստատական գիրք։ Լազարեան յայտնի էր ընդհանրապէս իր մեծ բարեգործութիւններով։ Նա 100 հազար ռուբլի նուիրեց աղքատներին, որի համար ռուսաց Պաւել կայսրը իր ձեռքով նորա պարանոցից կախեց Յովհաննէս Երուսաղեմցու շքանշանը։

Լաւ ճանաչելով իր ազգակիցների կրօնասիրութիւնը և ուսումնասիրութիւնը, նա իր եղբայրների հետ միասին շինեց Մօսկւայում և Պետերբուրգում հայոց եկեղեցիներ, ապահովեցրեց նրանց տներով, կտակեց նոյնպէս հայոց ուսումնարանի, ապագայ Լազարեան ճեմարանի համար 200 հազար ռուբլի։

Յովհաննէս Լազարեանը մեռաւ անժառանգ և կտակեց իր մեծ կարողութիւնը իր փոքր եղբայր Յովակիմին (Ծն. 1743 թւին, † 1826 թ.)։

Յովակիմ Լազարեանը, որը յայտնի էր իր բարեսրտութեամբ, սրտանց համակրելով

իւր եղբօր կտակը, իւր ընտանիքի հետ աւելացրեց նոյն նպատակով 300,000 ռուբլի և աննկուն ջանքով աշխատեց իրագործել և ահա 1815 թ. յաջողւեց նրան բաց անել Լազարեանների անւամբ մի համեստ տարրական ուսումնարան, 30 հայ աշակերտների համար։

1818 թ. Լազարեանը, սանիկների հովանաւորութիւնը յանձնեց իւր Յովհաննէս և Խրիստափոր որդիներին։ Սրանց աչալուրջ հսկողութեամբ զարգացաւ այս նորահաստատ ուսումնարանը, որը շուտով կոչւեց հայոց Լազարեան ճեմարան արևելեան լեզուների։ Ճեմարանի ուսումնական և նիւթական զարգացման համար Լազարեանները ոչ մի միջոց չէին խնայում։

Արդէն 1835 թ. Լազարեան ճեմ. ստացաւ արքունական գիմնազիայի իրաւունք, իսկ 1848 թ. լիսարանական իրաւունք՝ իբրև բարձրագոյն դպրոց։

1850 թ. Խրիստափոր Լազարեանին պատահեց ընտանեկան մի մեծ վիշտ. նա զրկւեց իւր մանկահասակ 7 տարեկան մի հատիկ Յովհաննէս որդուց։ Մանուկը, որ ծնւել էր իւր ծնողների ամուսնութեան 25-րդ տարին, նորան մկրտել էր Ներսէս V կաթուղիկոսը (այդ

Իշխան Ս. Ս. ԱԲԱՄԵԼԻՔ-ԼԱԶԱՐԵԱՆ
Լազարեան ճեմ. ներկայ հոգաբարձուն և Լազարեան տոհմի վերջին շառաւիղը։

«Շիրակ» 1914 թ.

բացառիկ երեւոյթ է)։ Որդեկորոյս ծնողները իրանց մխիթարութիւնը սկսեցին որոնել զանազան բարեգործութեանց մէջ. բացի դպրոցներին, եկեղեցիներին մեծ գումարներ յատկացնելուց. 60,000 րուբլի էլ յատկացրին Լազարեան Ճեմարանի պատրաստական բաժանմունքների համար, կովկասեցի երեխաների համար։

Խրիստափորը ժառանգ չունէր. կամենալով ապագայում ևս ապահովել իրանց ազգանուամբ հիմնուած հաստատութիւնը, կարգադրեց յանձնել ճեմարանը լուսաւորութեան նախարարութեան այն պայմանով միայն, որ ճեմ. պատուաւոր հոգաբարձու լինէր իշխան Ս. Դ. Աբամելիկ տոհմի աւագը, որը ամուսնանալով Խրիստափորի աղջկայ հետ, ստացաւ և Լազարեան ազգանունը։ Իշխան Ս. Դ-ի մահուանից յետոյ, Լազարեան ազգանունը և հոգաբարձութիւնը ժառանգեց իշխան Ս. Ս. Աբամելիկ-Լազարեանը։

Անմահ բարեգործների համար Լազարեան Ճեմարանում կանգնեցրած է արձան. բայց յաւիտենական արձանը այն է, որ նրանք կանգնեցրին ռուսաց լուսաւորութեան պատմութեան մէջ և իրանց սանիկների սրտերում։

ԷՋՄԻԱԾՆԻ ՃԵՄ. 40-ԱՄԵԱԿԸ

ԳԷՈՐԳ Դ. ԿԱԹՈՂԻԿՈՍ

Գէորգ Դ. կաթուղիկոսի տասնեվեց տարուան կաթուղիկոսութեան ժամանակ (1866—1882) մի քանի յիշատակելի արժանի գործեր կատարուեց: Իր օծումը ընդունելուց յետոյ, Նորընտիր Հայրապետը մի ճանապարհորդութիւն կատարեց Ռուսաստանի հայաբնակ քաղաքները, նոյնպէս և Լեհաստանի և Աւստրիայի մի քանի տեղերը՝ իր ցրուեալ հօտի բարոյական և մտաւոր վիճակին անձամբ տեղեկանալու համար: Այս երկար ուղևորութիւնից Ս. Էջմիածին վերադառնալով, Կաթուղիկոսի առաջին գործն եղաւ հիմնել Արարատ կրօնական պաշտօնական ամսաթերթը (1868), որի արդիւնքը յառաջացրեց Մայր-Աթոռի տպարանի և ձուլարանի բարուոքմանը: Նոյն թւին Ռուսահայոց օժանդակութեամբ ձեռնարկեց շինել Մայր տաճարին կից՝ արևելեան կողմից մի ընդարձակ պահարան երեք առանձին բաժանումներով, ուր զետեղուած են այժմ Ս. Էջմիածնի բոլոր սրբութիւնները, հնութիւնները և թանկագին իրեղէնները: Հայ եկեղեցիներում կանոնաւոր և մի օրինակ երգեցողութիւնը մտցնելու հոգ տանելով, ամեն հայա-

ԳԷՈՐԳ Դ. ԿԱԹՈՂԻԿՈՍ
Հիմնադիր Գէորգեան ճեմարանի
(ճեմարանի 40-ամեակի առթիւ)

«Շիրակ» 1914 թ.

ԳԷՈՐԳԵԱՆ ՃԵՄԱՐԱՆ. Ճեմարանի 40-ամեակի առթիւ

բնակ քաղաքներից ձայնեղ երիտասարդներ ժողովեց և հմուտ երաժշտի առաջնորդութեամբ հայկական ձայնագրութեան արւեստը ուսուցանել տալուց յետոյ, իրանց տեղերը ուղարկեց նոյն արւեստը բոլոր հայ դպրոցներում ուսուցանելու համար. բոլոր եկեղեցական երգեցողութեան գրքերը նոր ձայնագրութեամբ տպագրել տւեց և ամեն տեղ ցրւեց, որպէս զի բոլոր եկեղեցիներում գործադրւին (1874): Վերջապէս եկեղեցականութեան վիճակը բարձրացնելու և ազգային ուսումնարանների համար հմուտ ուսուցիչներ պատրաստելու նպատակով, Գէորգ կաթողիկոսը մտածեց իրացնել այն գաղափարը որ երկու նախորդ կաթողիկոսները յղացել էին, հիմնելով Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանը, ուր այսօր խմբւած են 200-ի չափ պատանիներ զանազան հայաբնակ տեղերից և սնւում ու կրթւում են Մայր Աթոռի ծախսով:

Ճեմարանը բոլորեց իր քառասնամեայ գոյութեան շրջանը, մատակարարելով հայ ազգին ուսուցիչներ, կրթւած հոգևորականներ և այլ հասարակական գործիչներ:

ՍԱՐԳԻՍ ՄՈՒԲԱՅԵԱՃԵԱՆ—ԱՏՐՊԵՏ

Գրական գործ. 25-ամեակի առթիւ

Ատրպետը ծն. 1860 թ. յունուարի 18-ին Կարս քաղաքում Թուրքական տիրապետութեան շրջանում: Սկզբնական կրթութիւնն ստացել է Խալիֆա—վարպետների մօտ:

1873 թ. հակառակ հօրեղբայրների կամքին թողնում է Կարսը և գնում Կ. Պոլիս հօրը գտնելու, որը տաս տարի առաջ պանդխտած և տուն չէր վերադարձած: Այնտեղ մի տարի մնում է Փանկալթի Վիէննայի Մխիթարեանների վարժարանը, ուր աշակերտում է ինչպէս Հ. Արսէն Այտընեանին, նոյնպէս և Հ. Գրիգ. Գովրիկեանին ու ապա երկրորդ տարին մտնում է Օսմանեան լիցէն, ուր մնում է մինչև 1878 թ. մայիս, և առանց շրջանն աւարտելու նոյն աշնանը վերադառնում է Կարս, երբ արդէն ծննդավայրին տիրել էին ռուսները:

1879 թ. Ատրպետը Էրզրումում, Մուշ, Բղի և Բալի ճանապարհորդելուց յետոյ, 1880 թ. դարձեալ վերադառնում է ծննդավայրը: 1881 թ. Կարսում եօթը տարի ուսուցչութիւն անելուց յետոյ, 1893 թւականին մի տարի էլ Թաւրիզում է դասեր աւանդում Արամեան դպրոցում:

ԱՏՐՊԵՏ

Գրական գործ. 25-ամեակի առթիւ.

«Շիրակ» 1914 թ.

Ատրպետի առաջին երկը—«Դեւ Դանիէլ» դեռ 1885 թ. ընկեց Թիֆլիսի գրաքննական ատեանը, իսկ առաջին վէպը լոյս տեսաւ միայն 1889 թ. մայիսի 12-ին Թիֆլիսում «Մուրճ» հանդեսի № 5 և շարունակաբար։ Ատրպետի բեղմնաւոր գրիչը 25 տարուան ընթացքում 120 կտոր երկեր է տուել հայ գրականութեան, որոնք տպուել են քանից աւելի հայկական թերթերում և հանդէսներում, ինչպէս Կովկաս, նոյնպէս Եւրոպա և Ամերիկա։

Ատրպետը այս 25 տարուան ընթացքում գրել է ինչպէս վիպական, նոյնպէս թատերական և երգիծական գրուածներ, որոնց մի փոքր մասը հրատարակուած է առանձին գրքերով, և «Երկերի ժողովածուի» 10 հատորների մէջ։ Եթէ Ատրպետի մինչև օրս զանազան լրագրների մէջ լոյս տեսած երկերը արտատպուին, կարելի է 10—12 հատոր դարձեալ կազմել։

Ատրպետը իր վիպական գրուածների մէջ նկարագրել է գլխաւորաբար Թուրքահայերի, Պարսկահայերի և Ռուսահայերի կենցաղը։ Այդ գրուածները բոլորն էլ իրական կեանքից են վերցրած, ընական կենցաղի արտանկարներն են դուրս բերուած լուսանկարչական նրբութեամբ, միայն թէ ճաշակաւոր ընտրութեամբ։

Սարգսեան գրել է երգիծական գրուածներ, որոնցից մի մասը ամփոփուած է Դիմակներ հրատարակութեան մէջ։ Սարգսեանի երգիծական գրուածները գրեթէ ընդհանրապէս ուղղուած են հայ ուսանողութեան, հայ համալսարանականների դէմ, որոնք տարիներով մաշել են Ռուսաստանի բարձրագոյն ուսումնական կաճառների դռները և այնտեղից վերադարձել են դատարկ գլխով և հոգով։

Սարգ՛սը չի բաւականացել միմիայն բելլետրիստիկայով, նա հրատարակել է մինչև օրս 200-ից աւելի ուսումնասիրութիւններ, քննադատութիւններ և հետազօտութիւններ զանազան լրագրներում և հանդէսներում, որոնցից դարձեալ մի մասը արտատպուած է գրքերով և տարածուած ժողովրդի մէջ։

Իսլամի առթիւ Սարգսեանի գրուածքները, թէ Թիւրքիայի և թէ Իրանի մասին այնպիսի ընդարձակ ուսումնասիրութիւններ են, որ կարող են անչափ մեծ կէտեր պարզել ընթերցողին։ Խալիֆաթն ու Իմամաթը այնպիսի նորութիւններ են պատմում մեր դրացիների աշխարհահայեացքի մասին, որ հետաքրքիր ընթերցողը նրանց մէջ օգտակար անչափ նիւթեր կգտնի։

ՊՕՂՈՍ-ՓԱՇԱ ՆՈՒԲԱՐ

«Շիրակ» 1914 թ.

ՊՕՂՈՍ ՓԱՇԱ ՆՈՒԲԱՐ

Պօղոս Նուպար, մեծանուն դիւանագէտ Նուպար փաշայի որդին է. ծն. 1851 թ. ժառանգել է հօր բոլոր գեղեցիկ ձիրքերը։ Բարձրագոյն կրթութիւն ստացել է Եւրոպայում։ 1900 թ. հեղինակել է մի երկրագործական շոգեշարժ արօր և այնպէս կատարելագործել, որ Ֆրանսիական կառավարութիւնը արժանացրել է Պատուոյ Լէգէոնի շքանշանի։ 1895—96 թ. կոտորածներից յետոյ փախչող գաղթականների հօսանքը Պօղոս փաշայի ցոյց տուած աջակցութեան շնորհիւ սիրալիր ընդունելութիւն գտաւ թէ Եգիպտոսում և թէ Ֆրանսիայում. այս առթիւ Նուպարեան ընտանիքը առհագին գումարներ հանգանակեց։ Գահիրէի և Աղեքսանդրիայի Աղքատախնամ ընկերութիւնները շարունակ 17-ական ոսկի ամսական վճար են ստանում Նուպարեան ընտանիքից։

Պօղոս փաշա Պոլսոյի մէջ իր ծախքով հիմնեց երկսեռ ազգային վարժարան իր բոլոր գոյքերով կահաւորած։ Պօղոս փաշայի մեծագոյն փառքը պիտի լինի իր նախաձեռնութամբ հիմնած Եգիպտոսի Հայկական Բարեգ. միութիւնը։

Նուբար-փաշան, Պօղոս փաշայի հայրը, իր քաղաքական գործունէութեամբ այնպիսի դիրք էր բռնել, որ նա համայն Եւրոպայի համակրութիւնը վաստակեց իր եռանդուն և խելացի ձեռնարկութիւններով։ Եգիպտոսի մէջ հիմնած միջազգային դատավարութիւնը այնպիսի բարձր դիրքի էր հասցրել, որ ոչ միայն ամբողջ Եւրոպական գաղութը մեծ հաճութեամբ օգտւում էր այդ դատարաններից, այլ Եգիպտոսի բնիկները—խալիֆներն անգամ իրենց նեղք ու գործերը ամենամեծ վստահութեամբ այդ դատարաններին յանձնեցին։

Իր վերանորոգութիւններով Եգիպտոսն այնպէս բարձրացրեց, որ համայն եգիպտական ազգաբնակութիւնը ի նշան երախտագիտութեան Նուպար փաշայի համար այնպիսի արձան կանգնացրին, որ նրանով պարծենում են։

Նուպար-փաշայի սրտին նոյնպէս շատ մօտ էր իր տոհմը, իր ցեղակիցները՝ հայերը, որոնց մասին ոչ միայն Եգիպտոսում, այլև Տաճկաստանի զանազան քաղաքներում կուլտուրական և հասարակական բոլոր գործերին նպաստել է, ոչ միայն խորհրդով, այլ մեծամեծ զոհողութիւններով։ Նուպար-փաշայի սրտին շատ մօտ էր նոյնպէս Հայկական խնդիրը, նոյն իսկ Անգլիացիները նրան առաջարկեցին վեց վիլայէթների համար վալի, բայց Համիդ Բ-ի մեքենայութիւնները օդը ցնդեցրին մեծ ժողովրդական մարդու ծրագիրները։

Պօղոս-Նուպար փաշան, թէև պատահականութեամբ երկրաչափ, ջրաբաշխ և գիւղատնտես է, բայց հօր ծրագրները, ազգակիցների սոսկալի վիճակը այնպէս ծանրացած էր նրա սրտին, որ հետևելով հօր ընթացքին, 1912 թ. ամենայն հաճութեամբ յանձն առաւ վեհափառ Գէորգ Ե. կաթողիկոսի առաջադրութիւնը, ստանձնեց պատւիրակի պաշտօնը Եւրոպական մեծ պետութիւնների մօտ, պաշտպանել Հայկական վեց՝ վիլայէթների վերանորոգութեան և բարեկարգութեան խնդիրը։

Պօղոս Նուպար փաշան ոչ միայն մեծ անձնազոհութիւններով պաշտպանում է այդ խնդիրը, այլ քաղաքագէտի ամենանուրբ դարձւածներով և հաստատամիտ հետապնդումներով ահա երկրորդ տարին է, որ վարում է այդ գործը։

ԸՆՏԻՐ ՄՏՔԵՐ

—Կեր քո ախորժակի համեմատ, բայց հագիր ուրիշների ճաշակի համեմատ։

—Կեանքը ոչ տօնի օր է, ոչ էլ սուգի. այլ՝ աշխատութեան։

—Ուրիշի կենաց համար շատ բաժակ դատարկողը իր կեանքը դատարկած կլինի մահուան։

—Վախկոտը վտանգից առաջ է վախենում, վատը, վտանգի ժամանակ, իսկ քաջը՝ վտանգից յետոյ։

—Ծիծաղի մէջ երջանկութիւն և բարութիւն կայ. Ծաղրի մէջ՝ մաղձ ցաւ, չարութիւն։

—Մենակ եղած ժամանակ՝ միտք բեր քո պակասութիւնները. իսկ հասարակութեան մէջ՝ մոռացիր ուրիշների պակասութիւնները։

—Չկայ մի բան. որ Յաջողութեան պէս լայնացնէր բարեկամների շրջանը, և Ձախորդութեան պէս՝ փոքրացնէր նոյն շրջանը։

—Անելիքդ ճիշտ արա, մի խօսիր նրա մասին. այս է բոլոր ձեռնարկութիւնների մէջ յաջողութեան գաղտնիքը։

Վտանգից խուսափիր, բայց երբ վտանգի առաջ ես, գիտցիր կռուել նրա դէմ։

—Վշտերը կատակների են նման. ամենավերջինը միւսներին ոչնչացնում է։

—Առանց մեծ սրտի մեծ մարդ չկայ։ Վովենարկ իրաւունք ունի ասելու «մեծ մտածութիւնները սրտից են բղխում»։

—Հրաժարուել ազատութիւնից, նշանակում է հրաժարուել մարդու յատկութիւններից, մարդկային իրաւունքներից, նոյն իսկ իր պարտականութիւններից։

—Լաւ մտածելուց յետոյ մի ասիր «պիտի անեմ», այլ՝ անմիջապէս «կանեմ»։ Այսպիսով է, որ կամքդ պիտի ուժեղանայ։

—Իմաստունը համեստ է փառքերի մէջ և հպարտ ձախորդութիւնների ժամանակ։

—Դանդաղ եղիր խրատ տալու մէջ, ըշտապող նրան գործադրելու մէջ։

—Հարստութիւնն ու երջանկութիւնը մեզ այցելում են կրիայի քայլերով, իսկ մեզնից հեռանում են եղնիկի արագութեամբ։

—Կեանքի մէջ ունեցիր գառնուկի քաղցրութիւն, առիւծի ույժ և փղի արթնամտութիւն։

—Արծիւը երբէք չի գրօհում ճանճեր որսալով, ոչ էլ առիւծը՝ նապաստակ, ճշմարիտ գիւցազնի նման, որ մեծ գործերի է ձգտում։

ԿԻՆ ԵՒ ՍԷՐ

—Սիրող կնոջ սիրտը ոսկի սրբարան է, ուր շատ անգամ կանգնում է որևէ կաւէ կուռք:

—Սէրը արևի լոյսն է, իսկ ամուսնութիւնը նրա ստուերը:

—Բոլոր սէրերի վերջաբանը՝ կանանց մօտ՝ ջերմեռանդութիւնն է:

—Պճնողութիւնը թակարդ է, որ կնոջ սնապարծութիւնը լարում է տղամարդու համար:

—Սիրելը դաշինք կնքել է վշտի հետ:

—Կանայք այնքան զօրաւոր չեն, որքան երբ զինւում են իրենց տկարութեամբ:

—Աստուած կանանց հանճարը դրել է նրանց սրտի մէջ, որովհետև հանճարի բոլոր գործերն էլ սիրոյ գործեր են:

—Պատուաւոր կինը պահւած մի գանձ է: Նա՝ ով գտել է՝ լաւ կանէ չ՚պարծենայ նրա մասին:

—Սէրը տակաւին այն կերպասն է, որ ամենից աւելի հեշտութեամբ է պատռւում և ամենից աւելի շուտ է կարկատւում:

—Սէրը կանոնաւոր բայ է, երբ կնոջ

հետ ես խոնարհում: Անկանոն է դառնում՝ երբ ուրիշի կնոջ հետ ես խոնարհում:

—Սէրը բնակւում է ամենից ազնիւ սրտերի մէջ, ինչպէս որդը ապրում է ամենալաւ վարդի կոկոնի մէջ:

—Պճնասէր կինը տարբերութիւն չունի այն ճոխ յանգ ունեցող ոտանաւորից, որից միշտ իմաստը բացակայ է:

—«Ոչը» կանանց բերանի մէջ «այո»-ի անդրանիկ եղբայրն է:

—Սէրը այն թևն է, որ Աստուած տուել է հոգուն մինչև իրեն մօտ բարձրանալու համար:

—Կինը իր ամուսնուն միայն երկու երջանիկ օր է ցոյց տալիս. հարսանիքին ու թաղման օրը:

—Աւելի Սնապարծութիւնն է, որ պատճառ է լինում կանանց անկմանը, քան թէ Սէրը:

—Երբ նորահաս աղջիկը դադարում է կարմրելուց, կորցրել է իր գեղեցկութեան ամենազօրաւոր հրապոյրը:

—Կանայք լի կոկորդով կուլ են տալիս իրենց փայփայող սուտը, իսկ ումպ ումպ են կուլ տալիս իրենց համար ասուած դառն ճշմարտութիւնը:

ԵՐԱԶԱՀԱՆ*)

Ա.

Աստուած երազում տեսնելը՝ լաւ է, ամեն չարից կազատուի. թէ Աղքատ է կը հարստանայ, թէ հիւանդ է կառողջանայ։ Աստուած տան մէջ տեսնելը՝ տան նորոգութիւն է։

Աստղ տեսնելը լաւ է, եթէ տան մէջ տեսնես՝ բարիքդ կաւելանայ, օտար տեղ լինիս, յաջողութեամբ կը վերադառնաս։ Շատ աստղեր տեսնելը՝ ճանապարհ գնալ է և շահ։

Ասպար տեսնելը՝ պատիւ է։

Արեգայ տեսնելը՝ փառք, պատիւ կամ կռիւ է։

*) Հրաւիրում ենք ընթերցողների ուշադրութիւնը օրացոյցիս մէջ տպագրուած բժշկապետ Ա. Բաբայեանի «Անգիտակցական ոգին» խորագրով յօդուածի վրայ, ուր գիտնականօրէն բացատրուած են թէ ինչ են երազները։

Առաջիկայ 1915 թ. մենք կտանք մի շարք գիտական լրացուցիչ տեղեկութիւններ դարձեալ երազների մասին։ Իսկ այժմ տպագրում ենք Դանիէլ մարգարէին վերագրուած երազների բացատրութիւնը իբրև ուսումնասիրութեան նիւթ հետաքրքրուողների համար։

Աքաղաղ մորթած՝ բարի է և կաւի նշան։

Ագռաւներ, թշնամիներդ կը յարձակուին քեզ վերայ։

Աթոռ տեսնելը՝ մեծութիւն է։

Աթոռ նստելը՝ բարձրութիւն է։

Ալեւր իրան տեսնելը՝ հարստութիւն է։

Ալիւրը շահ է և ոյժ. ալիւրն ամանով տեսնելը՝ մուրազ է։

Ականջը, աղջիկ է, կամ աչքալոյս։ Ականջ կտրելը վնաս է։

Աղաւնի տեսնելը՝ շնորհք է։

Աղուէս տեսնելը՝ ահ ու երկիւղ է, թէ որսաս՝ թշնամուդ կը յաղթես։ Աղուէսը, թէ մարդուց փախչի իր պարտականը կը փախչի։ Աղուէսի հետ կռիւ անողը՝ իր օգտին կռիւ կ'անի։

Աղջիկ իր ծոցում տեսնելը՝ խնդութիւն է։ Փոքր աղջիկ տեսնելը շատ օգուտ է։

Աղբիւր տեսնելը՝ շատ բաներից օգտուելու նշան է, աղբիւրից լւացուելն՝ օգուտ է. աղբիւրից ջուր վերցնելը վատ է. աղբիւրից ջուր խմելը՝ շնորհք է և բարի։

Աղ ու անանուխ տեսնելը՝ բարի և անուշ խօսք է. միմիայն աղ տեսնելը կռիւ է. սպիտակ աղը՝ փող և օգուտ է. սև աղը՝ վատ

խօսք և տրտմութիւն։

Աղի ձուկը՝ կսկիծ է և հոգս։

Աղեղ տեսնելը՝ մեծ զրոյց է։

Ամպերի ճայթմունք լսելը՝ բարի չէ։

Իրեն աղեղնաւոր տեսնելը՝ թշնամանող լեզու է։

Աղիւս հանելը՝ տան շինութիւն է և լաւ։

Աղքատին բան բաշխելը բարի և օգուտ է։

Ամանաթ առնել և պահելը՝ շահ է։

Այծ տեսնելը՝ ճանապարհ է։

Այրուած հանդերձը՝ (շորը) մահուան վնաս և երկիւղ է։ Այրուած և աւերուած տեսնել իւր տունը՝ վնաս է։

Անձրև ժամանակ տեսնելը՝ բարի է։

Անդաստան տեսնելն՝ աշխատանք է։

Անապատում նստելը՝ նեղութիւն է։

Աչքեր տեսնելը՝ շատ հարստութիւն է. Մեծ աչք ունենալ՝ երկարակեցութիւն է. աչք հանել, կնոջ կամ որդու մահ է.

Ապարանջանը, նեղութիւն և հոգս է։

Առիւծ տեսնելը՝ թագաւոր, իշխան և կամ մեծ մարդ է։

Եթէ երկու առիւծ իրար հետ կռուին՝ երկու թագաւոր կամ երկու մարդ կը կռուին։

Եթէ դու առիւծի վրայ նստած լինիս՝ պա-

րոնութիւն (աղայութիւն) կ՚առնես։ Եթէ առիւծը դէմդ դուրս գայ՝ մեծ մարդուց երկիւղ կը հասնի քեզ։

Առու տեսնելը գանձ և օգուտ է.

Ատամ.—Եթէ բոլոր ատամներդ թափուին՝ շատ գանձ կը գտնես։ Եթէ առաջին ատամդ ընկնի՝ ոգի կը հանդիպես և ճանապարհ կը գնաս։ Առաջին ատամները հանելը որդոց մահ է գուշակում։ Ներքին ատամներ հանելը՝ տրտմութիւն է, իսկ թէ վերինը հանես, ազգականներից մէկը կը մեռնի։ Սևացած ատամները՝ հիւանդութիւն է։

Արեգակ տեսնելը՝ թագաւոր է։ Արեգակը իւր ձեռքում տեսնելը՝ պարոնութիւն է տեսնողի համար։ Խաւար արեգակ տեսնելը՝ տեսնողի համար չար է։ Երկնքից ընկած արեգակ տեսնելը՝ թագաւորի մահ է։ Արեգակ տեսնելը նեղութիւն է. արևն ամպի տակ տեսնելը՝ նեղութիւն կամ պայծառութիւն է։

Արծաթը նեղութիւն է։ Արմաւը՝ շատ բարի և անոյշ խօսք է։ Արմաւենին զաւակ և ուրախութիւն է։

Արիւն թափելը՝ մեծ վնաս է։

Արիւն կամ արիւն առնելը՝ շնորհք է։

Արծիւ տեսնելը՝ աւագութիւն է։ Արծուի

վրայ նստելը՝ պարոնութիւն է։ Արծւի հետ կռուելը կամ խփելը՝ մեծ մարդկանց հետ կռուելու նշան է։ Եթէ արծիւը քեզ խփի մի պարոնից զէնք կ'ստանաս։

Արջ տեսնելը ոգէտ մարդու խօսք է։ Արջից հալածւելը կռւից կազատւես կամ մեծից զգոյշ կաց։

Ամեն գայլ գազան՝ թշնամի է։

Աւետարանը հալալ մուրազ է։

Աւազը որ ձեռքդ առնես. մեծ մարդուց բան կստանաս։

Աւազակ որ տեսնես զգուշացիր կռւից։

Բ.

Բարձրանալ երազում և վայր ընկնել մէկի ձեռքով մահւան վնաս է։

Բարձր տեղերի վրայ քայլելը մեծութեան հասնել է։

Բարձր տեղից ընկնելը վնաս է։

Բարև տալը կռիւ է։ Բաղնիքը, հոգս է։ Բաղանիք եթէ գնաս, խարբէութեան մէջ կընկնես։

Բաղանիքից եթէ դուրս գաս, հոգսերից կազատւես։ Բաղանիքում լւացւելը ռոճիկի և մեծ նեղութիւն է։

Բաղ տեսնելը, մեծ մարդ է։

Բադ շինելը կամ հիմք ձգելը բարութիւն է։

Բահը լեզուէ։

Բամբակը արդարութիւն է։

Բանջարը շահ է։

Բերդ որ տեսնես, թշնամիներից մօտ ճշմարիտ դուրս կը գաս։ Բերդի մտնելը, պարիսպ և ամրութիւն է։ Բերդի մէջ-նեղութիւնից ազատւել է։

Բերան լւանալը, ռոճիկի պակասիլ է

Բիր տեսնես կամ առնես, եղբայր կամ որդի է։ Բիր կոտրելը, եղբօր կամ ազգականի մահ է։

Բլուր տեսնելը, երկրի խաղաղութիւն է։

Բու տեսնելը, նեղութիւն է։

Բուրվառ տեսնելը կամ առնելը լաւ չէ կռիւ է։

Բուրդ.—Սպիտակ բուրդ տեսնելը կամ առնելը, առողջութիւն և օգուտ է։ Սև բուրդը սուգ ու լաց է։

Բոբիկ իրեն տեսնելը, զէնք կը գայ իր վրայ։

Բորոտ իրան տեսնելը, դանձի շատանալ, մեծութիւն և շահ է,

Բողք ուտելը, առողջութիւն և օգուտ է։

Գ.

Գառներ տեսնելը մեծ շահ է. Գառներ մոր-

թելը լաւ չէ. գառներ լուանալը զէնք և տրտմութիւն է։

Գազան տեսնելը, առանց վնասի կռիւ և երկիւղ է։ Գազանի խաղալը թշնամու հաշտութիւն է, իսկ փախչելը խաղաղութիւն։

Գանձ տեսնելը կամ առնելը շահ է։

Գարին բաղդ կամ բաժին է։

Գայլ սպանելը թշնամու յաղթել է. գայլի վրայ նստելը նեղութիւն է։

Գաւազան տեսնելը թշնամու դէմ պաշտպանուել է։ Գաւազանը ձեռքիդ լաւ է. որդի կամ մեծ շահ է։

Գաւաթ բռնելը, զաւակի (ունենալու) ուրախութիւն է։

Գետ անցնելը ձի հեծնել է։ Յստակ ու պարզ գետին մտիկ տալը, առատութիւն է, պղտորը լռութիւն է. գետում լուացուելը նեղութիւն է։ Գետի վերևից ներքև գնալը պարտութիւն է։

Գերի տեսնելը նեղութիւն է. իրեն գերի տեսնելը, մեծութիւն և օգուտ է։

Գերի ճանապարհ գնալ, նեղութիւն է։

Գերանը որ կտրուի, տանտէր կմեռնի։

Գերեզման բանալը վնաս է. իրան գերեզմանում տեսնելը պատասխանի ենթարկուել

կամ բանտ ընկնել է։

Գէշ հոտը, վատ խօսք է.

Գինի խմել կամ գնել, ոյժ և շահ է։

Գիսաւոր աստղը մեծութիւն և պատիւ է։

Գիրք կարդալը ժողով է և նեղութիւն։

Գիր գրելը բարի և մուրազ է։

Գլուխը կտրած ձեռին առնելը մեծ գանձ գտնել է. գլխին դեղ քսելը անուշ խօսք է, գլուխ ածիլել տալը, նեղութիւնից ազատուել է. ուրիշների գլուխն ածիլելը ցաւից ազատուել է, գլուխ լուանալը կամ գլխով բան տեսնելը զէնք է։ Սպիտակ գլուխը յանկարծակի մահ է։

Գլխատած իրան տեսնելը, մեծ վնաս է։

Գխտոր տեսնելը ցոյց է տալիս ցնդութիւն և աղքատութիւն։

Գնդակ խաղալը, մեծի համար լաւ է, իսկ փոքր մարդուն վատ։

Գոմէշը գետի մէջ տեսնելը, բարի զրոյց է. նշանակում։

Գոմ շինելն ուրախութիւն և շահ է։

Գոյնզգոյն հալաւը, ուրախութիւն է։

Գորտի ձայն լսելը, ուրախութեան լուր է։

Գորտ եթէ սպանես, հաւատացեալ մարդու հետ հաշտութիւն կանես։

Գլխարկ ծածկելը, հարկիք է։

Գրաւական հանելը իւր տանից մահու վնաս է։
Գրող տեսնելը մահւան մօտենալ է։
Գրիչ և կաղամարը, խելք կամ ճանապարհ է։ Գրչամանը, կին է։

Դ.

Դանակ տեսնել կամ գնել, լաւ չէ, կամ վատ լեզուն խափանում է։
Դաշտից որ դուրս գաս, ազատութիւն է։
Դատաւորն Աստուած է և գրութիւնդ կը-լսանայ։
Դատաստանը, մեղաց քննութիւն է։
Դարպաս շինել կամ տեսնելը, հարուստ կնիկ է։ Դարպաս լայնացնելը պարծնութիւն է։ Դարպաս փակելը մեծ մարդուց վնասել է։
Դարբինը մեծ մարդ է։ Դարբնութիւն թէ ինքդ անես, լաւ տնատէր կը լինիս։
Դարբնի հարուածը, ամենը բարի է.
Դեղ, նեղութիւն և մեղքի նշան է։
Դդում ցանելը, ջերմ, իսկ ուտելը, հիւանդութիւն է։
Դուռը, պատիւ է և մեծ մարդու հետ ծանօթանալ։ Դուռ բանալը, իւր բաղդի բացւելը և իւր կամքի կատարւիլ է։ Դուռ ձգելը, կործանումն է։ Դուռ կտրելը, մահու նշան է։

Դուռը դուրս գալը, լաւ չէ։
Դրամ տեսնելը կամ ժողովելը ագահութիւն է։

Ե.

Եզը նստած տեսնել, մեծ աւետիս է կամ զուգակից սիրելին կը գայ։ Եզան միս ուտելը լաւ է. բայց ոմանք ասում են թէ նեղութիւն է։ Եզների կռւելը թշնամի է։ Եզը մորթել, մահու վնաս է։
Եղնիկը տանը տեսնելը, սիրելին կը գայ։
Եղունգ ունենալը, աղքատութիւն է։
Եկեղեցի տեսնելը կամ շինելը փառք է։
Եկեղեցի գնալը ազատութիւն է։
Եղջերուն երկրի նեղութիւն է։
Երկինք բարձրանալը, մեծ պատիւ է։
Երկիրը խնդութիւն է։
Երկանք տեսնել կամ աղալը անհանգստութիւն է։
Երկաթ տեսնել կամ գնելը, տրտմութիւն և շատ վատ է։
Երակ կտրելը, մահու վնաս է։ Երակից արիւն առնելը, սրբութիւն է։
Երես լւանալը, զէն է։ Դեղին երեսը մեղք է. կարմիր երեսը գործը լաւ կերթայ։ Գեղեցիկ երեսը, մեծ փառք է։

Երազ պատմելը երազում շատ լաւ է։

Երէցը յարութիւն առնելիս, հին զրոյց է. Մեռած աւագ երէցին կենդանացած տեսնելը՝ մեծ զրոյցի նորոգուել է։ Երէցին մեռած տեսնել, մեծ զրոյցի խափանումն է։

Զ.

Զանգակի ձայն լսելը, ուրախութիւն է։

Զաֆրանը հիւանդութիւն է։ Զաֆրանով կերակուրը, լաւ է։

Զենելը—մորթելը, մեծ նեղութիւն է։

Զինուորը, տրտմութիւն է։

Զմրութը լաւ է։

Զնդանը մեծ հոգս և սուգ է։

Զուռնան կամ զուռնի ձայնը որ լսես, անձրև կամ կռիւ է։

Զրոյց անելը, նեղութիւն է։

Զրահը, ապանութիւն է։ Զրահ հագնելը զէն է։

Է.

Էշը շատ նեղութիւն է. սպիտակ էշին հեծած կամ բռնած, բարի է և պատիւ։

Ը.

Ընկոյզ ժողովելը լաւ չէ։

Թ.

Թագաւորին ողջունելը, փառք է։

Թամբ շինողը, խրատաբար է։

Թանաք եփելը լաւ է։ Թանաք վերևից թափելը, վատ խօսք է։

Թարախով իրան տեսնելը շահ է և հարստութիւն։

Թաղուած իրան տեսնելը, բարի է։

Թևաւոր իրան տեսնելը, հոգիների հանդիպել է։

Թզի ծառը, լիքը մարդ է.—Թուզը (կանաչ) տեսնել կամ ուտելը վնաս է։ Թուզը (չոր) ուտելը, շահ է։

Թուխ իրան տեսնելը, մեծութիւն է։

Թռչելը, ուրիշ տեղ գնալ է։ Թռչել կտուրից, այլ կին առնել է։

Թռչել բարձրանալու համար, լաւութեան հասնել է. թռչելիս ուրիշ երկրում մեծութիւն կստանայ։

Թռչունի քեզ մերձենալը, մի անձն երանի է տալիս քեզ. թռչուն արձակելը, բարութիւն է. թռչունի փախչելը, վնաս է։

Թռչունների կռւելը, վնաս է։ Թռչունի հետ խաղալը թշնամուց սիրուելու նշան է։

Ժ.

Ժամատունը զարդարուած տեսնելը, արքայութեան արժանանալ է։

Ժամ գնալը, կեանքդ բարի լինել է։
Ժամատանը աղօթելը, լաւ բան անել է։
Ժամահարը վատ դրութեան հասնել է։
Ժամացոյցը օգուտ է։

Լ.

Լոյսը խաղաղութիւն է. լոյսը հանգած տրտմութիւն է։
Լուսին և արեգակ առաւօտեան տեսնելը ազգին վնաս է։
Լուսնի աստղը, խիստ շահ է.—կարմիր լուսինը, վնաս է։
Խաւար լուսինը թագաւորի մահ է. երկու լուսին տեսնելը, թագաւորներ իրար դէմ կը վերկենան։
Լուն՝ ռոճիկ է։
Լուծը (եզների) բարի է։
Լեառն (բարձր) որ տեսնես, ազատութիւն է։

Խ.

Խան կամ սուլթան տեսնելը, անչափ լաւ է։
Խաչակնքել երազում մեծ պատիւ է։
Խաչը չարչարանք է։
Խաւարը, նեղութիւն է։
Խաւիարը, հիւանդութիւն է։
Խաղողը, անձրև և ցնորք է.—սպիտակ խա-

ղողը, խնդալ է, սևը լաւ է. ժողոված հաղողը, գանձ է։
Խեցեղէն աման բռնելը, ուրախութիւն է։
Խմոր ունելը, շահ է։
Խնդալը լաւ չէ։
Խնձորը տղայ է, խակ ունելը շահ։
Խնձոր առնելը բարի համբաւ է. խնձորի ծառը մեծ մարդ է։
Խուլ և համրը, օգուտ է։
Խունկ ծխելը, աղրանք և անոյշ խօսք է։
Խորոված միս ունելը, օգուտ է։
Խոզը մահ է կամ այլազգի. խոզի միս ունելը, ազգականների մահ է։
Խոտը լաւ մարդ է. ժողովելը, պատիւ է և փառք։

Ծ.

Ծաղկեայ անդաստանը, շահ և ուրախութիւն է. ծաղկելն անհանգստութիւն է. ծաղիկ քաղելը, կին առնել է. ծաղկելը բարի է։
Ծաղկած ծառը, պտղով ծառը բարի է. ծառ կտրելը կամ այրելը, վնաս է. ծառը եթէ ծխի, լաւ չէ. ծառի տերև թափելը, արիւնահեղութիւն է. ծառ վայր ձգելը մարդու մահ է. մեծ ծառ կտրելը, մեծ մարդու մեռնել է, ծառի վրայ նստելը և ման գալը փառք է. կանաչ

ծառը, գանձ է. չոր ծառը, տրտմութիւն է. ծառ զուգելը կին է։

Ծամ (հիւս) կտրելը, բաժանումն է։

Ծառան աւետիք և ուրախութիւն է։

Ծարաւելը, լաւ չէ։

Ծանր բան շալակելը, մեծ մեղք է։

Ծիծաղելը, տրտմութիւն է։

Ծիծը, տղայ կամ մեծութիւն է։

Ծնանելը (կնոջ) մեծ շահի գալ է։

Ծունր դնելը, առ Աստուած յոյս է։

Ծովը պղտոր, նեղութիւն է, ցամաք ծովը, աշխարհի լիութիւն է. ծովում լողալը, օգուտ է. ծով մտնելը, թշնամիներից ազատել է. ծովը որ մարդու ներս քաշի, գողի ձեռքով սպանուել է նշանակում։ Ծովակի վրայ նստելը, զւարթութիւն է. ծովից դուրս գալը, պատիւ է և ազատութիւն, չը դուրս գալը, մեծ վնաս է։

Ծերութեան ժամանակ իրան մանուկ տեսնելը, կեանքի աւելանալն է. իրան ծեր տեսնելը մանկութեան ժամանակ, նոյնպէս կեանքի աւելանալն է։

Կ.

Կամուրջ շինելը, շատ լաւ է։

Կառք նստելը, մեծ պատիւ է։

Կայծակը, խռովութիւն է։

Կարկուտը, երկրի նեղութիւն է։

Կարասը, նեղութիւն է։

Կաղամբի տակ հանելը, վնաս է։

Կենդանի իրան գերեզմանի մէջ տեսնելը մեծ զրոյց է։

Կին առնելը, մահուան վնաս է. կնոջ հետ խօսելը, տրտմութիւն է։ մազերն արձակած կինը, մահու վնաս է. գեղեցիկ զարդարած կինը, երկիր է կամ քաղաք. կնոջ մազ կտրելը, շատ վնաս է, կնոջ նայելը, բարի և լաւ է։

Կիտրոնը, անոյշ խօսք է։

Կոյս իրան տեսնելը, խիստ շահ է. կոյսի հետ խօսելը տրտմութիւն է. կոյսի հետ հաց ուտելը, լաւ է։

Կուժը, որդի է. Ջրով կուժը, բոլորովին բարի է.

Կորեկ տանը տեսնելը կամ ուտելը լիութիւն է.

Կրակ ձգելը, մահ է և սով.

Կտաւ հանելը, լաւ չէ.

Կօշիկ տանը տեսնել կամ հագնելը, ճանապարհ է։

Հ.

Հաց տեսնելը բարի է և լաւ։

Հաւը ձուի վրայ, անսպասելի շնորհք է.

հաւ սիրամարգ մեծ իշխան է. հաւի խօսելը՝ մարդու կեանքից զրկուելու նշան է։

Հաղորդ առնելը մարդու ծեծ է։

Հասկ քաղելը, ուրախութիւն է.

Հարսանիքը, տրտմութիւն է.

Հայրապետը, մեծ զրոյց է.

Հայր.—մեռած հօրը կենդանացած տեսնելը, մեծ շահ է.

Հալուէ այրած տեսնելը, կնոջից շահուել է

Հանդերձ կորցնելը, վնաս է.

Հեռաւոր տեղ իրան տեսնել կամ ուրիշ մէկին, շահ է և բարի.

Հիմք ձգելը, հարստութիւն է.

Հիւանդը, նեղութիւն է.

Հող վեր առնելը, նեղութիւն է.

Հում միս ուտելը մեծ զրոյց է.

Հոր փորելը, շատ նեղութիւն է։

Ձ.

Ձի.—Սպիտակ կամ սև ձի նստելը, բարի և մուրազ է. վազող ձի նստելը խիստ լաւ է. սև ձի կամ ջորի նստելը մեծամեծներից շահ ըստանալ է։ Ձին սատկած տեսնելը, մեծութեան հասնելու նշան է.

Ձեռը լուանալ, բարի է։ ձեռից հրազ բըռնած որդի լինի քեզ։

Ձէթ եփելը մուրազ և լաւ է.

Ձու տեսնել կամ ժողովելը, կռիւ է.

Ձոր տեսնել կամ անցնելը, նեղութիւնից կ'ազատուես.

Ձուկը, չար լեզու է.—Ջրից հանես, ամպ ձիւն կամ ջերմ կ'լինի։

Ղ.

Ղամփար վառելը, բարի է։

Ճ.

Ճանապարհ գնալն ու գալը բարի է.

Ճուտն երկայն ճանապարհ է։

Ճառ գրած տեսնել կամ լսել, հոգս է.

Ճնճղուկ տեսնել կամ բռնելը, բարի է.

Ճրագ վառած, ծածուկ գործ կ'յայտնուի. անցած ճրագը տան կործանումն է։

Մ.

Մատանին, իշխանութիւն է. մատանին կտրած, վնաս է. մատանին կորցնես կինդ կամ սիրելիդ կ'մեռնի, երկու մատանի ունենալը, երկու կին կ'առնես.

Մարգարիտը, մեծութեան նշան է.

Մարդու ոսկոր ուտելը, բանտ մտնել է.

Մեխեր ժողովելը լեզուներ են։

Մեծահասակ իրան տեսնելը, փառք է։

Մեռել.—Իրան մեռած տեսնելը, շատ ապ-

րել է. մեռելն թէ խօսի զգոյշ կաց մի հաւատայ. մեռել թաղելը չփոթուել է. մեռելը գերեզմանում տեսնելը, չարը կ'խափանուի. շատ մեռելներ տեսնելը, թշնամիներդ կ'յարձակւեն։

Մեղր ուտելը մեղք է և սրտնեղութիւն։

Մետաքս տեսնելը,օգուտ է.

Միս տեսնել կամ ուտելը հիւանդութիւն է. իսկ խորոված միս ուտելը, շահ.

Միրգ ուտելը հիւանդութիւն է.

Մոմը վառած, ուրախութիւն և որդի է.

Մորեխը, հոգս է և աշխարհի վնաս.

Մութը, վնաս է և չար.

Մուկը. վնաս է և չար.

Մորուքով իրան տեսնելը, շնորհք է։

Ն.

Նախիրը որ գեղը գնայ, աւագ է.

Նապաստակը, իրեն աղայ լինի.

Նաւ.—Նաւորդ լինել, գլոյց դուրս գալ. ոսկու կամ արծաթի նաւը, բարի է. նաւ նըստես, շատ կ'ապրես. նաւերի խումբ տեսնես, շահ կ'գայ քեզ. նաւը գանձով նեղութիւն է. նաւ այրելը երկրի վնաս է. կոտրած նաւը, մահ է.

Նուռը, ցաւերից չահուել է.

Նստել և ողբալը, շատ նեղութիւն է։

Շ.

Շապիկ սպիտակ տեսնել կամ կարել, արդարութիւն է. սեը, տրտմութիւն է. աղտոտը մեղք է.

Շինութիւն կառուցանելը բարութիւն է. քանդելը վնաս.

Շիշ իւղով, առճիկ և շահ է.

Շորեր (Նոր) ուրախութիւն և շնորհք է. Շորեր գոյնզգոյն վնաս է. սև շորերը, աւաղ մարդ կմեռնի։ Շորեր կորցնելը վնաս է.

Շների իրար հետ կռուիլը, վատ է. շունը որ հաչէ կամ կծէ չար լեզու է և չար մարդոց պէտք է զգոյշ լինել։

Ո.

Ոսկին կամ արծաթը, շահ է, ոսկէ խնձորը, պատիւ է.

Ոչխարը, ձմեռ է և ցուրտ. սև ոչխարը, սուգ և տրտմութիւն է. ոչխարը ճանապարհին հարստութիւն է.

Ողբալը, շատ նեղութիւն է.

Ուղտը, պարոն է. երկու ուղտի կռուելը իշխաններ կ'կռուեն. էգ ուղտ նստելը հիւանդութիւն է։

Որսի գնալը, բարի է։

Չ.

Չամիչը, շատ վնաս է.

Չամանը, կռիւ և աղաղակ է.

Չանկը, տրտմութիւն է.

Չիրը, սակաւ շահ է.

Չուխայ.—կանաչ չուխան, հարստութիւն է. սևը, տրտմութիւն.

Պ.

Պատարագը կռիւ է.

Պարտէզ անկելը, լաւ է.

Պղպեղը, կսկիծ է. պղպեղ ուտելը թշնամիներից պատրաստ կաց։

Պսակ արծաթէ, հիւանդութիւն է. փշից պսակ շինելը, մեծ շահ է. քարից շինած պըսակը, մեծութիւն է.

Պսակուիլը, լաւ է, յաճախ կռիւ է։

Ջ.

Ջաղաց շինելը, մեծութիւն է. քանդելը, շինութիւն է. ջաղացի ադունը հիւանդութիւն է.

Ջայլամը, նեղութիւնից կ՚ազատուես.

Ջուրը մաքուր խմելը, լաւ է պղտոր ջուր տեսնելը կամ խմելը, տրտմութիւն է.

տանդ մէջ ջուր տեսնելը, լաւ չէ, գնացող ջուրը, բարի է. գետից ջուր վեր առնելը, վընաս է. աղբիւրիցը, բարի է։

Ռ.

Ռեհանի ծաղիկը. բարի է.

Ռումբը կանգնած մեծութիւն և պատիւ է.
ձեռքին ռումբ բռնելը, ճանապարհ է և երկիր.

Ռուս տեսնելը մեծ հակառակութիւն է։

Ս.

Սալը մեծ մարդ է.

Սագ ուտելը, հիւանդութիւն է.

Սալորը, առողջութիւն է։

Սանդուխ (կանգնած) մեծութիւն է.

Սանր բռնելը, զէնք է։

Սենեակ քանդելը, կնոջից բաժանուիլ է.

Սեխը, լաւ է, ուտելը հիւանդութիւն։

Սիսեռը, բարի է։

Սիւնը, նեղութիւն և կռիւ է։

Սխտորը, կսկիծ է։

Սոխը, կսկիծ է. ուտելը հիւանդութիւն։

Սուգ անելը, ուրախութիւն է։

Սուլթան տեսնելը, անչափ ցաւ է։

Վ.

Վախեցած իրան տեսնելը, օգուտ է։

Վանք և աբեղայ, նեղութիւն է։

Վառած մէկին տեսնել վնաս է. իրան վառած տեսնելը հարստութիւն է։

Վարդը, կին կ՚առնես. վարդ քաղելը բարի է։

Վերմակը, հարուստ կին է։

Վիշապը, մեծութիւն կամ վնաս է։

Տ.

Տաճար զարդարած, բարի է. տաճար այրելը թշնամիքդ կը կալուին։

Տաճիկը. թշնամիների յարձակումն է.

Տախտը մեծութիւն է. տախտը գլխակով, բարի է. տախտը կանաչ, ցաւ է.

Տանձ ուտելը, հիւանդութիւն է.

Տառեխ ձուկը, տրտմութիւն է.

Տիկը, տրտմութիւն է.

Տղայի գերկն առնելը, ցաւ է.

Տուն շինելը, շատ բարի է. տուն քանդելը, վատ է։

Ց.

Ցեցը, լեզու է. ցեց հանելը, նեղութիւն կամ լաւ է.

Ցեխը, վնաս և տրտմութիւն է. Ցորենը ցնորք է։

Փ.

Փայտը շատ բարի է.

Փող ածելը, մեծութիւն է.

Փուշ քաղելը, թշնամու կորուստ է.

Փոխինձ ուտելը, զէնք է։

Ք.

Քաղաք մտնելը, բարի է.

Քար ձգելը վնաս է, ժողովելը լեզու է.

Քահանայից խաչ առնելը, վիշտ է։

Օ.

Օձի հետ խօսելը այնպիսի բան անել է, որ ամբողջ աշխարհը կը զարմանայ. անկողնի վերայ օձ տեսնելը կին առնել է.

Օձին անկողնում սպանելը | կնոջ մահ է օձը տանը տեսնելը, կնոջ թշնամանալն է.

Օղի խմելը, ուրախութիւն է։

ԼՈՒՍՆԻ ԵՐԱԶԱՑՈՅՑ

Լուսնի 1, 3, 5, 9, 13, 18, 19, 22, 26, 30 օրն—երազն ի բարին կատարի։

» 2, 10, 12, 16, 28, երազն ի օրն կատ.

» 8—երազն ութ օրն կատարի.

» 23, երազը երեսուն օրն կատարի.

» 14, երազն քառասուն օրն կատարի.

» 11, 15, 17, երազն օրն կատարի.

» 6, երազն ի տարին կատարի.

» 29, երազն լաւ է.

» 4, 7, 20, 21, 24, 25, 27, երազն սուտ է։

ՎԻՃԱԿԱԽԱՂ

8	3	7
1	9	5
6	4	2

ՀԱՐՑԵՐ

Ա. Հաւատա՞մ ամուսնուս։
Բ. Ե՞րբ բախտաւոր կլինիմ։
Գ. Ե՞րբ կհասնեմ նպատակիս։
Դ. Սկսե՞մ մտածածս գործը։
Ե. Ընտանեկ. կեանք. բախտաւոր կլինե՞մ։
Զ. Կհարստանա՞մ արդեօք։
Է. Չէ՞ խաբում արդեօք նա ինձ։
Ը. Արդեօք սիրո՞ւմ է նա ինձ։
Թ. Ի՞նչ է պատահելու ինձ։

ԲԱՆԱԼԻ

Ընտրեցէք հարցերից որը կամենաք և մտքերդ պահեցէք նորա ձախ կողմում գըրուած տառը։ Թւականների մէջ մտով նշանակեցէք որն է թւանշան (աւելի լաւ է աչքերդ խփած) ապա պատասխանների մէջ գըտէք մտքում պահած տառի համապատասխան սիւնեակը և այնտեղ կարդացէք ձեր նշանակած թւանշանի դէմ գրուած պատասխանը։

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Ա.

1. Հաւատա և չես փոշմանի։
2. Մի՛ հաւատար։
3. Հաւատա, նա սրտանց է քեզ սիրում։
4. Նա քեզ պիտի խաբէ դու նրան, վա՜յ վերջը խաբւողին։
5. Եթէ ուզում ես կեանքդ դառնացնել, հաւատա։
6. Պարտական ես հաւատալու, յիշիր երդումդ։
7. Եթէ ասէ ձիւնը սպիտակ է, մի՛ հաւատա։
8. Հաւատա։
9. Հաւատա և ձեր կեանքը երջանիկ կլինի։

Բ.

1. Մի տարի յետոյ, երբ գործից եղանակը փոխես։
2. Երբէք մի՛ յուսաս։
3. Ո՞վ է կատարեալ բախտաւոր, գոհ եղիր վիճակիցդ։
4. Միայն քնածդ ժամանակ, երբ դարդ ու հոգս մոռացած կլինես։
5. Բախտաւոր լինելու համար հարկաւոր է առողջ միտք և ազնիւ սիրտ. ունի՞ս այդ ամենը։
6. Ոչ երբէք և դրա պատճառը դու ես։
7. Համբերութիւն, համբերութիւն և միայն համբերութիւն։
8. Ո՞ր մահկանացուն այս երկրիս վերայ երջանիկ ժամեր վայելել կրնայ։
9. Երբ բարեգործութիւն անես։

Գ.

1. Երբ բնաւորութեանդ կոպտութիւնը թողնես։
2. Երբ մի հարուստի հետ ամուսնանաս։
3. Յիշիր գիտնականի այն խօսքերը—«Ես կամենում էի, կամենում էի այնքան, մինչև որ հզօր դարձայ»։

4. Միայն դու չես, որ կէս ճանապարհին է մընալու։
5. Բեղանից է կախուած, կամեցիր և կը հասնես։
6. Դրա համար խելք ու շնորհք է հարկաւոր, որը դու չունիս։
7. Մի՛ փախենար, տոկուն եղիր։
8. Շատ շուտով։
9. Քիչը գնաց, շատը մնաց։

Դ.

1. Կասկածելի է յաջողութիւնը։
2. Այո՛, Աստուած կանչիր և սկսիր։
3. Ո՛չ, հեռու կաց։
4. Մի՞թէ կարող ես դու լաւ բան մտածել։
5. Վայն եկաւ այն գործին, որի յաջողութիւնը այստեղ ես փնտրում։
6. Շատ յաջող, միայն շտապիր։
7. Ինչ կասկածոտ ես. հա՛, հա՛։
8. Ունեցածդ էլ հետը կը կորցնես։
9. Քաջութիւն ունեցիր. ի՞նչ ես կասկածում։

Ե.

1. Այո, և շատ բախտաւոր։
2. Ընտանեկան բախտաւորութիւն քչերին է վիճակուած։

3. Այնքան բախտաւոր, որ օրը հազար անգամ մահ կընդրես։
4. Ադամը դրախտում բաղդաւոր չեղաւ, ո՛ւր մնաց դու։
5. Այո՛, և իմացիր, որ քչերին է վիճակուած այդ։
6։ Մտքիցդ հանիր. բախտաւորութիւն աշխարհում գոյութիւն չունի։
7. Կլինես, եթէ միայն ընտրութիւնդ փոխես։
8. Բախտաւորն ես ու կաս. էլ ինչ է քեզ պակաս։
9. Այո, մի կասկածիր։

Ջ.

1. Գո՛րծիդ նայիր, բոլորն էլ հարուստ չեն կարող լինել։
2. Կհարստանաս, բայց երանի կտաս աղքատութեանը։
3. Աստուած հոգեւորից չզրկէ, մարմնաւորը ինչ պէտք է։
4. Հոգով և ոչ փողով։
5. Ո՛չ, ո՛չ, հազար անգամ ոչ։
6. Եթէ ամուսնանաս, եթէ ամուսնացած ես, երբ որդիք ունենաս։
7. Անպատճառ և շատ շուտով։
8. Որդւոցով և ոչ փողով։

9. Վա՛յ քեզ, որ փուչ մարմնիդ յետեւից ես ընկել։

Է.

1. Չի խաբում, հանգիստ եղիր։
2. Ոչ դու առաջինն ես և ոչ էլ վերջինը։
3. Եթէ դու հաւատաս նորան, նա քեզ չի խաբի։
4. Էլ ինչ ես հարցնում, դու նորան ես խաբում նա էլ քեզ։
5. Անպատճառ և այն օրական մի քանի անգամ,
6. Ո՛չ, ո՛չ, հազար անգամ ոչ։
7. Երնէկ նրան, քեզ էլ որ չխաբէ, բաս ո՛ւմ խաբէ։
8. Հեռու կաց. նրանից հեռացողը Աստծուն կմօտենայ։
9. Ոչ միայն չի խաբում, այլ և սրտանց նուիրուած է քեզ։

Ը.

1. Չի էլ մտածում քո մասին։
2. Սիրում է բուռն սիրով։
3. Մոռացիր սէրը, հոգուդ մասին մտածիր։
4. Քեզ շատ սիրելուց տանջւում է։
5. Սիրում է, միայն երբ տեսնում է։
6. Դու նրա խղճալին ես։
7. Նայիր հայելուն, տես կարելի՞ է քեզ սիրել։

8. Ո՛չ, չի սիրում։
9. Սպասիր, նոր է հասկանում քո արժէքը։

Թ.

1. Առ այժմ ներկայի համար մտածիր։
2. Աչքի ընկնող ոչինչ։
3. Եթէ խելքդ գլուխդ պահես կհարստանաս։
4. Մեծ բախտաւորութեան կարժանանաս։
5. Պատերի տակը պիտի մնաս, ուրիշ ինչ պիտի լինի։
6. Պիտի ստանաս յայտնի բարեգործի անուն։
7. Կլինես մեծ հարստութեան տէր։
8. Սաստիկ անյաջողութեան մէջ պիտի ընկնես։
9. Պիտի ասես. «Աւա՜ղ իմ անցեալ փառքերին»։

ԴԻՄԱԳՈՒՇԱԿ

Գ Լ Ո Ւ Խ

Վերի կողմը սրածայր գլուխը՝ փոփոխամտութիւն, նեղ իմացականութիւն. ետևի կողմից տափակ գլուխը, վզից վեր է բարձրանում՝ կամք, յարատևութիւն, պայծառ իմացականութիւն. միջին մեծութեան գլուխը՝ բարեմտութիւն, յիշողութիւն. փոքրիկ գլուխը՝ միջին մեծութեամբ վզով՝ ապուշութիւն, յիմարութիւն. մեծ գլուխը՝ դանդաղութիւն և երբեմն էլ ուժեղ իմացականութիւն։

Ճ Ա Կ Ա Տ

Երկար ճակատը՝ բթամտութիւն, յիշողութիւն. մազերից մինչև յօնքերը ուղղահայեաց ճակատը՝ անհաւատութիւն, ստախօսութիւն. մէջտեղը կնճիռ ունեցող ճակատը՝ մեծանձնութիւն, քաջութիւն, անգթութիւն. լերկ ճակատը՝ բարձր իմացականութիւն, պատւասիրութիւն, հպարտութիւն. մեծ և անմազ ճակատը՝ բախտախնդրութիւն. ուռած ու կարճ ճակատը՝ հաստամտութիւն։

Յ Օ Ն Ք Ե Ր Ը

Կամարաձև յօնքը՝ համեստութիւն, պարզութիւն. ուղիղ գծի նման երկարող յօնքը՝ ուժեղ և խելացի բնաւորութիւն. նուրբ յօնքը

անզգայութիւն, անտարբերութիւն և թուլութիւն. աչքի մօտեցող յօնքը՝ խորիմացութիւն և ընկերականութիւն։

Ք Ի Թ Ը

Լայն, երկար և մեծ ռունգներով քիթը՝ ցոյց է տալիս քաջութիւն. նեղսրտութիւն. փոքրիկ քիթը՝ խաբեբայութիւն. կարճ ու կլոր քիթը՝ չարութիւն և խառնակ բնաւորութիւն. երկար ու կլոր քիթը՝ գողութիւն, սրտախօսութիւն. տափակ ու վեր դարձած քիթը՝ պագշոտութիւն, անառակութիւն։

Ա Չ Ք Ե Ր

Միջին մեծութեան աչքերը՝ վառ իմացականութիւն, արթնամտութիւն. խորունկ ու փոս ընկած աչքերը՝ նախանձ, կասկած. դուրս ցցուած աչքերը՝ ծուլութիւն, ցանկասիրութիւն, տխմարութիւն. ուղիղ առջև նայող աչքերը՝ կուարարութիւն, անգթութիւն. յարաշարժ աչքերը՝ ստախօսութիւն, յանձնապաստանութիւն, նեղութիւն. թաց և քօղարկածները՝ գեղեցկագիտութիւն, հնարք, համարձակութիւն. խաժ աչքերը՝ քաջութիւն, ազնուութիւն. շատ թաց կապոյտները՝ մելամաղձութիւն. թաց և մըղտուն աչքերը՝ սիրահարութիւն. կանաչ աչքերը՝ խարդախութիւն, մատնութիւն, ժպտուն

աչքերը՝ դատողութիւն. կողմնակի նայող աչքերը՝ անվստահութիւն, կասկած։

ԲԵՐԱՆ ԵՒ ՇՐԹՈՒՆՔ

Երբ երկու շրթունքը հաւասար երկարացած են՝ պարկեշտութիւն, համեստութիւն. երբ վերի շրթունքը վարինից դուրս երկար է՝ բարութիւն. երբ վարի շրթունքը վերինից դուրս երկար է՝ յամառութիւն, դիւրագրգռութիւն։ Լայն բերանը՝ համարձակութիւն, խիզախութիւն. նեղ բերանը՝ ծանրութիւն, համեստութիւն. բաց բերանը՝ չափազանցութիւն, ստախօսութիւն, հեգնանք. պրկուած և փոքր շրթունքը՝ պերճախօսութիւն. վարի շրթունքը երբ կախ է՝ ապուշութիւն, անառակութիւն. նուրբ շրթունքը՝ մեղկութիւն, չարութիւն, հաստ շրթունքը՝ հեշտասիրութիւն, յիմարութիւն։

Մ Ա Զ Ե Ր Ը

Սև մազը՝ խոհեմութիւն, անկեղծութիւն. խարտեաշ մազը՝ նենգամտութիւն, խոհեմութիւն. կարմիր մազը՝ չարութիւն, խարդախութիւն. փափուկ մետաքսանման մազը՝ հանդարտութիւն, հեշտանքն. կարծր մազը՝ յանդգնութիւն. զօրութիւն, արկածախնդրութիւն. կոինճ մազը՝ թոյլ միտք։

ԳՐԱՔՆՆՈՒԹԻՒՆ

Մի շարք գիտնականներ, որոնք զբաղուել են գրաքննութեամբ մի շարք գիտական փաստերով ապացուցանում են, որ գրից կարելի է մարդու բնաւորութիւնը որոշել։

Գրերը բաժանւում են երկու գլխաւոր դասակարգի. 1. Անկիւնաւոր տառեր, որոնք իրենց զանազան ձեւերի մէջ անկիւններ են կազմում, 2. Կլորաձեւ տառեր, որոնք անկիւն չեն կազմում։

Ահա թէ ինչ են ցոյց տալիս տառերը։

Անկիւնաւոր տառեր՝ որոնք առաջ են թեքւում՝ աշխուժութիւն, արագաշարժութիւն։

` *Կոր տառեր՝ հաճոյասիրութիւն և խաղաղ կեանք։*

Առաջ թեքուած տառեր՝ զգացմունքով վարւող և տենչացող։

Անկիւնաւոր տառեր՝ որոնք կոր տառի հետքեր ունին, հաճոյասիրութիւն. Նրբամտութիւն։

Կոկիկ մի օրինակ գիր՝ մեթոտաւոր, զգոյշ ճաշակի տէր, վեհանձն։

Ուղիղ գծեր՝ յարատեւութիւն, տոկունութիւն, կամքի ոյժ։

Արւեստաւոր տառեր՝ յամառ և պղղու,

պերճանքի սէր և լաւ ապրելու փափագ։

Խառնակ գիր՝ անկարգապահութիւն, խը-նայասիրութեան պակաս։

Լաւ չտեղաւորուած տառեր՝ փոփոխամտութիւն, ցրուածութիւն։

Անկիւնաւոր և կոր տառերով գրուած՝ գործունեայ, դիւրակեցութեան սէր, ներքին ոյժ, արագաշարժ։

Նուրբ գրեր՝ հանդարտ և համեստ ճաշակ, ազնւութիւն։

Տափակ և անորոշ տառեր՝ աշխոյժ, անհամբեր, կենսալից, ինքնատիպ։

Տողեր, որոնք գրելիս վեր են գնում՝ վը-հատող, թոյլ իր ծրագիրների մէջ։

Մանր գիր՝ անհաստատականութիւն, կրթուած, ընդունակ, խոհուն, անձնավստահ։

Ետ դարձած տառեր՝ դիւանագէտ միտք, նրբամիտ, խորագէտ, տրամաբանութեամբ կառավարւող։

Դանդաղ գրուածք՝ յամառ, նախարձակ, նիւթական հաճոյքների սէր։

Անարւեստ գիր՝ բնականութիւն, անհամակրելի բնաւորութիւն, անվստահութիւն, բարոյական քաջութիւն։

Անհաւասար տառեր՝ անհոգ, անզգոյշ, անկարգապահ։

Խոշոր տառեր՝ անհանդարտութիւն, փոփոխամտութիւն, շռայլ, վերապահ ոյժի պակաս։

Ուղղահայեաց տառեր՝ հանդարտ բնաւորութիւն, դատողութիւն, տրամաբանութիւն, հետաքրքրութիւն։

Միացած տառեր՝ սկեպտիկ, վեհանձն, տրամաբանելու կարողութիւն, զգոյշ։

Չմիացած տառեր՝ պայծառ հասկացողութիւն, քննադատող, սրամիտ, հնարագէտ, բշտապող եզրակացութիւնների մէջ, անալուրջ։

Պարզ գլխագրեր՝ ինքնավստահութիւն, եսապաշտութիւն, ինքնավարութիւն։

Օղակաւոր դարձւածքով յ. ձ. ց. ք. տառեր՝ բանաստեղծութիւն, նկարչութիւն, երաժշտութիւն և վէպի սէր։

Բերանը փակ O և վերի ու վարի մասը օղակուած յ տառ՝ գաղտնապահութիւն։

Ստորագրութեան տակը գծուած՝ հաճելի լինելու փափագ։

ՆՈՐ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆ

Վեհափառ Կաթողիկոսի նոր կարգադրութեամբ թոյլատրւում է այսուհետեւ պսակի խորհուրդ կատարել ՁԱՏԿԻՑ ՄԻ ՇԱԲԱԹ ՅԵՏՈՅ մինչդեռ նախկին օրէնքով արգելւում էր Զատկից յետոյ եկող քառասունքին պսակ կատարել։ Այս նոր կարգադրութեամբ վերանում է այն անյարմարութիւնը, որ նշանւածները Բարեկենդանից սկսած պէտք է սպասէին բաւական երկար ժամանակ։

1914-Ի ԽԱՒԱՐՈՒՄՆԵՐԸ

Փետրւարի 12-ին Արեւի մանեկաձեւ խաւարում, սկիզբը 12 ժ. 16 ր. գիշերւայ տեսանելի Խաղաղ ովկիանոսի հարաւային մասում։

Փետրւարի 27-ին Լուսնի մասնակի խաւարում, սկիզբը 5 ժ. 12 ր. գիշերւայ. տեսանելի Եւրոպայում, Աֆրիկայում և Ամերիկայում։

Օգոստոսի 8-ին Արեւի լրիւ խաւարում, սկիզբը 12 ժ. 16 ր. ցերեկւայ. տեսանելի Հիւս. Ամերիկայի արեւելեան մասում, ամբողջ Եւրոպայում, Ասիայի արեւմտեան կէսում և Աֆրիկայում։

Օգոստոսի 22-ին Լուսնի մասնակի խաւարում, սկիզբը 2 ժ. 47 ր. ցերեկւայ տեսանելի

Հիւս. Ամերիկայում, Խաղաղ Ովկիանոսում և Ասիայում։

ԽՆԴԻՐՆԵՐ

I.

Բաղնիսից դուրս եկան 3 հոգի. երբ առաջինը փողն էր վճարում, բաղնեպանն ասաց. «Գնա, սնտուկս բաց արա, ինչքան մէջը փող կայ, նոյնքան էլ դու գցիր, և 40 կոպ. վերցրու։ Նոյն բանն ասաց երկրորդին։ Իսկ երբ երրորդ լողացողը 40 կոպ. ստացաւ, սնտուկի մէջ ոչ մի կոպէկ չը մնաց։ Քանի՞ կոպէկ կար սնդուկի մէջ։

II.

Գիւղացին գնեց եզներ, ոչխարներ և հնդկահաւեր. ամեն եզին վճարեց 20 ր., ոչխարին 6 րուբլի, հնդկահաւին 1 րուբլի։ Իմանալ թէ քանի՞ եզ, քանի ոչխար և քանի հնդկահաւ գնեց գիւղացին, եթէ բոլորից գնեց 100 և վճարեց 200 րուբլի։

III.

Տղան մտնելով սենեակը, մէկը նրան ասաց. «Որդիս, կօշիկներս բեր»։ Տղան պատասխանեց. «Ճիշտ է, ես քո որդին եմ, բայց դու իմ հայրը չես, և մինչև որ այս բանը ինձ չը բացատրես, ես քո կօշիկները չեմ բերի»։

---

9. Բժշկարան—զանազան հիւանդութիւնների դէմ։

Կեանքի ծրագիրներ—Յաջողութեան գաղտնիքը, Համբերութիւն, Զափաւորութիւն և Խնայողութիւն, Միլիօնատէրերի կարծիքը հարստութեան և հարստանալու միջոցների մասին։ Մարդ միշտ փողով երջանիկ չէ։

10. Ընտիր մտքեր և աֆօրիզմներ.

11. Մեր կորուստները 1913 թւին—Բժ. Ղազարեան, Գ. Բարխուդարեան, Յ. Տէր-Մարկոսեան, Ս. Զաւարեան, Ալ. Քալանթար, Կ. Խատիսեան իրանց կենսագրութեամբ և պատկերներով։

12. Յոբելեաններ 1914 թ.—Լազարեան ճեմարանի 100-ամեակը, Լազարեանն տոհմի պատմութիւնը, Էջմիածնի ճեմ. 40-ամեակը, Գէորգ Դ. կաթողիկոսի գործերը, Ատրպետի 25-ամեակը։

13. Հայկական հարցը և Պօղոս Նուպար փաշա։

14. Երազահան—

15. Դիմագուշակ—Դէմքից գուշակել մարդու բնաւորութիւնը և բախտը.

16. Բաղդաւոր օրեր ամուսնութեան։

17 Լուսնի երազացոյց և Վիճակարան

18. Խնդիրներ և հանելուկներ

19. Արևի և լուսնի խաւարումները 1914 թ.

ՎԱՃԱՌՒՈՒՄ Է

1914 թ.

„ՇԻՐԱԿ“

ՊԱՏԻ ՕՐԱՑՈՅՑԸ

ԳՈՐԾԻՉՆԵՐԻ 300 ՊԱՏԿԵՐՈՎ

ՊԱՏԻ ՕՐԱՑՈՅՑԻ մէջ տպագրւած են բազմաթիւ նոր առակներ, առածներ, ժողովրդական և ազգային երգեր, բժշկական և առողջապահական գիտելիքներ, գիտական նորութիւններ, մտքեր, աֆօրիզմներ, պատմական դէպքեր, հետաքրքրական թւեր ու տեղեկութիւններ և այլն։

ԳԻՆՆ Է 50 ԿՈՊ.

Դիմել՝ Александрополь, Карапету Апинянъ

Գումարով գնողներին զիջում է, զեղչ

6656

20 02

2013

<< Ազգային գրադարան

NL0032814

1-1410a